

## **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

### **ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ ԱՐՏԱՇԵՍԻ**

#### **ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹՅՈՒՆՈՒՄ**

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅՈՒՆ**

ԺԲ. 00.04. մասնագիտություն - «Դատական իրավունք՝  
դատարանական գործընթացում,  
քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,  
կրիմինալ իստիկա,  
դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-  
հետախուզական գործունեություն տեսություն» իրավաբանական  
գիտություններին թեկնածուի գիտական աստիճանի հայցման

**Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր,  
դոցենտ Վ. Վ. Հովհաննիսյան**

**ԵՐԵՎԱՆ 2016  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>3</b>
<b>ԳԼՈՒԽ1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ԵՒ ՏԵՂԸ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....</b>	<b>17</b>
§1. Արբիտրաժայի ն վճիռների վիճարկման հիմքերը, դրանց դասակարգումը .....	21
§2. Արբիտրաժայի ն վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը, որոնք ապացուցելու պարտականությունը կրող մեղիմում ներկայացրած կողմը .....	44
§3. Արբիտրաժայի ն վճիռի վիճարկման՝ առարկայական ենթակայությունը (արբիտրաժայ նություն) և հանրային կարգին հակասելու հիմքերը.....	75
<b>ԳԼՈՒԽ2. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ .....</b>	<b>81</b>
§1. Արբիտրաժայի ն վճիռների վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալները .....	81
§2. Արբիտրաժայի ն վճիռների վիճարկման վարույթի սուբյեկտային նախադրյալները .....	105
§3. Արբիտրաժայի ն վճիռների վիճարկման վարույթի ձևական նախադրյալները .....	118
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>127</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾ.....</b>	<b>136</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ .....</b>	<b>150</b>

## ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

**Չետազոտվող թեմայի արդիականությանը.** Տնտեսական հարաբերության ներքին և դրանց զարգացմանը համահունչ, աշխարհում վերելք ապրեցին վեճերի կարգավորման այլընտրանքային ինստիտուտները՝ մասնավորապես, առևտրային վեճեր լուծող ինստիտուցիոնալ, ինչպես նաև ad hoc արբիտրաժային դատարանները: Նշված արբիտրաժային դատարանները հանդիսանում են զարգացած քաղաքացիական հասարակության ինստիտուտ և կատարում են սոցիալապես նշանակալից դեր: Դրանք օգնում են բեռնաթափել դատական համակարգը, հանդիսանում են վեճերի լուծման այլընտրանքային ձև, նպաստում են վեճերի լուծման ավելի կատարյալ, հարմար, արագ, մառչելի, մասնագիտական բարձր մակարդակ ապահովող գործունե կառուցակարգերի զարգացմանը: Ներկայիս համաշխարհային միասնացման գործընթացների պայմաններում միջազգային կապերի և տնտեսական հարաբերության ներքին զարգացման արդյունքում ՀՀ և այլ պետության ներքին միջև առևտրի, արդյունաբերության, ներդրումային գործունեության բնագավառներում համագործակցության ծավալների մեծացումը, գործարար հարաբերության ներքին թվի աճն անխուսափելիորեն բերում է ՀՀ և այլ պետության ներքին ազգային իրավական համակարգերի սուբյեկտների միջև վեճերի և տարածայնության ներքին թվի աճի, դրանով իսկ՝ այդպիսի վեճերը լուծելու, տարբեր պետության ներքին քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքներն ու ազատության ներքին առավել արդյունավետ պաշտպանելու անհրաժեշտության: Այս ամենն իր հերթին հանգեցնում է ՀՀ և օտարերկրյա պետության ներքին իրավական համակարգերի մերձեցմանը և սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության բնագավառում իրավական համագործակցության ինստիտուտների զարգացմանը: Օտարերկրյա ներդրումների խրախուսման կարևորագույն նախապայմաններից է այդ ներդրումների պաշտպանվածության ապահովումը, ներդրողի և

պետության կամ պետության ռեզիդենտի միջև ծագող վեճերի դեպքում կողմերի հավասարության սկզբունքի հիման վրա, անկախ անաչառ մարմնի կողմից վեճը լուծելու օրենքով և միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների իրականացման կառուցակարգերի գոյությունը: Աշխարհի առաջատար երկրները, արագ ըմբռնելով արբիտրաժային կենտրոնի համարում ունենալու բոլոր դրական կողմերը, նպաստեցին իրենց երկրներում արբիտրաժային մշակույթի զարգացմանը: Այս հարցում անկյունաքարային դերերից մեկը պատկանում է ոլորտը կարգավորող ազգային օրենսդրության ընդունմանը, որը կարգավորում է ներպետական արբիտրաժների գործունեությունը՝ օրենսդրորեն սահմանելով արբիտրաժային գործընթացներին պետական աջակցության (հիմնականում ի դեմս դատական իշխանության), միջամտության և վերահսկողության շրջանակները: Այս համատեքստում կարևոր տեղ է հատկացվում նաև տվյալ պետության իրավական համակարգի մաս հանդիսացող տվյալ ոլորտին վերաբերող միջազգային պայմանագրերի առկայությունը, թե որքանով է տվյալ պետությունը միացել համապատասխան բազմակողմ պայմանագրերին և որքանով է տվյալ պետությունը խրախուսում առևտրային վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու նախաձեռնությունները: Արբիտրաժի միջոցով վեճը լուծելու եղանակն ընտրած քաղաքացիական շրջանառության մասնակիցները պետք է վստահ լինեն, որ Հայաստանի Հանրապետությունում առկա է արբիտրաժային դատարանների (այդ թվում օտարերկրյա) վճիռներով իրենց համար սահմանած իրավունքների ու օրինական շահերի առանց ավելորդ խոչընդոտների իրականացման գործուն օրենսդրական կառուցակարգ: Այսպիսով առաջանում է արբիտրաժային դատարանների ակտերի վիճարկման վարույթի հստակ և մանրամասն նորմատիվ կարգավորման անհրաժեշտությունը:

Կարելի է արձանագրել, որ արբիտրաժային ակտերի վիճարկման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության կողմից ոչ բավարար չափով ուսումնասիրված ինստիտուտներից մեկն է: Ինչ վերաբերում է դրա օրենսդրական կարգավորմանը, ապա հարկ է նշել, որ Միավորված Ազգերի

Կազմակերպության Միջազգային Առևտրային Իրավունքի  
Յանձնաժողովի կողմից 1985 թվականին մշակված «Միջազգային  
առևտրային արբիտրաժի մասին» մոդելային օրենքի՝ 2006 թվականին  
Յայաստանի Յանրապետությունում կատարված ռեցեսիայից և ՅՅ  
տարբեր օրենքներում արբիտրաժային վճիռների վիճարկման  
վարույթի կցկտուր ու մակերեսային կարգավորումից բացի առկա  
են ոլորտի համար խիստ կարևոր միջազգային միջարք պայմանագրեր,  
ինչը, սակայն, չի լրացնում տվյալ ոլորտում ներպետական  
օրենսդրական կարգավորման առկա բացը: Օրինակի համար նշենք, որ  
ՅՅ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն այս ինստիտուտի  
կարգավորմանն ընդհանրապես չի անդրադարձնում, բացառությամբ  
մեկ հոդվածի:

Արդյունքում, ՅՅ դատական պրակտիկան՝ պայմանավորված այս  
ոլորտում պատշաճ օրենսդրական կարգավորման ոչ բավարար  
մակարդակով, ինչպես նաև հայրենի իրավաբանական գրականության  
մեջ այս ինստիտուտին նվիրված տեսական հետազոտությունների  
խիստ սակավությամբ, աչքի է ընկնում բազմաթիվ  
հակասություններով և իրարամերժ դատական ակտերով: Բազմաթիվ  
են դեպքերը, երբ ՅՅ դատարանները վիճարկման վարույթը  
կարգավորող նորմերը կիրառել և մեկնաբանել են սխալ, մեկտեղել  
են չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման վարույթները:  
Ավելին, դատական պրակտիկայում վիճարկման վարույթն  
իրականացվում է ոչ այն է ընդհանուր, ոչ այն է հատուկ հայցային  
վարույթով: Տեղի է ունենում չկարգավորված ոլորտի վարույթ,  
տարբեր վարույթներին բնորոշ կանոնների կամայական  
համակցմամբ և կիրառմամբ:

Իրավիճակն ավելի է բարդանում վիճարկման վարույթում  
միջազգային տարրի առկայությամբ: Նման իրավիճակը չի կարող  
գոհացուցիչ լինել մի պետության համար, որի առաջնային  
նպատակներից է տնտեսական և իրավական համակարգերի  
զարգացումը, օտարերկրյա ներդրումների խրախուսումը,  
արտահանման ծավալների մեծացումը: Իսկ այս նպատակներին  
հասնելու համար առաջնային քայլերից մեկն օտարերկրյա  
ներդրողների և ընդհանրապես ՅՅ քաղաքացիական շրջանառության

մասնակիցների վստահությունը մեծացնելն է առ այն, որ կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքներից ելնելով, իրենց առևտրային վեճը դրա լուծման այլընտրանքային մարմին հանձնելով, նրանք՝ ի դեմս պետության իրավասու դատարանների, ունեն արբիտրաժին աջակցող և վերահսկող մարմիններ: Ավելին, առևտրային արբիտրաժի միջազգայնացումը, այս ոլորտը կարգավորող նորմերի ունիֆիկացիան և միջազգայնորեն ընդունված սկզբունքների մշակումն ու ներդրումը վերաբնակյալ մարմինների կողմից, արդիական են դարձնում մի կողմից ոլորտի կարգավորումը նշված միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելը, մյուս կողմից այն տեղայնացնելը՝ ոչ թե պարզ իմպլեմենտացիայի ձևով, այլ գործող դատավարական իրավակարգավորումներին համահունչ: Սահնարավորությունն կտա ընդհանրապես հանրապետությունում զարգացնելու արբիտրաժային ոլորտը, ներառյալ դրա միջազգային տարրը: Այս խնդրի լուծումն առանց արբիտրաժային ակտերի վիճարկման ինստիտուտի հանգամանակից և հստակ օրենսդրական կարգավորման հնարավոր չէ, ինչն էլ իր հերթին անհնար է առանց տեսական հետազոտությունների, այս ինստիտուտի հետ կապված խնդիրների վերհանման, այս բնագավառում այլ պետությունների փորձի ուսումնասիրության:

Վերոնշյալ հանգամանքներով էլ պայմանավորված է «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները 33-ում» թեմայով ատենախոսության արդիականությունը, որի ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

**Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը:**  
Անդրադառնալով թեմայի մշակվածության աստիճանին, հարկ ենք համարում նշել, որ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրների վերաբերյալ տեսական խորը ուսումնասիրություններն ու վերլուծությունները հայկական, իսկ մինչև վերջին ժամանակներս նաև ռուսական իրավաբանական գրականության մեջ բացակայում էին, և դա, առաջին հերթին, պայմանավորված էր օբյեկտիվ նախադրյալներով: Ծուրջ

յոթանասուներե տարի խորհրդային Միության նույն արտաքին տնտեսական հարաբերության ներքին ծագող վեճերի լուծումը համարվում էր մենաշնորհ: Ավելին, հասարակական – տնտեսական ֆորմացիան դեմ էր ձեռնարկատիրական գործունեությանը, չէր խրախուսում մասնավոր սեփականությանը, ինչն էլ պայմանավորում էր արբիտրաժային վճիռների ճանաչման, կատարման և վիճարկման ինստիտուտին բավարար ուշադրությանը և չհատկացնելը: Սակայն անկախացումից հետո հետխորհրդային պետության ներում իրավաբանական գրականության մեջ այս հարցի նկատմամբ ուշադրության էականորեն աճեց: Բավական է նշել, որ միայն վերջին տարիներին՝ մեծապես պայմանավորված թե՛ արբիտրաժային, և թե՛ դատական հարուստ արակտիկայի առկայությամբ, ռուսական իրավաբանական գրականությանը հարստացել է բազմաթիվ գիտական աշխատություններով, որոնք ամբողջությամբ կամ առանձին գլուխներով անդրադառնում են արբիտրաժային ակտերի վիճարկմանը և վիճարկման վարույթի ինստիտուտին: Դրանցից կարելի է առանձնացնել Ա. Լ. Մակովսկու, Ե. Ա. Սուխանովի, Օ. Յու. Սկվորցովի, Բ. Ռ. Կարաբելնիկովի, Լ. Ֆ. Լեսնիցկայայի, Վ. Ա. Մուսինի, Ա. Ի. Մինակովի, աշխատությունները: Ցավոք, նույնը չի կարելի ասել Հայաստանի մասին: Հայ իրավաբանական գրականության մեջ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրներին նվիրված խորը գիտահետազոտական աշխատությունները բացակայում են մինչ օրս:

**Հետազոտության նպատակը և խնդիրները.** Հետազոտության նպատակն է արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրությունը և վերլուծությունը, այս ինստիտուտի հետ կապված խնդրահարույց հարցերի վերհանումը, ՀՀ-ում այս ինստիտուտը կարգավորող օրենսդրության բազմակողմանի հետազոտությունը, օրենսդրության բացերի վերհանումը, դրանց վերացման, ինչպես նաև ընդհանուր օրենսդրության բարեփոխման վերաբերյալ առաջարկների ներկայացումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հասկացողությունը, դրա հիմնական հատկանիշները և տեղը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համակարգում որոշելով՝ ուրվագծել Հայաստանում այս ինստիտուտի առկա հիմնախնդիրները, դրանք հաղթահարելու հիմնական ուղղությունները և հեռանկարները,

ներկայացնել արբիտրաժային վճիռների վիճարկման իրավական բնույթն ու էությունը՝ ուսումնասիրելով և վերլուծելով այս ոլորտի հայտնի տեսաբան-գիտնականների տեսակետները,

ուսումնասիրել արբիտրաժային վճիռների վիճարկման հնարավորությունն նախատեսող ՀՀ միջազգային պայմանագրերը՝ վերհանելով դրանց թերությունները, առաջարկել լուծումներ այդ թերությունների վերացման համար,

դասակարգել արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, ուսումնասիրել ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև արբիտրաժային զարգացած օրենսդրություն, մշակույթ և պրակտիկա ունեցող միջարք պետություններում ներկայումս գործող արբիտրաժային վճիռների վիճարկման ընթացակարգերը, փորձը և առաջարկներ ներկայացնել ՀՀ-ում այն կատարելագործելու ուղղությամբ,

որոշել ՀՀ-ում արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի համար անհրաժեշտ նախապայմանները՝ փորձելով պարզել, թե ներկայումս ՀՀ-ում նման ակտերի վիճարկման համար ինչպիսի պայմանների առկայությունն է անհրաժեշտ նախատեսել ՀՀ ներպետական ճյուղային օրենսդրությամբ:

**Հետազոտության օբյեկտը.** Ատենախոսության հետազոտության օբյեկտը արբիտրաժային գործերով արբիտրաժային դատարանների կայացրած արբիտրաժային ակտերի վիճարկման վարույթում ծագող իրավահարաբերություններին ամբողջությունն է: Միևնույն ժամանակ ատենախոսության ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնում դատական մարմինների ակտերի վիճարկումից բխող իրավահարաբերությունները, քանի որ այս իրավահարաբերությունները՝ պայմանավորված իրենց



առանձնահատկություններով և ծավալով, հանդիսանում են առանձին  
ատենախոսական հետազոտություն թեմա:

**Հետազոտության առարկան.** հետազոտության առարկան է ՀՀ-ում  
արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը:

**Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությանը և մասնավոր  
/հատկ/ մեթոդներն ու եղանակները.** Ատենախոսությունում,  
պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով,  
օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտական մեթոդները  
/անալիզ, սինթեզ, անալոգիա և այլն/, այնպես էլ գիտահետազոտական  
այնպիսի հատուկ մեթոդներ, ինչպիսիք են իրավահամեմատական  
մեթոդը, որի կիրառմամբ վերլուծվել են Հայաստանի  
Հանրապետության և օտարերկրյա տարբեր պետությունների  
/Ռուսաստանի Դաշնության, Եվրոպական Միության, Շվեդիայի,  
Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի/ արբիտրաժային  
վճիռների վիճարկման վարույթի բնագավառում առկա  
իրավակարգավորումները, վեր են հանվել այս բնագավառում առկա  
հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությամբ առաջադրված  
ընդհանուր լուծումները, առանձնահատկությունները և այլն:  
Հատուկ մեթոդներից կիրառվել է նաև պատմաիրավական մեթոդը:

**Հետազոտության տեսական և նորմատիվաիրավական հենքը.**  
Հետազոտության ընթացքում օգտագործվել են հայ և ռուս այնպիսի  
տեսաբան-գիտնականների աշխատանքներ, ինչպիսիք են Ս. Գ.  
Մեդրյանը, Վ. Վ. Հովհաննիսյանը, Ռ. Գ. Պետրոսյանը, Պ.Դ.  
Թադևոսյանը, Ա. Ս. Կոմարովը, Վ. Վ. Յարկովը, Ն. Գ. Ելիսենը, Ա. Վ.  
Ասոսկովը, Վ. Ժուլյկովը, Յոն. Գ. Մոռոզովան, Ս. Ն. Լեբեդեվը, Բ.  
Սեզլինը, Մ. Ա. Պոպովը, Վ. Ֆ. Յակովլեվան, Մ. Կ. Յուկովան և այլ  
հեղինակներ:

Բացի այդ հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև  
արտասահմանյան այնպիսի գիտնականների աշխատանքներ, ինչպիսիք  
են Ալբերտ Յան վան դեն Բերգը, Գ. Բ. Բորնը, Մ. Հոուարդը, Փիթեր  
Սանդերսը, Ստավրոս Բրեկուլակիսը, Մ. Հանթերը, Ֆուլչարը,  
Գոլդմանը և այլ հեղինակներ:

Հետազոտության նորմատիվային հենքը կազմում են ինչպես  
արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին վերաբերող ՀՀ

օրենսդրության դրույթները, ՀՀ միջազգային պայմանագրերը, այնպես էլ այլ պետությունների՝ այս ոլորտին վերաբերող օրենսդրությունը /քաղաքացիական դատավարության օրենսգրքեր, միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ օրենքներ/, եվրոպական երկրներում այս ոլորտը կարգավորող կոնվենցիաները և ԵՄ կանոնակարգերը:

Հետազոտության էմպիրիկ հենքը հանդիսանում է այս ոլորտի վերաբերյալ ՀՀ դատարանների դատական պրակտիկան:

***Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները:*** Խոսելով ատենախոսության գիտական նորույթի մասին՝ նախևառաջ պետք է նշել, որ հայ իրավաբանական գրականության մեջ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ չկան, իսկ առկա աշխատանքներն էլ կրում են առավելապես նկարագրական-պատմողական բնույթ և չեն անդրադառնում այս ինստիտուտի կիրառման արդյունքում առաջ եկող խորքային խնդիրներին և հիմնահարցերին: Սույն աշխատության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս խորը և համակողմանի ուսումնասիրության և վերլուծության է ենթարկվել արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը, որի արդյունքում հետազոտվել և վերլուծվել են այս ինստիտուտի հետ կապված այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրավական նախադրյալները, արբիտրաժային ակտերի դասակարգումը, դրանց իրավական գործողության սահմանների հիմնախնդիրները, վեր են հանվել արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը կարգավորող ՀՀ օրենսդրության բացերը և թերացումները, ներկայացվել են ինչպես ՀՀ օրենսդրության, այնպես էլ դատական պրակտիկայի կատարելագործման առաջարկություններ: Ուսումնասիրվել են ՀՀ-ում արբիտրաժային օրենսդրության ընդունման համար հիմք հանդիսացած Մոդելային օրենքը, դրա մշակման վերաբերյալ աշխատանքային խմբի արխիվային փաստաթղթերը, Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու

Յորքի Կոնվենցիան և դրա առավել հեղինակավոր մեկնաբանությունները (փաստաթղթերն ու սուլմնասիրվել են դրանց անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն բնօրինակներով), ըստ որոնց հիմնավորվել է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում և օրենսդրությունում արբիտրաժի բնագավառում օգտագործվող եզրույթների ճշգրտման և միասնականության ապահովման անհրաժեշտությունը: Հետագոտության շրջանակներում հնարավորինս համակողմանի ու սուլմնասիրվել են արբիտրաժային դատարանների ակտերի վիճարկման՝ ինչպես Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի Կոնվենցիայով, ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային պրակտիկայում առավել հաճախ հանդիպող հիմքերը, բացահայտվել է դրանց բովանդակությունը, և առաջարկվել է դրանց դասակարգման սկզբունքը, հիմնավորվել է դատարանի կողմից դրանց կիրառման պարտականության դեպքերը և կարգը, որը պետք է նախատեսվի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով:

**Կատարված հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է առջևսպանությունների կայացվող հետևյալ դրույթներում՝**

1. Հեղինակը, վերլուծելով առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման իրավական կարողակարգերի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, արբիտրաժային ակտերի տեսակները և դրանց վիճարկման իրավական ռեժիմները, առաջարկել է տարանջատել միազգային հանրային և առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու իրավական ռեժիմները, ներառյալ վիճարկման վարույթի շրջանակներում ճանաչման և կատարման դեմ առարկելու կամ արբիտրաժի ակտերի (վճռի) վիճարկումը: Այս դեպքում առաջարկվել է առանձին իրավակարգավորում, որը հստակեցնում է արբիտրաժային ակտերը ճանաչող և կատարողական թերթ տրամադրող իրավասու սուբյեկտների շրջանակը, դրանց գործառույթները, ինչպես նաև նշված իրավահարաբերությունների բովանդակությունը կազմող սուբյեկտի պրոցեսուալ իրավունքներն ու պարտականությունները: Արդյունքում, հեղինակն առաջարկում է

փոփոխություն և լրացում կատարել ՀՀ ՔԴՕ «Օտարերկրյա Անձանց Մասնակցությամբ Գործերի Վարույթը» վերտառությունը կրող վեցերորդ բաժնում և 247<sup>6</sup> հոդվածի իրավակարգավորման շրջանակներից առանձնացնել արբիտրաժային ակտերի (վճիռների) ճանաչումը և հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրումը:

2. Կարևորելով արբիտրաժի կողմերի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատավարական միջոցների լիարժեք ապահովման հարցը, հեղինակն առաջարկում է ազգային իրավական մակարդակով հստակ իրավական կառուցակարգեր ամրագրել թե՛ արբիտրաժային վճիռների ճանաչում և հարկադիր կատարում պահանջելու, թե՛ արբիտրաժային վճիռների վիճարկման միջոցների իրացման առումով: Վերլուծելով վիճարկման վարույթը, հեղինակն առանձնացնում է այդ իրավունքի իրացման ձևերը: Յազվի առնելով վիճարկման վարույթում հնարավոր միջազգային տարրն, ըստ որի, ՀՀ-ում վիճարկման օբյեկտկարող են հանդիսանալ նաև օտարերկրյա արբիտրաժային ակտերը, հեղինակը հանգում է եզրակացության, համաձայն որի վիճարկման իրավունքի իրացումը պետք է ենթադրի ինչպես վճռի ճանաչման և հարկադիր կատարման դեմ առարկելը (օտարերկրյա արբիտրաժային ակտերի վիճարկման դեպքում), այնպես էլ այն չեղյալ ճանաչելու պահանջով իրավասու դատարան դիմելու հնարավորություն: Այսպիսով, հեղինակն առաջ է քաշում և հիմնավորում է այն տեսակետը, համաձայն որի ՀՀ-ում օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման դեմ իրավունքների պաշտպանության հիմնական դատավարական միջոց պետք է դիտարկել առարկելու միջոցով վերոնշյալ ակտի իրավաչափությունը վիճարկելը:

3. Յեղինակի կողմից վերլուծվել է տեղական (ՀՀ տարածքը որպես արբիտրաժի վայր ընտրած արբիտրաժային դատարանի կողմից իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված) և օտարերկրյա արբիտրաժային վճիռների իրավական գործողության խնդիրները: Ըստ այդմ, տարանջատվել է այդ ակտերի գործողության սկիզբը՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը: Առաջարկվում է ՀՀ ՔԴՕ 91-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 109-րդ

հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը օտարերկրյա արբիտրաժային վճիռների պարագայում կիրառելի համարել ՀՀ տարածքում դրանք ճանաչված լինելու պարագայում: Առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, համաձայն որի, ՀՀ տարածքում կայացված արբիտրաժային վճիռների օբյեկտային և սուբյեկտային շրջանակ ընդգրկված հարցերը քաղաքացիական դատավարության կարգով կրկին անգամ քննության և լուծման ենթակա չեն, բացառությամբ իրավասու դատարանի կողմից դրանց հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրումը մերժելու դեպքի: Ընդ որում, այս պարագայում, կողմը, իր սուբյեկտիվ նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության համար արբիտրաժային վճռի վիճարկման հնարավորությունը կարող է իրացնել անկախ այն հանգամանքից, թե արբիտրաժային վճռով պարտատերը կատարողական թերթ ստանալու պահանջով դիմե՞լ է դատարան, թե ոչ:

4. Ատենախոսության մեջ վերլուծվել են վիճարկման վարույթի օբյեկտային, սուբյեկտային և ձևական նախադրյալները: Ըստ այդմ, հեղինակի կողմից առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ վիճարկման օբյեկտ կարող են հանդիսանալ արբիտրաժային դատարանի բոլոր այն ակտերը, որոնք նյութական իրավունքներ և պարտականություններ են սահմանում արբիտրաժային գործին մասնակցող անձանց համար կամ որևէ ձևով ներգործում, սահմանափակում են վերջիններիս կողմից նյութական իրավունքների իրացման հնարավորությունը: Հետագոտելով արբիտրաժային վճռի իրավական ներգործության շրջանակը, հեղինակը հիմնավորել է, որ տեսության մեջ այն կարող է և պետք է վերաբերի միմիայն արբիտրաժի կողմերին: Սակայն, ուսումնասիրելով տվյալ խնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների արբիտրաժային և դատական պրակտիկան, հեղինակը չի բացառել, որ արբիտրաժային վճռով կարող են շոշափվել նաև այլոց (արբիտրաժի կողմ չհանդիսացող սուբյեկտների) իրավունքներն ու օրինական շահերը: Ըստ այդմ, հեղինակը վեր է հանել և առանձնացրել է վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալների հիմնական և

գլխավոր հատկանիշը, այն է՝ արբիտրաժի կողմերի կամ կողմ չհանդիսացող սուբյեկտի նյութական իրավունքների և պարտականությունների վրա արբիտրաժային դատարանների ակտի ազդեցությունը կամ անմիջական ներգործությունը: Այսպիսով, հեղինակը հանգել է հետևության, ըստ որի, արբիտրաժային վճիռների վիճարկման իրավունքով պետք է օժտված լինեն նաև այն անձինք, որոնց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վեճն ըստ էության լուծող արբիտրաժային ակտ կամ որոնց նյութական իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ներգործում է կայացված արբիտրաժային ակտը: Արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու միջոցով վիճարկման վարույթի օբյեկտկարող են հանդիսանալ մինչև իրավասու դատարանի կողմից դրանց հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրման մասին որոշման կայացումը: Ուստի, արբիտրաժային վարույթի մասնակից չհանդիսացող անձինք իրենց սուբյեկտիվ իրավունքները կարող են պաշտպանել դատարանի կողմից կայացված՝ արբիտրաժային վճիռի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրելու վերաբերյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու միջոցով: Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել արբիտրաժային վարույթի մասնակից չդարձած անձանց կողմից իրենց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված արբիտրաժային վճիռների հիման վրա դատարանի կողմից կատարողական թերթի տրամադրելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությունը՝ դրա համար սահմանելով բողոքարկման հստակ կարգ և ժամկետներ, միաժամանակ վերոնշյալ դեպքը համարել վերաքննիչ դատարանի կողմից նման որոշումը վերացնելու պարտադիր հիմք:

5. Արբիտրաժային վճիռի չեղյալ ճանաչման հիմքերի բազմակողմանի վերլուծության արդյունքում, հեղինակի կողմից առաջարկվել է դրանց առկայության պարագայում սահմանափակել և հստակ իրավաչափության պայմաններ սահմանել իրավասու դատարանի կողմից վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատական

հայ եցողության դրսևորման մասով: Այսպիսով, երբ դատարանը հանգի այն եզրակացության, որ առկա են արբիտրաժային վճիռը ոչ իրավաչափ և դրա իրավական գործողության հատկանիշներն առնչինչ դարձնող հանգամանքները, ապա այն չպետք է դրսևորի դատական հայ եցողություն, այլ ունենա այդպիսի ակտը չեղյալ ճանաչելու օրենսդրորեն ամրագրված պարտականություն: Ինչ վերաբերում է դատական հայ եցողության դրսևորմանը, ապա առաջարկվում է այն սահմանափակել միայն այդպիսի հանգամանքները գնահատելու և արբիտրաժային դատարանի ակտի իրավաչափության պայմանները որոշելու հարցով:

6. Ատենախոսության մեջ առաջարկվում է դասակարգել արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերն այնպես, որպիսի պայմաններում հստակ կերևա դատարանի կողմից ի պաշտոնե (ex officio) այդպիսի հիմքերի առկայությունը պարզելու պարտականությունն այն իրավական հանգամանքներից, որոնք ապացուցելու պարտականությունը կրում է արբիտրաժային վճիռը վիճարկող կողմը:

7. Յեղիևակի կողմից առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ արբիտրաժային վճռի վիճարկման արդյունքում այն չեղյալ ճանաչելը կամ հարկադիր կատարումը մերժելը հանգեցնում է «պարտատիրոջ» նյութական իրավունքի անիրացվելիությանը, քանզի արբիտրաժային վճռի հարկադիր կատարում պահանջելը վճռով հաստատված նյութական իրավունքի իրավական պաշտպանության կառուցակարգ է: Առաջարկվում է դատական ակտերի եռաստիճան դասակարգման համատեքստում՝ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանին վերապահել գործը լուծող (գործն ըստ էության չլուծող) վերջնական դատական ակտ կայացնելու իրավասություն:

8. Յեղիևակն ընդգծել է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային և դատական ձևերի տարբերությունը, ինչով էլ պայմանավորված, հիմնավորվել է, որ արբիտրաժային վճռի վիճարկման հիմքում ողջ ծավալով չեն կարող դրվել արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերի խախտումներն այնքանով, որքանով սուբյեկտիվ

իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի նկատմամբ  
 լիարժեքորեն կիրառելի չեն դատական պաշտպանության ձևի  
 օրինաչափությանը և արդար դատաքննության տարրերն իրենց  
 ամբողջությամբ կիրառելի չեն արբիտրաժային վարույթի  
 նկատմամբ: Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը  
 դիտարկելով որպես սուբյեկտիվ իրավունքի դատական  
 պաշտպանության ձև, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ  
 արդար դատաքննության տարրերը վերաբերելի են արբիտրաժային  
 վճիռների վիճարկման վարույթին, սակայն այն վերապահումներով,  
 որոնք պայմանավորված են արբիտրաժային քննության և  
 արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի իրավական (այդ  
 թվում կոնվենցիոն) առանձնահատկություններով:

***Յետազոտության գիտադործնական նշանակությունը:***

Ատենախոսության շրջանակներում կատարված  
 հետազոտությունների տեսական նշանակությունը նախևառաջ  
 պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է քաղաքացիական  
 դատավարությունում արբիտրաժային վճիռների վիճարկման  
 վարույթի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված  
 առաջին համալիր և ամբողջական հետազոտությունը հայկական  
 դատավարագիտության մեջ: Ատենախոսության հիմնադրույթները և  
 դրանում առկա եզրահանգումները կարող են օգտագործվել ինչպես  
 քաղաքացիական դատավարության գիտության, այնպես էլ  
 միջազգային մասնավոր իրավունքի գիտությունների զարգացման  
 համար: Ատենախոսությունը պարունակում է նաև ՀՀ-ում  
 արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը կարգավորող ՀՀ  
 քաղաքացիական դատավարության օրենսդրության  
 կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:  
 Յետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև  
 «քաղաքացիական դատավարություն», ինչպես նաև «միջազգային  
 մասնավոր իրավունք» առարկաների դասավանդման ընթացքում:

***Ուսումնասիրության արդյունքների ներդրումն ու***

***վործարկումը:*** Ատենախոսությունը պատրաստված է երևանի պետական  
 համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական  
 դատավարության ամբիոնում: Ատենախոսությունում արտացոլված



Եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 4 գիտական հոդվածներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են զեկույցների և առանձին դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իրենց արտացոլումն են ստացել նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատանքային խմբի կողմից մշակված «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում և ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2015թ. հունիսի 19-ին<sup>1</sup>:

**Ատենախոսության կառուցվածքը:** Հետազոտությամբ առաջադրված խնդիրների համարժեք լուծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել անհրաժեշտ խորությամբ և ամբողջականությամբ ներկայացնելու հետազոտության նյութը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից /որոնք ընդհանուր առմամբ ներառում են 6 պարագրաֆներ/, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

---

<sup>1</sup> Տե՛ս <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5292&lang=arm>

## ԳԼՈՒԽ 1

### ԱՐՔԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒ ՅԹԻ ՀԱՍԿԱՏՈՒ ԹՅՈՒՆԸ, ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ և ՏԵՂԸ ՍՈՒ ԲՅԵԿՏԻՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հասկացողությունը սահմանելու նպատակով, անհրաժեշտ է անդրադառնալ վիճարկումը կարգավորող, սահմանող օրենսդրությանը: Հարկ ենք համարում ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) օրենսդրությամբ վիճարկման վարույթը թերկարգավորված է և հատվածական: Ընդ որում վիճարկման վարույթը կարգավորող տարբեր նորմեր տեղ են գտել տարբեր օրենքներում<sup>2</sup>, շրջանցելով ՀՀ ՔԴՕ-ն: Հաշվի առնելով արբիտրաժի զարգացման գործում միջազգային մարմինների և պայմանագրերի ունեցած նշանակալից դերը, անհրաժեշտ է նաև նշել Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին 1958 թվականի Նյու Յորքի Կոնվենցիան<sup>3</sup> (այսուհետև՝ Նյու Յորքի Կոնվենցիա կամ Կոնվենցիա): «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Արբիտրաժային կամ հայրենական օրենք) 34, 36 և Կոնվենցիայի V և VI հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս գալ մի շարք եզրահանգումների: Նախ, արբիտրաժային վճռի վիճարկումը հանդիսանում է բացառիկ միջոց (չեղյալ ճանաչման իմաստով), որն ունի օրենքով խիստ սահմանված սուբյեկտիվ շրջանակներ: Երկրորդ, վիճարկման վարույթից չի կարելի առանձնացնել արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ կատարումը, ինչպես նաև դրանով պայմանավորված՝ ճանաչման և/կամ կատարման մերժման նպատակով կողմի ներկայացված առարկությունների միջոցով արբիտրաժային վճռի վիճարկումից: Հաշվի առնելով Արբիտրաժային օրենքի 6-րդ հոդվածը, կարող ենք եզրակացնել, որ վիճարկման վարույթը պետության կողմից արբիտրաժի նկատմամբ դատական

<sup>2</sup> Տե՛ս «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը (հոդվ. 34 և 36) և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը (հոդվ. 19):

<sup>3</sup> ՀՀ-ն միացել է սույն Կոնվենցիային 1997թ.

վերահսկողության իրականացման ձև է: Չաջորդիվ, իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ դատարանը պարզում է արբիտրաժային վարույթում թույլ տված հնարավոր պրոցեսուալ, ընթացակարգային խախտումների առկայության փաստը: Վիճարկման վարույթի կողմի դիմումով պայմանավորված՝ դատարանի կողմից պարզման ենթակա փաստերի շրջանակում կարող է ընդգրկված լինել նաև արբիտրաժային վարույթի համար հիմք հանդիսացած արբիտրաժային համաձայնության առկայությունը կամ վավերականությունը և արբիտրաժային դատարանի իրավասությունը: Բոլոր նշված փաստերը պարզելիս, դատարանը քննության առարկա չի դարձնում վճռի էությունը, վեճի լուծման համար կիրառված նյութական իրավունքի նորմերի ճիշտ կիրառությունը կամ մեկնաբանությունը արբիտրաժային դատարանի կողմից, ինչպես նաև արբիտրաժային դատարանի նյութաիրավական բնույթի եզրահանգումները: Չարկ է նշել, որ 1999 թվականից մինչև Արբիտրաժային օրենքի ընդունումը գործող «Միջնորդ դատարանների և միջնորդ դատավարության մասին» ՀՀ օրենքն արբիտրաժային վճիռների վիճարկում չէր նախատեսում, սակայն դրա 38 և 40-րդ հոդվածները նախատեսում էին նոր երևան եկած հանգամանքներով միջնորդ վճիռները վերանայելու, ինչպես նաև դրա հարկադիր կատարումը մերժելու կարգն ու հիմքերը: Այս մոտեցումն ուղղակիորեն աղճատում էր արբիտրաժի վերջնական բնույթը և չէր տեղավորվում ո՛չ Կոնվենցիայի և ո՛չ էլ Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) Միջազգային Առևտրային Իրավունքի Չանձնաժողովի (այսուհետ՝ UNCITRAL) կողմից 1985 թվականին մշակված «Միջազգային առևտրային արբիտրաժի մասին» մոդելային օրենքի (այսուհետ՝ Մոդելային օրենք) տրամաբանության մեջ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ արբիտրաժային վճիռների վերանայման ինստիտուտը, դրա դասական իմաստով ՀՀ օրենսդրության մեջ բացառված է<sup>4</sup>:

Ինչպես նշում է Ռ. Պետրոսյանը, քաղաքացիական դատավարության տեսակը (վարույթի տեսակը) նյութական

<sup>4</sup> Այս առումով անհրաժեշտ է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասում «բեկանման» եզրույթը փոխարինել «չեղյալ ճանաչման» եզրույթով:

իրավունքի կամ օրինական շահի բնույթով ու առանձնահատկություններով որոշված քաղաքացիական գործերի առանձին խմբերի հարուցման, քննության և լուծման դատավարական կարգն է <sup>5</sup> : Համաձայն Օսոկինայի կարծիքի՝ քաղաքացիական դատավարության տեսակի տակ պետք է հասկանալ առանձին կատեգորիայի իրավաբանական գործերի քննության հատուկ կարգ (ընթացակարգ): Նա նաև նշում է, որ իրավաբանական գործերի քննության կարգի դատավարական առանձնահատկությունները որոշող նյութա-իրավական բնույթն ի հայտ է գալիս երկու օբյեկտիվ հատկանիշերով. նյութական իրավաբանությունների սուբյեկտների իրավական կապերի կառուցվածքով, որը կարող է լինել հորիզոնական կամ ուղղահայաց և սուբյեկտիվ իրավունքի (օրինական շահի) մասին վեճի առկայության կամ բացակայության մեջ <sup>6</sup>: Հաշվի առնելով, որ ՀՀ ՔԴՕ-ի կարգավորումից դուրս է մնացել վիճարկման սույն վարույթը, դրա բնույթը հասկանալու համար, անհրաժեշտ է պարզել նաև դրանմանությունը քաղաքացիական դատավարության կարգով ՀՀ ՔԴՕ-ով սահմանված գործերի քննության ընդհանուր, հատուկ և հատուկ հայցային վարույթների հետ: Վիճարկման վարույթում անխուսափելիորեն առկա են հակադիր շահերով օժտված դատավարական կողմեր, որտեղ մի կողմը ձգտում է դատարանում հասնել արբիտրաժային վճռի ճանաչմանը և/կամ հարկադիր կատարմանը, իսկ մյուս կողմը նույն դատարանից խնդրում է մերժել արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ հարկադիր կատարումը կամ չեղյալ ճանաչման դիմում է ներկայացնում դատարան: Վճռի բարեհաջող վիճարկման արդյունքներով՝ արբիտրաժային վճիռը կորցնում է իրավական ուժի հատկանիշերը, դադարում է գոյություն ունենալուց: Հետևաբար, դրանով սահմանված նյութական իրավունքները և պարտականությունները ևս դադարում են: Իրավունքի մասին վեճի առկայության պարագայում, այն պետք է քննվի կա՛մ ընդհանուր հայցային, կա՛մ հատուկ հայցային վարույթի կանոններով: Մյուս կողմից, անհրաժեշտ է ընդգծել, որ

<sup>5</sup> Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.** Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Գ. Զ. Նարսիսյանի** խմբագրությամբ): -Երկրորդ հրատարակություն- Երևանի համալսարանի հրատ., 2007, էջ 41:

<sup>6</sup> Տե՛ս **Осокина Г.Л.** Гражданский процесс, Общая часть, Москва 2008, Норма, 748, էջ 78:

դատավարական պահանջով իրավասու դատարան դիմող կողմն ի վերջո ձգտում է պաշտպանել իր այն նյութական իրավունքը, որը սահմանված է (ծագել է) արբիտրաժային վճռով<sup>7</sup>: Այսպիսով առաջ է գալիս պրոցեսուալ պահանջով վեճ, որն ուղղակիորեն ազդում է նյութական իրավունքների վրա, քանզի դատարանը, մերժելով արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը, մերժում է դիմող կողմի նյութական իրավունքի հարկադիր իրացումը (իրավական պաշտպանությունը) և դիմողի համար նյութական իրավունք սահմանող արբիտրաժային վճիռն այլևս հարկադիր իրավական հետևանքներ չի առաջացնում: Ըստ Վ. Յովհաննիսյանի, արբիտրաժային վճիռների վիճարկումը կարելի է դիտել որպես արբիտրաժի նկատմամբ դատական վերահսկողության այնպիսի ձև, որը դրսևորվում է շահագրգիռ անձանց կողմից դատական պաշտպանության սահմանադրական իրավունքն իրականացնելու միջոցով իրենց համար իրավունքներ և պարտականություններ սահմանող ոչ իրավաչափակ տրջեղյալ ճանաչելու մեջ<sup>8</sup>: Այսպիսով, վիճարկման վարույթի նպատակն է արբիտրաժային վճռի հանդեպ դատական վերահսկողության իրականացման շրջանակներում վճռի չեղյալ ճանաչման կամ ճանաչման և/կամ կատարման մերժման համար օրենքով սահմանված հիմքերի առկայությունը կամ բացակայությունը պարզելը, որն իրականացվում է դատարան ներկայացված դիմումում և/կամ առարկություններում նշված փաստերը ապացուցող հանգամանքների հետազոտման միջոցով: Երկրորդ, վիճարկման վարույթի կողմերի շահերը հակադիր են, սակայն պնդել, որ վիճարկման դիմումը ներկայացված է ուղղակիորեն դատավարական հակառակորդի դեմ՝ չի կարելի, քանզի վիճարկման

<sup>7</sup> ՀՀ ՔՕ համաձայն քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ծագում են նաև «քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից» (10-րդ հոդված, 1-ին մաս, 3-րդ կետ): Տվյալ դեպքում, կարող ենք փաստել, որ արբիտրաժային ակտը նույնպես, արբիտրաժի կողմերի համար, հանդիսանում է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող կամավոր կատարման ենթակա ակտ, հակառակ դեպքում, պետական դատարանում անցնելով ճանաչման և/կամ հարկադիր կատարման գործընթաց, արբիտրաժային վճիռը դառնում է պարտադիր կատարման ենթակա ակտ: Այսպիսով, արբիտրաժային վճիռը ևս հանդիսանում է սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանն ուղղված ակտ:

<sup>8</sup> Տես՝ Վ.Վ. Յովհաննիսյան, «Առևտրային արբիտրաժը Հայաստանի Հանրապետությունում» ուսումնական ձեռնարկը, ԵՊՀ հրատ., 2011թ., Երևան, 360, էջ 265:

վարույթի քննության առարկան արբիտրաժային վճիռի օրինականությունն է: Այսպիսով, արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը չի կարելի նույնացնել ոչ հայցային, ոչ էլ հատուկ վարույթների հետ: Յետևաբար, կարելի է եզրակացնել, որ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության տարբերակված ձև:

## **§1. Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, դրանց դասակարգումը**

Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի և դրանց դասակարգման իրավական կարգավորման ընդհանուր մոտեցումները բնութագրելուց առաջ՝ անհրաժեշտ ենք համարում անդրադարձնալ վիճարկման վարույթի հետ կապված հետևյալ հարցին: Արբիտրաժային օրենքի 7-րդ գլուխը վերնագրված է «Վճռի վիճարկումը» և պարունակում է միայն մեկ՝ արբիտրաժային վճռի վիճարկման բացառիկ միջոցի՝ չեղյալ ճանաչմանը և դրա հիմքերին նվիրված 34-րդ հոդվածը: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «արբիտրաժային տրիբունալի վճռի վիճարկումը դատարանում կարող է իրականացվել միայն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան այն չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու ճանապարհով»: Միևնույն ժամանակ, նույն օրենքի 8-րդ «Վճռի ճանաչումը և կատարումը» գլուխը ներառում է «ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու հիմքերը» վերնագրով 36-րդ հոդվածը, որում սահմանված են արբիտրաժի պարտված կողմի իրավունքը՝ դատարանից «խնդրելու»<sup>9</sup> մերժել արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, ինչպես նաև նշված է այդ հիմքերի սպառիչ ցանկը<sup>10</sup>: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ

---

<sup>9</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը պարունակում է «այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է» արտահայտությունը: Հաշվի առնելով, որ այս դեպքում ևս գործ ունենք քաղաքացիական դատավարության ամանձին տեսակի վարույթի հետ, առկա է արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման կամ կատարման մերժման նպատակով դատարանին ներկայացվող առարկությունների կապակցությամբ ծագող դատավարական հարաբերությունները ևս ՀՀ ՔԴՕ-ի ամանձին «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը» գլխում կարգավորելու հրամայականը:

<sup>10</sup> Հարկ է նշել, որ 36-րդ հոդվածը մեկտեղել է ՀՀ կամ Կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում (ասել է թե օտարերկրյա) կայացված արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման կարգավորումը, ինչը ևս արդարացված համարել չի կարելի: Պատճառների մասին տես ստորիվ սույն և 2-րդ գլխի 1-ին պարագրաֆներում:

Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածներում սահմանված հիմքերը գրեթե նույնությամբ համընկնում են, (հիմքում ունենալով նյութ-Յորթի Կոնվենցիայի V հոդվածը) արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու մասին դիմում ներկայացնելու դեպքում ևս անխուսափելիորեն տեղի է ունենում այդ վճռի վիճարկում՝ հակադիր շահերով օժտված դատավարական կողմերով, որտեղ մի (պարտատեր) կողմը ձգտում է դատարանում հասնել արբիտրաժային վճռի ճանաչմանը և/կամ հարկադիր կատարմանը, իսկ մյուս (պարտապան) կողմը նույն դատարանից խնդրում է մերժել արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ հարկադիր կատարումը. ծագում է իրավունքի մասին վեճ: Դատավարագիտությունում ընդունված մոտեցման համաձայն, հատուկ վարույթի գործերով, և ընդհանրապես, եթե առկա է իրավունքի մասին վեճ, ապա այն պետք է քննվի կամ ընդհանուր հայցային, կամ հատուկ հայցային վարույթի կանոններով: Ընթերցողի մոտ կարող է առաջանալ հետևյալ հարցը. թե ի՞նչ իրավունքի մասին է առաջանում վեճն արբիտրաժային դատարանի վճռի վիճարկման գործերով: Պատասխանելով այդ հարցին, կարող ենք փաստել հետևյալը. ընդհանրապես, դատարանին ներկայացվող պահանջը կարող է լինել երկու տեսակի՝ նյութաիրավական, ինչը նշանակում է, որ հայցվորը (դիմողը) դատարանից խնդրում է պարտավորեցնել պատասխանողին կատարել որոշակի գործողություն, ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, ճանաչել իրավունքի առկայություն կամ դրա բացակայություն: Հաջորդ տեսակի պահանջն ունի դատավարական (պրոցեսուալ) բնույթ, այսինքն դատարան ներկայացվող պահանջը (որով խնդրարկվում է վերոհիշյալ գործողության կատարումը կամ դրանից ձեռնպահ մնալը) նյութաիրավական է: Տվյալ դեպքում, դատավարական պահանջով դիմող կողմն ի վերջո ձգտում է պաշտպանել իր այն նյութական իրավունքը, որը սահմանված է (ծագել է) արբիտրաժային վճռով: Այսինքն, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանն ուղղված ակտի հարկադիր կատարում պահանջելը (ինչն ինքնին հանդիսանում է պրոցեսուալ պահանջ) հանդիսանում է այդ ակտով նախատեսված նյութական իրավունքի իրավական



պաշտպանություն միջոց: Յետևաբար, տեղի է ունենում արբիտրաժային վճռով սահմանված նյութական իրավունքի հարկադրական իրացում և այդ ակտով նախատեսված նյութական իրավունքի հարկադիր կատարումը դառնում է վճռով հաստատված նյութական իրավունքի իրավական պաշտպանության միջոց: Եթե մյուս կողմն առարկում է դրա դեմ Արբիտրաժային օրենքով նախատեսված հիմքերով, դա նշանակում է, որ դատարանում այդպիսի առարկությունն ներկայացնող կողմը ձգտում է ապացուցել նյութական իրավունք սահմանող արբիտրաժային ակտի ոչ իրավաչափ լինելը: Սա նշանակում է, որ եթե արբիտրաժային ակտի դեմ առարկող կողմը կարողանա ապացուցել դրա ոչ իրավաչափ լինելը, ապա դրանով իսկ կգրկի մյուս կողմին՝ արբիտրաժային ակտով սահմանված նյութական իրավունքի իրավական պաշտպանությունից, քանզի ոչ իրավաչափ ակտով նախատեսված իրավունքն իրավական պաշտպանության ենթակա չէ: Տվյալ դեպքում, իրավունքի իրավական պաշտպանության միջոց է հանդիսանում արբիտրաժային ակտի հարկադիր կատարումը, որում, նկարագրված իրավիճակում, պետական դատարանը կմերժի: Նույն տրամաբանությունն է գործում նաև արբիտրաժային վճիռների ճանաչման պարագայում: Այսպիսով, առաջ է գալիս պրոցեսուալ պահանջով վեճ, որն ուղղակիորեն ազդում է նյութական իրավունքների վրա, քանզի դատարանը, մերժելով արբիտրաժային վճիռի հարկադիր կատարումը, մերժում է դիմող կողմի նյութական իրավունքի հարկադիր իրացումը (իրավական պաշտպանությունը) և այն վճիռը, որը դիմողի համար նյութական իրավունք էր սահմանում, դառնում է պարտադիր, հարկադիր իրավական հետևանքներ չառաջացնող փաստաթուղթ: Այսպիսով, ստացվում է, որ պրոցեսուալ պահանջն արբիտրաժային վճիռի ճանաչման և հարկադիր կատարման դեպքում ինքնաբերաբար հանգեցնում է նյութաիրավական պահանջի իրացմանը, իսկ ճանաչման և հարկադիր կատարման մերժման դեպքում մերժվում է նաև արբիտրաժային վճռով սահմանված նյութական իրավունքի իրացումը:

Արբիտրաժային վճիռ առկայության պարագայում, արբիտրաժի կողմը, որի օգտին կայացվել է արբիտրաժային վճիռը ձեռք է

բերում այդ վճռի հարկադիր կատարում պահանջելու պրոցեսուալ իրավունք: Այդ պարագայում, «պարտապան» առարկելով վճռի հարկադիր կատարման պահանջի դեմ, վիճարկում է այդ իրավունքը, որի հետևանքները նեգատիվ առումով դառնում են նյութաիրավական: Յետևաբար, քննարկվող դեպքում, երբ ծագում է պրոցեսուալ իրավունքի վերաբերյալ վեճ, այն պետք է քննվի արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի համար սահմանված հատուկ կանոններով:

Ընդհանուր կանոնի համաձայն, ընդհանուր իրավասության դատարանը կաշկանդված է կողմերի պահանջներով: Այն դեպքում, երբ մի կողմը դատարան է ներկայացնում արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման պահանջ, իսկ մյուս կողմն առարկում է այդ պահանջի դեմ (ընդ որում, կարևոր է ընդգծել, որ այդ առարկություններն ունեն պրոցեսուալ բնույթ) դատարանը պարտավոր է կամ ճանաչել արբիտրաժային վճիռն ու կատարողական թերթ տրամադրել, կամ մերժել այդ դիմումը՝ մյուս կողմի առարկությունների հիման վրա: Բոլոր դեպքերում, արբիտրաժային վճռի ճանաչման, կատարման վարույթները ևս կարող են ընդունել վիճարկման վարույթի ձև: Սա պայմանավորված է այն իրողությամբ, որ արբիտրաժում պարտված կողմը Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի համաձայն իրավունքի ունի առարկելու ճանաչման և/կամ կատարման ներկայացված արբիտրաժային վճռի ճանաչման և/կամ կատարման դեմ (որպիսի դեպքում գործում է իրավունքի պաշտպանության միջոցի տնօրինման կառուցակարգը) և դատարանը պարտավոր է քննել նշված դիմումը և դրա դեմ առարկությունը՝ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի համար սահմանված հատուկ կանոններով: Այս նպատակով անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել ՀՀ ՔԴՕ 103-րդ հոդվածում, իսկ ապագայի համար այն ներառել ՀՀ ՔԴՕ նոր նախագծում: Կատարողական թերթի տրամադրումը մերժելու պարագայում վեճը հանգուցալուծվում է: Սակայն, հաշվի առնելով վիճարկման վարույթի թերի կարգավորումը, պրակտիկայում կարող են առաջանալ հետևյալ խնդիրները. դատարանը, մերժելով արբիտրաժային վճռի կատարողական թերթի տրամադրումը, չի կարող իր

Նախաձեռնությունը ամբ չեղյալ ճանաչել այդ վճիռը: Մյուս կողմից, եթե վճռի կատարման դեմ առարկող կողմը նույն դատարանին և նույն վարույթի շրջանակներում չեղյալ ճանաչման դիմում ներկայացնի առարկության (այս պրակտիկան առկա է) կամ հակընդդեմ հայցի ձևով, դա կհակասի ներկայիս դատավարական կարգավորումներին՝ հետևյալ պատճառաբանությամբ: Թեև արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումը և ճանաչման ու հարկադիր կատարման մերժման նպատակով դատարանին առարկություններ ներկայացնելը հանդիսանում են վիճարկման վարույթի տարբեր ձևեր, դրանք չեն նույնանում: Արբիտրաժային օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սույն օրենքի գործողությունը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ, 9-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների, տարածվում է միայն այն արբիտրաժի վրա, որի վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է»: Այսինքն, նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված վճռի վիճարկումը դրա չեղյալ ճանաչման դիմումով դատարան դիմելու միջոցով չի կարող իրացվել միջազգային կամ օտարերկրյա արբիտրաժների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչման և հարկադիր կատարման վարույթում, քանզի հայրենական արբիտրաժային օրենքը որդեգրել է միջազգայնորեն ընդունված այն սկզբունքը, որ արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժի վայրի (պետության) դատարանում: Նույնիսկ ներպետական արբիտրաժի պարագայում, չեղյալ ճանաչման դիմումը պետք է քննվի առանձին կարգով, քանզի չեղյալ ճանաչված դիմումի ճանաչման կամ կատարման հարց այլևս չի կարող քննարկվել: Պրակտիկայում, տողերիս հեղինակն օրինակ հարցը լուծել է հետևյալ կերպ. երբ արբիտրաժում հաղթած կողմը՝ «պարտատերը» դիմում է իրավասու դատարան՝ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար, մյուս կողմը դիմում է նույն դատարանին վճռի չեղյալ ճանաչման մասին առանձին դիմումով: Այդ դիմումը վարույթ ընդունվելուց հետո, կողմնարդեն արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վարույթում միջնորդում է այդ վարույթը կասեցնել, մինչև չեղյալ ճանաչման դիմումով հարուցված քաղաքացիական գործով որոշման կայացումը: Դատարանը բավարարել է այդ

միջնորդությունը, ինչը, վերոշարադրյալ հիմնավորումներից ելնելով, տրամաբանական է<sup>11</sup>: Եթե վիճարկման վարույթի երկու դիմումներն էլ մակագրվեն իրավասու դատարանի նույն կազմին, ապա ներկայիս իրավակարգավորումներից ելնելով, կարելի է բարձրացնել այդ գործերի միացման հարցը: Այսպիսով, արբիտրաժային վճռի վիճարկման դրական ելքի դեպքում, արբիտրաժային վճիռն այլևս իրավական հետևանք չի առաջացնում: Չաջորդ խնդիրը վերաբերում է հետևյալին. եթե դատարանն առանց քննության թողնի ճանաչման և հարկադիր կատարման դիմումը և անցնի կատարողական թերթ տրամադրելու մերժման առնչությամբ բերված առարկությունների քննության վարույթ (այն առավել մոտ է հատուկ հայցային վարույթին, սակայն ՅՅ ՔԴՕ ներկայիս կարգավորումներից դուրս է), որում էլ կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին կողմի դիմումը չի բավարարվում, ապա սկզբնական դիմումի քննության հարցը կարող է մնալ առկա՞ված: Սույն խնդիրը լուծելու համար, ՅՅ ՔԴՕ-ում անհրաժեշտ է հատուկ նորմ սահմանել, համաձայն որի, արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման կամ ճանաչման և/կամ հարկադիր կատարման մերժման դիմումը մերժելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, եռօրյա ժամկետում, ճանաչման և հարկադիր կատարման դիմումը քննող դատարանը կողմի դիմումով անհապաղ վերսկսում և ավարտում է գործի (դիմումի) քննությունը և տրամադրում է արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ:

Այսպիսով, արբիտրաժային վճիռը կարող է վիճարկվել թե՛ դրա չեղյալ ճանաչման և թե՛ դրա ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու մասին դատարանին դիմելով (ճանաչման կամ հարկադիր կատարման դեմ առարկություններ ներկայացնելով): Օրենսդիրը՝ կատարելով Մոդելային օրենքի պարզ ռեցեպցիա, ՅՅ ՔԴՕ-ում չի նախատեսել արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը սահմանող առանձին գլուխ, ինչը կարելի է օրենսդրական թերի կարգավորում համարել: Անտեսելով հիշյալ թերությունը, այնուամենայնիվ, կարող ենք փաստել, որ արբիտրաժային վճռի

<sup>11</sup> Տե՛ս ԵԿԴ-1263/17/14 գործը:

վիճարկումն ընդգրկում է թե՛ չեղյալ ճանաչման և թե՛ ճանաչման կամ հարկադիր կատարման նպատակով ընդհանուր իրավասության դատարանին առարկություն ներկայացումը:

Ինչպես նշեցինք վերևում, արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը սահմանափակ են ու սպառիչ և սահմանված են Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածներում: Վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը համահունչ է Արբիտրաժային օրենքի 5-րդ հոդվածով սահմանված արգելքի հետ, ըստ որի արգելվում է որևէ դատական միջամտություն Արբիտրաժային օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ Արբիտրաժային օրենքով նախատեսված դեպքերի: Այս՝ կարելի է ասել սկզբունքային դրույթը, նույնպես ընդգծում է արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը: Յետևաբար, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ արբիտրաժային վճիռի վիճարկման հիմքում ողջ ծավալով չեն կարող դրվել արդար դատաբնականության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերի խախտումներն այնքանով, որքանով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի նկատմամբ լիարժեքորեն կիրառելի չեն դատական պաշտպանության ձևի օրինաչափությունները: Արդար դատաբնականության իրավունքի օրգանական և գործառնությանին (\$ուկցիոնալ) տարրերի բովանդակությունը բացահայտված է թե՛ ՀՀ սահմանադրության և սահմանադրական նորմերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի մեկնաբանություններով, թե՛ ՄԻԵԿ կիրառման կապակցությամբ ՄԻԵԴ կողմից ձևավորված նախադեպային իրավունքով: Սակայն, դրանք արբիտրաժային վարույթի նկատմամբ ամբողջականորեն կիրառելի չեն, իսկ արբիտրաժային վճիռի վիճարկման վարույթին վերաբերելի են այն իմաստով, որ արբիտրաժային վճիռի վիճարկումը ևս պետք է դիտարկել դատական կարգով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ձև, սակայն այն վերապահումներով, որոնք պայմանավորված են արբիտրաժային քննության և արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի իրավական (այդ թվում Կոնվենցիոն) առանձնահատկություններով: Արբիտրաժային վճիռի վիճարկման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, պետք է ենթադրի դատական

կարգով իրավունքի պաշտպանության լիարժեք երաշխիքների առկայություն, այդ թվում, արդար դատաքննության իրավունքի այն տարրերի իրացման ապահովում, որոնք կիրառելի են տարբերակված քաղաքացիադատավարական այս ձևի նկատմամբ: Ուստի, օրենսդրորեն պետք է ապահովել նաև իրավունքի խախտմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, քանզի դատական ակտի բողոքարկումը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնական իրավական կառուցակարգը:

Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածում բերված վիճարկման հիմքերը հետևյալն են.

ա) սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը, իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Յայաստանի Յանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է, կամ

բ) տվյալ կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, կամ

գ) վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնությամբ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր, կամ

դ) արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությունը չի հակասում սույն օրենքի պարտադիր

դրույթներին, կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել սույն օրենքին, կամ

ե) համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ Լուծման արբիտրաժի կողմից, կամ

զ) վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին:

Վիճարկման հիմքերի նույնիսկ մակերեսային վերլուծությանից կարելի է եզրակացնել, որ դրանք չեն վերաբերում արբիտրաժային դատարանի կողմից վեճի հանդեպ կիրառելի նյութական իրավունքի նորմերի խախտմանը կամ սխալ կիրառմանը: Վիճարկման հիմքերն ուղղված են ապահովելու կողմերի վավեր արբիտրաժային համաձայնության առկայության և արբիտրաժում կողմերի նկատմամբ կիրառված հավասար մոտեցման և յուրաքանչյուր կողմին իր գործի ներկայացման համար բոլոր հնարավորությունների տրամադրման պայմաններում՝ արբիտրաժային դատարանի իրավասությանը ենթակա վեճի՝ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից արդարացի Լուծումը:

Հարկ է ընդգծել, որ թե՛ ՀՀ տարածքում կայացված՝ այսպես կոչված տեղական և թե՛ օտարերկրյա արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը համընկնում են: Սա պայմանավորված է իվերո հիշատակված այն հանգամանքով, որ հայրենական արբիտրաժային օրենքը, սահմանելով արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, դրանք խարսխել է նյութ Յորքի Կոնվենցիայի V հոդվածի հիմքերի վրա: Այսպիսով, վիճարկման վարույթի կողմի՝ վերոթվարկյալ հիմքերից դուրս վկայակոչած հիմքերին դատարանն ընդհանրապես չպետք է և նույնիսկ չի կարող անդրադառնալ: Թե՛ տեղական և թե՛ օտարերկրյա արբիտրաժային վճիռների վերջնական և պարտադիր լինելը սերտորեն կապված է դրանց վիճարկման օրենքով սահմանված սպառիչ հիմքերի հետ, իսկ այդ [վերջնականության ու պարտադիրության] սկզբունքների իրականացումը Հայաստանում ապահովվում է ՀՀ օրենսդրության մի շարք հիմնարար նորմերով<sup>12</sup>: Ընդ որում, արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, ելնելով դրանք վկայակոչելու, դրանց

<sup>12</sup> ՀՀ ՔԴՕ 109-րդ հոդվածի 3-րդ, 247<sup>6</sup>, 247<sup>7</sup> հոդվածներով

առկայ ու թյ ու նը ապացուցել ու և պարզել ու Արբիտրաժային օրենքով սահմանված սուբյեկտների կազմից, կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին խումբը ներառում է այն դեպքերը, երբ արբիտրաժային դատարանի վճիռը վիճարկվում է արբիտրաժային համաձայնության արտոնների և արբիտրաժային վարույթի ընթացակարգային խախտումների հիմքերով. ընդ որում, նշված խախտումների առկայության ապացուցման բեռն Արբիտրաժային օրենքով այս դեպքում դրված է այն կողմի վրա, ով իրավասու դատարանի առջև վիճարկել է արբիտրաժային վճիռը (դրա չեղյալ ճանաչման կամ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման խնդրանքով դիմելով): Առաջին խմբի մեջ մտնող հիմքերին իրավասու դատարանը կարող է անդրադառնալ և հղում կատարել դրանց վրա միմիայն արբիտրաժային վճռի վիճարկմամբ հանդես եկող կողմի դիմումով:

Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի դասակարգման երկրորդ խումբն իրենում ներառում է արբիտրաժային դատարանին վեճի (գործի) առարկայական ենթակայությամբ (վեճի այսպես կոչված արբիտրաժայնության) կամ ՀՀ իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին) հակասելու փաստով պայմանավորված պատճառները: Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների կառուցվածքից և դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակության վերլուծությանից կարելի է եզրակացնել, որ անկախ դիմողի կողմից վերոնշյալ ա) և/կամ բ) կետերի հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկումից, դատարանն ամեն դեպքում վիճարկման վարույթում պարտավոր է իր նախաձեռնությամբ անդրադառնալ նշված հիմքերին և պարզել, թե դրանք ինչ հարաբերակցության մեջ են գտնվում արբիտրաժային վճռի հետ: Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետը սխալ թարգմանության արդյունքում կրկնել է նույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետը: Այսպես, Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի տրամաբանության մեջ տեղավորվում է, որ վճռի վիճարկումը՝ դրա չեղյալ ճանաչման միջոցով կարող է (պետք



Է) տեղի ունենա, եթե վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին: Մինչդեռ, նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետը վերաբերում է ոչ թե նրան, որ արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը կարող է (պետք է) մերժվի, եթե այդպիսի վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին, այլ տվյալ դեպքում, ելնելով 36-րդ հոդվածի կարգավորման առարկայից, դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը կարող է հակասել Հայաստանի Հանրապետության հանրային կարգին: Ասվածի ճշմարտությունը ապացուցում է նաև Նյու Յորքի կոնվենցիայի V հոդվածի 2-րդ մասի բ) կետի անգլերեն բնագիրը «the recognition or enforcement of the award would be contrary to the public policy of that country», դրա հայերեն թարգմանությունը, ինչպես նաև Մոդելային օրենքի 36 (v) (b) (ii) ենթակետի անգլերեն բնօրինակը «the recognition or enforcement of the award would be contrary to the public policy of this State»: Հայրենական օրենքի նշված կետի ներկայիս խմբագրությունը, փաստորեն, հակասության մեջ է Նյու Յորքի կոնվենցիայի, մասնավորապես դրա III հոդվածի առաջին պարբերության հետ, որը սահմանում է, որ. «Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն արբիտրաժային որոշումները ճանաչում է որպես պարտադիր և դրանք կատարում է այն տարածքի դատավարական նորմերին համապատասխան, որում հայցվում է ճանաչումը և կատարումը՝ ներքոշարադրյալ հոդվածներով նախատեսված պայմաններով»: Այսինքն, օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վարույթի դեպքում, եթե առաջանա վեճ՝ կապված այդ օտարերկրյա վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման հետ, Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը, օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ հարկադիր կատարումը մերժելու հարցը պարզելիս, ելնելով մեր պետության «դատավարական նորմերից» [տվյալ դեպքում Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետից] ստիպված է լինելու պարզել ոչ թե օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման, այլ հենց վճռի

հակասությանը ՅՅ հանրային կարգին, ինչը վերոհիշյալ հիմնավորումների ներքո արբիտրաժային վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման հիմք չի կարող հանդիսանալ: Արբիտրաժային օրենքի նշված կետն անպայման շտկման կարիք ունի, որպիսի առաջարկով էլ տողերիս հեղինակը հանդես է եկել Յայաստանի Յանրապետության արդարադատության նախարարության կողմից կազմակերպված «Առևտրային արբիտրաժի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Յայաստանի Յանրապետության օրենքի» նախագծի հանրային քննարկումների ժամանակ:

Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերը համապատասխանաբար, սահմանում են, որ, եթե<sup>13</sup> դատարանը պարզի, որ ա) համաձայն Յայաստանի Յանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից, կամ բ) վճիռը հակասում է Յայաստանի Յանրապետության հանրային կարգին, ապա արբիտրաժային տրիբունալի այդպիսի վճիռը կարող է, ելնելով դիմող կողմի կոնկրետ պահանջից, կամ չեղյալ ճանաչվել կամ մերժվել դրա ճանաչումը կամ հարկադիր կատարումը: Վեճի առարկան արբիտրաժային դատարանի կողմից լուծման ենթակա չլինելը նշանակում է, որ արբիտրաժային դատարանի կողմից քննվող գործն ըստ օրենքի չի կարող ենթակա լինել արբիտրաժին և լուծվել արբիտրաժի միջոցով: Այսպես, Արբիտրաժային օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն «սույն օրենքի գործողությունը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությունների վրա՝ Յայաստանի Յանրապետության և այլ պետության կամ պետությունների միջև գործող պայմանագրերի պահպանման պայմանով»: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն, «սույն օրենքի գործողությունը չի բացառում Յայաստանի Յանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն

<sup>13</sup> Արբիտրաժային օրենքի նշված հոդվածներում նշված է «կամ դատարանը պարզի», սակայն ծավալուն հոդվածն ամբողջությամբ չվերաշարադրելու համար գործածել ենք «եթե» պայմանի շտկապը:

դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն սույն օրենքով»: Այս դրույթի վերլուծությանը ցույց է տալիս, որ արբիտրաժի լուծմանը հանձնվող վեճերի տեսակների հայեցողությանը տրված է ոչ թե վեճի կողմերին, այլ օրենսդրին, ինչը նշանակում է, որ տվյալ դրույթը հանդիսանում է իմպերատիվ բնույթ ունեցող դրույթ: Այսինքն, վարչական կամ այլ հանրային (ուղղահայաց) իրավահարաբերությաններից բխող վեճերն արբիտրաժի լուծմանը ենթակա չեն, նույնիսկ եթե վիճող կողմերը ցանկանում են տվյալ վեճն արբիտրաժի քննությանը հանձնել: Օրինակ, հարկատուի և հարկային մարմնի միջև հարկային իրավահարաբերությաններից ծագած (օրինակ հարկի առաջացման, վճարման, դրա չափի, ստուգման վարչական ակտի վիճարկման վերաբերյալ) վեճի քննությանը արբիտրաժին հանձնելու մասին կողմերի համաձայնությանը հակասում է ՀՀ օրենսդրությանը, մասնավորապես, Վարչական դատավարության մասին ՀՀ օրենսգրքին և այդիսկ պատճառով այն անվավեր է (առնչինչ): Եթե արբիտրաժային դատարանը, ցանկացած պատճառով անտեսի որոշակի վերոնշյալ կատեգորիայի վեճերն օրենքով իրեն վերապահված չլինելու հանգամանքը և դրանք իրեն հանձնվելիս վերադարձնելու ու չքննելու փոխարեն այնուամենայնիվ այդպիսի վեճը լուծի և դրա ելքի մասին վճիռ կայացնի, ապա արբիտրաժային դատարանի այդպիսի վճիռը ենթակա կլինի չեղյալ ճանաչման: Այս առնչությամբ կցանկանայինք հիշատակել ՀՀ վճռաբեկ դատարանի 2014 թվականի հունիսի 18-ի արբիտրաժային համաձայնությանը անվավեր ճանաչելու և անշարժ գույքի գրավի և անշարժ գույքի հաշորդող գրավի պայմանագրերը մասնակի անվավեր ճանաչելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/1910/02/13 (այսուհետ՝ ԵԿԴ/1910/02/13 գործ) քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արտահայտած հետևյալ դիրքորոշումները. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը <sup>14</sup>:

<sup>14</sup> Գտնում ենք, որ տվյալ դեպքում, ՀՀ վճռաբեկ դատարանը խիստ սահմանափակող

Նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վարչական կարգով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դատարան: ... Միևնույն ժամանակ օրենսդիրը, հաշվի առնելով վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի բարդությունը, պաշտպանության հայցվող արժեքի կարևորությունը, քաղաքացիական շրջանառության սուբյեկտների համար որոշակի վեճերի քննության և լուծման համար սահմանել է միայն իրավունքի պաշտպանության դատական ձևը՝ բացառելով այդպիսի վեճերի քննության և լուծման հնարավորությունը վարչական և հասարակական (արբիտրաժային) կարգով:

Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելով և դրան անվավերության հետևանքները կիրառելով:

---

մեկնաբանությունն է տվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածին, մասնավորապես «դատարան» հասկացությանը, հղում կատարելով ՀՀ սահմանադրության 91 և 92 հոդվածներին, միևնույն ժամանակ չհիշատակելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ հոդվածը, համաձայն որի «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջները չպահպանելու դեպքում դատարանը, տնտեսական դատարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դատարան) կարող է մերժել անձին նրան պատկանող իրավունքի պաշտպանության հարցում»: Այս դիրքորոշման պայմաններում, կավտանգ, որ արբիտրաժային դատարանների ենթակայությունից Հայաստանի Հանրապետությունում դուրս կմնան առևտրային բնույթ ունեցող բոլոր այն վեճերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ վերապահված են «դատարանի» լուծմանը: Օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված քաղաքացիական իրավունքների պաշտպանության, 19-րդ հոդվածով նախատեսված գործարքների անվավերության հետևանքների կիրառման, պայմանագիրը փոփոխելու և լուծելու և այլ դեպքերում: Նման նեղ մեկնաբանությունից խուսափելու համար, անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ ԹՕ-ի 13-րդ հոդվածի 1-ին մասում, սահմանելով, որ «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրությամբ սահմանված գործերի ենթակայությունը համապատասխան, իրականացնում է դատարանը կամ արբիտրաժային դատարանը (այսուհետ՝ դատարան): Անհրաժեշտ է նաև լրացնել «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4) կետը, շարադրելով, որ. ««առևտրային» հասկացությունը ներառում է քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացող առևտրային բնույթի բոլոր վեճերը: »:

Նույն օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գործարքն անվավեր է նույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առջինը գործարք): ... ԶԶ Սահմանադրության 91-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը արդարադատությանն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

ԶԶ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությանը գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:

Վերը նշված հոդվածների վերլուծությանից բխում է, որ գործող կարգավորման համաձայն՝ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության հենց ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից: ... Այսպես՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ԶԶ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի գործողությանը տարածվում է առևտրային արբիտրաժին առնչվող հարաբերությանների վրա՝ Հայաստանի Հանրապետության և այլ պետության կամ պետությանների միջև գործող պայմանագրերի պահպանման պայմանով:

«Առևտրային արբիտրաժի մասին» ԶԶ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի իմաստով «առևտրային» հասկացությունը ներառում է առևտրային բնույթի բոլոր հարաբերությունները՝ ինչպես պայմանագրային, այնպես էլ ոչ պայմանագրային: ... Նշված հոդվածների վերլուծությանից բխում է, որ առևտրային արբիտրաժի կողմից քննության ենթակա են միայն վերը նշված օրենքի իմաստով առևտրային բնույթի վեճերը: ... «Առևտրային արբիտրաժի մասին» ԶԶ օրենքով նման սահմանափակման օրինակ է նույն օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը, որի բովանդակությանից բխում է, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ԶԶ օրենքի գործողությանը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ

այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը: Այսինքն՝ նշված օրենքը չի բացառում այնպիսի իրավիճակ, երբ Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենք բացառի որոշակի վեճերի հանձնումը արբիտրաժի լուծմանը»:

Ինչ վերաբերում է արբիտրաժային վճռի՝ Հայաստանի Հանրապետության հանրային կարգին հակասելու հիմքերով վճռի վիճարկման դեպքերին, ապա դատարանը կարող է այդպիսիք արձանագրել, օրինակ այն ժամանակ, երբ արբիտրաժային դատարանն իր վճռով կողմերին պարտավորեցնում է կատարել չարամիտ համաձայնությամբ կամ ստրկացուցիչ պայմաններով կնքված գործարքը (հիմքերի մանրամասն վերլուծությունը՝ ստորիվ): Կարևոր է շեշտել, որ վիճարկման երկրորդ խմբի մեջ մտնող հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում արբիտրաժային վճիռը, կախված դիմումից, ենթակա է չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման՝ անկախ այն հանգամանքից, թե վճիռը վիճարկող կողմն իր վիճարկման դիմումում նշել է այդ հիմքերը, թե ոչ: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ կողմը վիճարկում է արբիտրաժային վճիռը՝ դասակարգման առաջին խմբի մեջ մտնող հիմքերով, իրավասու դատարանը պարտավոր է իր սեփական նախաձեռնությամբ պարզել, արդյո՞ք տվյալ գործը ենթակա է եղել արբիտրաժային դատարանում քննության և չի՞ հակասում արդյոք այն հայկական իրավունքի հիմնարար սկզբունքներին:

Խոսելով նյու Յորքի Կոնվենցիայի V, ինչպես նաև հայրենական օրենքի 34 և 36-րդ հոդվածներում առկա հիմքերի մասին, անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այդ նորմերով սահմանված՝ արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը պարզելու և դրանք կիրառելու դատարանի հայեցողական իրավունքի և պարտականության հարցին: Թե՛ Կոնվենցիան, թե՛ Մոդելային օրենքը և թե՛ հայրենական արբիտրաժային օրենքը սահմանելով արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերը, դատարանի համար սահմանում են հայեցողական իրավունք: Այսպես, Կոնվենցիայի V հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Արբիտրաժային որոշման ճանաչումը և կատարումը *կարող է մերժվել* այն Կողմի խնդրանքով,

որի դեմ է այն ուղղված...»: Հայրենական արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Արբիտրաժային տրիբունալի վճիռը *կարող է չեղյալ ճանաչվել* սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից միայն այն դեպքում, եթե...»: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, *կարող է մերժվել միայն...*»: Մեջբերված նորմերում «կարող է» բառի գործածումը կարևորվել է միջազգային պրակտիկայում և գիտական գրականությամբ<sup>15</sup>, որպես ազգային, ներպետական դատարաններին իրավասություն տվող հարց: Ըստ դասական մոտեցման, վերոհիշյալ դասակարգման երկու խմբերում առկա հիմքերը իրավասու դատարանին ընձեռում են արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու իրավունք, այլ ոչ թե պարտականություն: Կոնվենցիայի հինգ պաշտոնական լեզուներից չորսը՝ անգլերենը, ռուսերենը, չինարենը և իսպաներենը նույնպես օգտագործում են «կարող է» բառը: Մինչդեռ, ֆրանսերեն բնօրինակում գործածված է «seront refusées» - «ենթակա է մերժման» կամ «մերժվում է» իմպերատիվ արտահայտությունը: Ընդհանրապես, վիճարկման հիմքերի առկայության ապացուցման պարագայում, դատարանները բավարարում են վիճարկման դիմումները: Միջազգային առևտրային արբիտրաժի ոլորտում, աշխարհի տարբեր երկրների որոշ դատարաններ գտնում են, որ իրենք իրավասու են թույլատրել վճռի հարկադիր կատարումը, նույնիսկ եթե Կոնվենցիայով սահմանված ճանաչման և կատարման մերժման հիմքերն առկա են: Սովորաբար, դատարաններն այդ կերպ են վարվում, երբ մերժման հիմքերը պայմանավորված են արբիտրաժային վարույթի չնչին խախտումներով, այսպես կոչված de minimis դեպքերում կամ էլ այն դեպքերում, երբ վճիռը վիճարկող կողմը դեռևս արբիտրաժային վարույթում ժամանակին չի հոգացել

<sup>15</sup>St' u **Карабелников Б.Р.** Исполнение и оспаривание решений международных коммерческих арбитражей. Комментарий к Нью-Йоркской конвенции 1958 г. и главам 30 и 31 АПК РФ 2002 г.. 3-е изд., перераб. и доп. М.: Статут, 2008. 606 էջ , 119 էջ :

համապատասխան հիմքին հղում կատարելու մասին <sup>16</sup> : Տվյալ դատարանները հենվել են Կոնվենցիայի V հոդվածի անգլերեն բնօրինակում առկա «կարող է» բառի վրա: Գտնում ենք, որ տվյալ հարցում ՀՀ-ում ներկայումս պետք է որդեգրել դատարանների ոչ թե հայեցողական իրավունքի, այլ պարտականության սկզբունքը և «կարող է» բառը փոխարինել «պետք է» բառով: Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ դիմող կողմի կամ (երկրորդ խմբի հիմքերի պարզման ժամանակ) իր նախաձեռնությամբ դատարանը կգա այն եզրահանգման, որ առկա է (են) արբիտրաժային վճիռը վիճարկելու հիմք(եր)ը, ապա դատարանը պարտադիր կերպով վճիռը չեղյալ պետք է ճանաչի կամ մերժի դրա հարկադիր կատարումը: Այս առումով, անհրաժեշտ է փոփոխել համապատասխանաբար Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածները, ինչպես նաև ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ օտարերկրյա արբիտրաժային վճիռը ՀՀ-ում չի կարող վիճարկվել դրա չեղյալ ճանաչման միջոցով, քանզի արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում դրա կայացման վայրի պետության դատարանի կողմից: Տվյալ դեպքում, օտարերկրյա արբիտրաժային վճիռը ՀՀ-ում կարող է վիճարկվել Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի իրավակարգավորումների ուժով վճռի ճանաչման և կատարման դեմ առարկելու միջոցով: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից, միևնույն արբիտրաժային վճիռների համար ճանաչման տարբեր իրավական ռեժիմներ սահմանելը սխալ է: Այսպիսով, կարելի է փաստել, որ արբիտրաժային տերմինաբանության միատեսակության կատարելագործման առումով, օրենսդիրը կարող է կիրառել «միջազգային և առևտրային արբիտրաժային որոշումներ»

<sup>16</sup> Տե՛ս **Yearbook Commercial Arbitration XIX** (1994) (Hong Kong no. 6), էջեր 664 – 674, Յոնգ Կոնգի Գերագույն Բարձր դատարանի 1993թ. հունվարի 15-ի որոշումը (Pakito Investment Ltd. v. Klokner East Asia Ltd.); **Yearbook Commercial Arbitration XXI** (1996) (Hong Kong no. 9), էջեր 542-545, 1994թ. հունվարի 16-ի (Nanjing Cereals, Oils and Foodstuffs Import & Export Corporation v. Luckmate Commodities Trading Ltd) որոշումը;

**Yearbook Commercial Arbitration XXXIII** (2008) (British Virgin Islands no. 1), էջեր 408-432 Բրիտանական Վիրջինյան Կղզիների վերաքսնիչ դատարանի 2008թ. հունիսի 18-ի (IPOC International Growth Fund Limited v. LV Finance Group Limited) որոշումը;

**Yearbook Commercial Arbitration XXIV** (1999) (UK no. 52), էջեր 732-738, Միացյալ Թագավորության Բարձր դատարան, Թագուհու առևտրային դատարան, 1997թ. հունվարի 20-ի (China Agribusiness Development Corporation v. Balli Trading) որոշումը:



եզրույթը: Ինչ վերաբերում է արբիտրաժային վճիռների ճանաչմանը և հարկադիր կատարմանը, ապա հարկ է փաստել, որ հայրենական արբիտրաժային վճիռները ներկայիս իրավակարգավորումների պարագայում ենթակա են եռաստիճան դատական համակարգով անցնելուն, ինչն անխուսափելիորեն բերում է արբիտրաժի «առանց անհարկի ձգձգումների» և վեճի լուծման օպերատիվության լայնորեն ընդունված սկզբունքների խաթարմանը, ինչպես նաև վիճող կողմերի դատական ծախսերի ավելացմանը: Այս առումով շահեկանորեն տարբերվում է «միջազգային արբիտրաժի որոշումների» ճանաչումը, որի համար պահանջատերը դիմում է ուղղակիորեն ՀՀ վճռաբեկ դատարան: Այսպիսով, ամփոփելով սույն պարագրաֆը և Հայաստանում դատավարական օրենսդրության հետագա կատարելագործման նպատակից ելնելով կառաջարկեինք վերաշարադրել ՀՀ ՔԴՕ 247<sup>6</sup> 1-ին մասը հետևյալ կերպ. «Օտարերկրյա պետության ներքին դատարանների քաղաքացիական գործերով կայացրած վճիռները, որոշումները, ինչպես նաև օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների վճիռները և որոշումները (այսուհետ՝ ճանաչման ենթակա ակտեր), ենթակա են ճանաչման և կատարման Հայաստանի Հանրապետությանում՝ ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում և կարգով»: Սակայն, հաշվի առնելով արբիտրաժային դատարանների կայացման ցածր մակարդակը և արբիտրաժային մշակույթի թերզարգացվածությունը Հայաստանում, կարելի է առաջարկել ավելի ճկուն և երկուստեք «փոխզիջումային» տարբերակ, որը մի կողմից կնվազեցնի արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրականացման ժամանակ հնարավոր անհարկի ձգձգումները և անբարեխիղճ կողմի՝ իր իրավունքների չարաշահման հնարավորությունները, մյուս կողմից, ամեն դեպքում դեռևս կընձեռի վերադաս դատական ատյանի կողմից արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթների գործերով հսկողության հնարավորություն: Սա պարարտ հող կստեղծի տվյալ բնագավառում իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառության առումով, նախադեպային որոշումների կայացման համար և արբիտրաժային մշակույթի զարգացման որոշակի փուլում

կապահովի վիճարկման վարույթի առավել առաջադեմ կարգավորումների «անցավ» ներդրման համար: Այս առումով հատկանշական է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Խորհրդի 1995թ. փետրվարի 7-ի № R (95) 5 Հանձնարարական անդամ-պետությանը նկատմամբ քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ընթացակարգերն ու համակարգերը գործողության մեջ դնելու և կատարելագործելու վերաբերյալ: Սույն Հանձնարարականը, մասնավորապես. «*Նկատի ունենալով* բողոքների թվի ավելացմամբ և դրանցով վարույթների տևողությամբ պայմանավորված խնդիրները;... *հաշվի առնելով*, որ այդպիսի խնդիրները կարող են նսեմացնել Կոնվենցիայով<sup>17</sup> նախատեսված ցանկացած անձի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը; ... *գիտակցելով*, որ բողոքարկման անարդյունավետ և սխալ ընթացակարգերն ու կողմերի՝ իրենց բողոքարկման իրավունքը չարաչափելի չարդարացված ձգձգումների պատճառ են հանդիսանում և կարող են խաթարել արդարադատության համակարգի նկատմամբ վստահությանը...», այնուհետև հնարավոր է համարում ստորադաս դատարանի ցանկացած վճռի հանդեպ վերադաս դատարանի կողմից հսկողության սկզբունքից վերապահում, իհարկե՝ պայմանով, որ յուրաքանչյուր այդպիսի վերապահում պետք է հիմնված լինի օրենքի վրա և պետք է համապատասխանի արդարության ընդհանուր սկզբունքներին<sup>18</sup> : Նշված Հանձնարարականը, այնուհետև, սահմանելով բողոքարկման իրավունքից դուրս մնացող հարցերի շրջանակը, նախատեսում է, որ երկրորդ աստի դատարանների կողմից միայն պատշաճ հարցերի քննությանն ապահովելու նպատակով, հարկ է, որ պետությանը քննարկեն Հանձնարարականում թվարկված որոշ կամ բոլոր միջոցների ընդունման հնարավորությունը, որոնց շարքում թվարկված է մի շարք կատեգորիայի [օրինակ ոչ մեծ գումարի հետկապված հայցային վաղեմության] գործերով վերաքննիչ բողոք բերելու իրավունքի բացառումը<sup>19</sup> : Եվրոպական այս հեղինակավոր կառույցի նման մոտեցումները գալիս են ամրապնդելու այն մոտեցումը, որ

<sup>17</sup> Նկատի է ունեցվում Մարդու իրավունքների և ազատությանը նկատմամբ Եվրոպական Կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ):

<sup>18</sup> Հոդված 1, a և b կետեր:

<sup>19</sup> Հոդված 3, a կետ:

նպատակահարմար չէ բացարձակ անացնել Եվրոպայից կամ արևմուտքից մեզ հասնող յուրաքանչյուր «ուղերծ», ինչպես, դա, ցավոք, վերջին ժամանակներս «նորածև» մոտեցում է դարձել, երբ ցանկացած ոչ ստանդարտ, կամ մտորելու տեղիք տվող միտք վիժեցվում է ի սկզբանե, որպես կռվան նշելով Եվրոպական կառույցների կամ համաշխարհային բանկի փորձագետների կողմից այդ մոտեցումները չընդունելը [խիստ ընդհանրական արտահայտություններ անելով առանց իրավունքի աղբյուրներ նշելու] կամ ՄԻԵԿ-ին հակասելը: Իրականում, մեծամասամբ, դա նույն այդ Եվրոպական կամ արևմտյան սկզբունքներում և մոտեցումներում իմպերատիվը հայեցողականից չտարբերող ու ծուլությունամբ տոգորված մարդկանց անընդունելի մոտեցում է: Այսպիսի դիլեմանտական մոտեցումներին որպես ցցուն հակափաստարկ կարելի է նշել օրինակ նույն Եվրոպական միության դատական համակարգի կողմից այժմ լայնորեն ընդունված այն մոտեցումը, որ որոշակի նախապայմանների պահպանման դեպքում արբիտրաժի կողմերի՝ արբիտրաժային վճռի հետագա դատական վիճարկման իրավունքից հրաժարվելը չի հակասում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին<sup>20</sup>: Ավելին, չի կարելի չհամաձայնել Վ. Յովհաննիսյանի կարծիքի հետ, համաձայն որի դատական բոլոր ակտերի, որոնք հնարավոր է խախտեն անձի՝ արդար դատաբնականության իրավունքը, բողոքարկման հնարավորության նախատեսումը չի բխի արդար դատաբնականության իրավունքի էությունից: Մասնավորապես, հնարավոր է խախտվեն այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսիք արդարադատության արդյունավետությունն ու արդարադատության տնտեսումն են, ինչն անհարկի կծանրաբեռնի ՀՀ դատական համակարգը և կնվազեցնի դատական գործունեության արդյունավետությունը<sup>21</sup>: Հաշվի առնելով վերոշարադրյալը, ներկայումս նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության տարածքը որպես արբիտրաժի վայր (չշփոթել արբիտրաժային լսումներ իրականացնելու վայրի հետ) ընտրած կողմերին

<sup>20</sup> Այս մասին առավել մանրամասն՝ ստորև:

<sup>21</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ. Վ.** Վերաբնական կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարության ոլորտում, ԵՊՀ 2013թ., էջ 453:

օրենսդրորեն իրավունք ընձեռել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման միջոցով արբիտրաժային վճիռը վիճարկելու դեպքում ուղղակիորեն ՅՅ վերաքննիչ քաղաքացիական դատարան դիմել<sup>22</sup>, այդ դիմումներով վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք սահմանելով, իսկ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար նախատեսված ներկայիս խառնաշփոթ առաջացնող իրավակարգավորումները<sup>23</sup> պարզեցնել հետևյալ կերպ: Այսպես, Յայաստանի Յանրապետության տարածքում իրականացրած արբիտրաժի դեպքում (երբ ՅՅ-ն կողմերի համաձայնությամբ կհամարվի արբիտրաժի անցկացման վայր) արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու դիմումով արբիտրաժում հաղթած կողմը կարող է դիմել ընդհանուր իրավասության դատարան՝ առանց ճանաչման մասին դիմելու: Այս մոտեցման լրացուցիչ հիմնավորումը կայանում է նրանում, որ Յայաստանի Յանրապետության տարածքում իրականացված արբիտրաժն արդեն իսկ կարգավորվում է առևտրային արբիտրաժի մասին հայրենական օրենքով և դրա իմպերատիվ նորմերի պահպանմամբ իրականացրած արբիտրաժի արդյունքում կայացրած վճռի ճանաչման անհրաժեշտությանը բացակայում է:

<sup>22</sup> Սույն տեսակետին ընդդիմացող իրավաբան-գիտնականների կարծիքով, եռաստիճան դատական համակարգի պայմաններում դիմումատու և պետք է հնարավորություն ունենա վիճարկել արբիտրաժային վճիռը բոլոր դատական ասյաններում: Յատկանշական է, որ ՌԴ-ում արբիտրաժային բարեփոխումների շրջանակներում, սույն հարցը ևս հանդիսանում է բուն քննարկումների առարկա: Այսպես, Արբիտրաժային Յամայնքի Փորձագիտական հորհրդի ձայները գրեթե կիսվում են այն հարցի շուրջ, թե «անհրաժեշտ է արդյոք կրճատել այն իրավասու դատական ասյանների քանակը, որոնք իրավասու են քննել արբիտրաժային վճիռների վիճարկման և կատարման հարցերը»: (տե՛ս Третьский Суд, № 1(91) 2014, էջեր 21-22):

<sup>23</sup> Տե՛ս օրինակ «Առևտրային արբիտրաժի մասին» ՅՅ օրենքի 36-րդ հոդվածում արբիտրաժային վճռի ճանաչման, ինչպես նաև հարկադիր կատարման մերժման կարգավորումները սահմանելիս ամենուր գործածված «կամ» շաղկապը (ճանաչման կամ հարկադիր կատարման), բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասի, որը սահմանում է վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը: Յայրենական օրենքի 35 և 36 –րդ հոդվածների ներկայիս թե՛ խմբագրությունը և թե՛ կիրառման պրակտիկան կարծես ճանաչման ինստիտուտը որպես այդպիսին իմաստագուրկ են դարձրել, այն միշտ դիտարկելով հարկադիր կատարման համար պարտադիր փուլ: Մինչդեռ, Մոդելային օրենքի մշակողները գործածելով «կամ» շաղկապը, ցանկացել են ընդգծել «ճանաչման» և «հարկադիր կատարման» առանձին գործառնությունները և դրանց առանձին գործածման հնարավորությունը, հատկապես միջազգային արբիտրաժի սսպարեզում: Օրինակ, ճանաչման վճիռների պարագայում, արբիտրաժի կողմը կարող է տնօրինել իրավասու դատարանի դիմելու և վճռի ճանաչում ստանալու իր իրավունքն առանց կատարման համար դատարանի դիմելու: Դակարող է լինել, օրինակ, իրավունքի ճանաչման վեճերով կայացված արբիտրաժային վճիռների դեպքում:

Ճանաչման ինստիտուտը հատուկ է միջազգային առևտրային արբիտրաժին, երբ առաջանում է մեկ պետության տարածքում կայացրած արբիտրաժային վճիռը մեկ այլ պետությունում հարկադիր կատարելու հրամայական: Այս դեպքում, օտար պետության տարածքում այդ երկրի արբիտրաժային օրենքի համապատասխան իրականացված արբիտրաժի արդյունքում կայացրած արբիտրաժային վճռի ճանաչումը տրամաբանական է: Մինչդեռ, նույն պետության տարածքում իրականացված արբիտրաժի դեպքում ուղղակիորեն հարկադիր կատարման համար իրավասու դատարան դիմելը բխում է առնվազն արդարադատության տնտեսման սկզբունքից: Ինչ վերաբերում է տվյալ դեպքում օրենքի իմպերատիվ նորմերը չպահպանելուն, ապա այս դեպքում արբիտրաժում պարտված կողմը կարող է դրանք ի ցույց դնել թե՛ հարկադիր կատարման մերժման և թե՛ վճռի չեղյալ ճանաչման համար իրավասու դատարան դիմելով: Ընդ որում, արբիտրաժային վճռի հարկադիր կատարման դեմ առարկող կողմն իր վիճարկումը պետք է իրականացնի նույն դատարանում, որտեղ հայցվում է այդ վճռի ճանաչումն ու հարկադիր կատարումը, դրա մերժման խնդրանքով նույն դատարանին դիմելու միջոցով: Այդպիսի պայմաններում, դատարանը, պարտավոր է հարկադիր կատարման ընդհանուր հայցային վարույթն առանց քննության թողնել և անցնել հատուկ հայցային վարույթ՝ վիճարկումը քննելու համար: Այս կատեգորիայի գործերով ևս կողմերի համար անհրաժեշտ է սահմանել բողոքարկման իրավունք, սակայն վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու ավելի կրճատ ժամկետով՝ օրինակ վճռի կայացումից հետո տասը աշխատանքային օր սահմանելով: Չաշվի առնելով Չայաստանում որդեգրված ոչ լրիվ վերաքննության սկզբունքը, որպիսի պայմաններում վճռի վիճարկման դիմումով միանգամից վերաքննիչ դատարան դիմելը կարող է խնդրահարույց լինել, կարելի է վիճարկման դիմումը ներկայացնել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, իսկ դիմումի քննության արդյունքներով կայացրած գործը լուծող դատական ակտը բողոքարկել անմիջապես վճռաբեկ ատյան՝ շրջանցելով վերաքննիչ ատյանը: Սակարելի է ընդունելի մոտեցում համարել թե՛ չեղյալ

ճանաչման դիմումների, և թե՛ արբիտրաժային վճռի ճանաչման և/կամ կատարման դիմումի քննության արդյունքներով դատարանի կողմից ընդունված ակտի բողոքարկման համար: Հատկանշական է, որ սույն կարգավորումն առկա է ՌԴ արբիտրաժային դատավարության օրենսգրքում<sup>24</sup>: Արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի առնչությամբ դատական ատյանների կրճատումը, ինչպես նաև այդ ատյանների կողմից վիճարկման վարույթն իրականացնելու և ավարտելու ժամկետների հստակ պահպանումը հնարավորություն կտա ավելի մոտենալ առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում ստանալու օրենսդրորեն ամրապնդված սկզբունքի իրականացմանը: Բացի այդ, առաջարկվող իրավակարգավորման ներդրումը կխթանի օրինակ Ռուսաստանի Դաշնության փաստաբաններին՝ որպես իրենց կողմից սպասարկվող կամ սպասարկվելիք արբիտրաժային վեճերի լուծման վայր: Հայաստանի Հանրապետությունն ընտրելը, քանզի Հայաստանում կայացրած արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման միջոցով արբիտրաժային վճռի վիճարկման բողոքարկումը կունենա օպտիմալացված ընթացակարգ: Նույնը կարելի է ասել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների մասին միջազգային վեճերի վերաբերյալ: Հայաստանի տարածքում իրականացված արբիտրաժի դեպքում այլևս չի առաջանա Հայաստանում դրա ճանաչման անհրաժեշտությունը: Ռուսաստանի Դաշնության քաղաքացիական իրավունքի սուբյեկտների մասնակցությամբ միջազգային առևտրային արբիտրաժային վեճերի լուծման վայրը Հայաստանի Հանրապետությունը դարձնելու առումով ներկայումս գտնվում ենք հիրավի պատմական հնարավորությունների խաչմերուկում: Մի կողմից՝ Ռուսաստանի Դաշնության դեմ արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցները, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության եվրասիական Տնտեսական միությանն անդամակցելը, այդ առումով մեր շահեկան աշխարհագրական դիրքը, պարարտ հող են նախապատրաստել Հայաստանը արբիտրաժային

<sup>24</sup> Տե՛ս "Арбитражный процессуальный кодекс Российской Федерации" от 24.07.2002 N 95-ФЗ (ред. от 30.12.2015) (с изм. и доп., вступ. в силу с 01.01.2016) գլուխներ 30 և 35:

տարածաշրջանային կենտրոն դարձնելու համար: Սույն աշխատության ունեցած առաջարկները միտված են արբիտրաժային օրենսդրության հետագա կատարելագործմանը, ինչը ևս կնպաստի թե՛ արբիտրաժի՝ որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի կայացմանը Յայաստանում, թե՛ դատական համակարգի բեռնաթափմանն ու ներպետական արբիտրաժային հաստատության ներքին զարգացմանը և թե՛ Յայաստանի Յանրապետության արբիտրաժային տարածաշրջանային կենտրոն դարձնելու գործին:

Սկսած 90-ականների վերջերից, որոշ երկրների օրենսդրությունը և պրակտիկան պայմանագրի կողմերին թույլատրում են սահմանափակել արբիտրաժային վճիռների հետագա դատական վիճարկումը<sup>25</sup>: Նշված նորմերն ամրապնդում են արբիտրաժային վճիռի վերջնական բնույթի և դատական միջամտության սահմանափակման վերջին տասնամյակում լայն թափ առած միտումները: Դրանց արմատները թերևս գտնվում են Նյու Յորքի Կոնվենցիայի և Միջազգային առևտրային արբիտրաժի մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ Ժնևի կոնվենցիա) նորմերում (հոդվ. II և IX):

## **§2. Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը, որոնք ապացուցելու պարտականությունը կրում է դիմում ներկայացրած կողմը**

<sup>25</sup> Այդպիսի իրավունք է վերապահված, օրինակ, 1999թ. «Արբիտրաժի մասին» շվեդական օրենքի 51-րդ հոդվածով: Ըստ դրա, եթե վեճի կողմերը չեն հանդիսանում շվեդական ռեզիդենտներ, սակայն Շվեդիան ընտրված է որպես արբիտրաժի վայրը, ապա նրանք կարող են բացառել արբիտրաժային վճիռի չեղյալ ճանաչման հիմքերի կիրառումը: Շվեյցարիայի «Միջազգային մասնավոր իրավունքի մասին» 1987թ. օրենքի 192-րդ հոդվածը ևս սահմանում է նման իրավունք: Նշված ծանրակշիռ փաստարկների ներքո չի կարելի համաձայնվել Նեշատանայի կարծիքի հետ, համաձայն որի, օրենսդրությամբ միջազգային արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելը բացառելու հնարավորությունն սահմանելը հակասում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին (տե՛ս Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации // Под ред. **В.Ф. Яковлева и М.К. Юкова**, М, Городец-издат, 2003թ., էջ 609:

Տե՛ս **А. А. Ягельницкий, О. Д. Петроль**, Соглашения об отказе от права на оспаривание решения международного коммерческого арбитража, Новые горизонты международного арбитража. Сборник статей. 2014г., Выпуск 2, 364, էջեր 259-299:

Սույն պարագրաֆում մենք կքննարկենք արբիտրաժային վճռի վիճարկման այն հիմքերը, որոնց դատարանը կարող է անդրադառնալ արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչմանը ձգտող կամ ճանաչման և հարկադիր կատարման դեմ առարկող (դատարանի կողմից դրանց մերժմանը ձգտող) կողմի հղման դեպքում: Քննարկման առարկա կդարձնենք ինչպես արբիտրաժային համաձայնության անարավոր անվավերության և կամ այլ թերություններով կնքված համաձայնության և այլ մասնավորված արբիտրաժային տրիբունալի իրավասության և այդ իրավասության սահմաններից դուրս գալու, այնպես էլ արբիտրաժի ընթացակարգի խախտումների հետ կապված հիմնախնդիրները: **Արբիտրաժային վճիռների վիճարկման այն հիմքերի ընդհանուր բնութագիրը, որոնց դատարանն իր նախաձեռնությամբ չի կարող հղում կատարել.** Արբիտրաժային օրենքը սահմանում է, որ արբիտրաժային վճիռը կողմի դիմումով կարող է դատարանի կողմից չեղյալ ճանաչվել, եթե ապացույցներ ներկայացվեն այն մասին, որ մասնավորապես նույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված արբիտրաժային համաձայնության կողմերից մեկը [նկատի է ունեցվում դիմող կողմը], իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, եղել է անգործունակ, կամ արբիտրաժային համաձայնությունը կողմերի ընտրած իրավունքի կամ այդպիսին ընտրած չլինելու դեպքում, Յայաստանի Յանրապետության օրենսդրության համաձայն, անվավեր է: Նախ անդրադառնանք սույն նորմում օգտագործված հասկացություններին: Արբիտրաժային համաձայնությանը նվիրված է օրենքի 7-րդ հոդվածը, որը սահմանում է այն իրավահարաբերությունները (պայմանագրային և ոչ պայմանագրային), որոնց կապակցությամբ կարող է կնքվել այդ համաձայնությունը: Ավելի ին, ՀՀ ՔԴՕ-ի, Արբիտրաժային օրենքի և մասնավորապես նշված հոդվածի համակարգային վերլուծությանից պարզ է դառնում, որ արբիտրաժային համաձայնության առկայությունը հանդիսանում է արբիտրաժի իրականացման նախապայման: Արբիտրաժային համաձայնությունը, արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության մասին որոշում կայացնելու իրավունքի (competence – competence) հետ մեկտեղ հանդիսանում է այն հիմնաքարը, որի վրա հենված է արբիտրաժը, որպես ինստիտուտ:



Ավելի ն, վավեր արբիտրաժային համաձայնության առկայությանը խոչընդոտում է վեճն ընդհանուր իրավասության դատարանում քննելուն և հանդիսանում է հայցն առանց քննության թողնելու հիմք<sup>26</sup> : Այս առնչությամբ, պրոֆեսոր Ա.Ս. Կոմարովը նշում է, որ Մոդելային օրենքի 8-րդ հոդվածի ուժով, պետական դատարանների վրա դրված է վեճի կողմերի կողմից վեճն արբիտրաժային կարգով լուծելու համաձայնության պահպանման երաշխավորի գործառույթ<sup>27</sup> : Նշված հոդվածում ձևակերպված է արբիտրաժային համաձայնության ձևին վերաբերող կարևորագույն պահանջը, ըստ որի այն պետք է կնքվի գրավոր, այդ թվում կամ առանձին պայմանագրի (արբիտրաժային համաձայնության) կամ քաղաքացիա-իրավական պայմանագրում արբիտրաժային վերապահման ձևով : Սույն կանոնը որոշակիություն և կայունություն է ապահովում արբիտրաժի կողմերի հարաբերություններում՝ հաշվի առնելով գրավոր համաձայնության բացակայության պայմաններում արբիտրաժային վարույթի անցկացման ձևաչափի որոշման հետ կապված տարբեր հնարավոր բարդությունների առաջացումը :

Հարկ է նշել, որ Արբիտրաժային օրենքի 7-րդ հոդվածը, գրավոր ձևին տալիս է լայն մեկնաբանություն. կողմերի ստորագրությամբ մեկ փաստաթուղթ կազմելուց սկսած մինչև էլեկտրոնային կամ այդպիսի [արբիտրաժային] համաձայնության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ՝ հաղորդումներ փոխանակելու միջոցով կամ հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ, որտեղ մի կողմը վկայակոչում է արբիտրաժային համաձայնության առկայությանը, իսկ մյուս կողմը չի առարկում դրա դեմ : Արբիտրաժային համաձայնությունը համարվում է գրավոր ձևով կնքված նաև, եթե արբիտրաժային համաձայնության մասին մի կողմի գրավոր առաջարկությունը որևէ ձևով ընդունել է մյուս կողմը : Բոլոր այս ձևերի ճիշտըմբռնումը

<sup>26</sup> ՀՀ ՔԴՕ, հոդված 103, կետ 3: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, հոդված 8:

<sup>27</sup> Տե՛ս Комаров А.С. Разрешение международных коммерческих споров. Էջ 27: Արբիտրաժային համաձայնության պարտադիր բնույթի մասին և արբիտրաժային վարույթի՝ սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքին համապատասխանության օգտին է արտահայտվել ՌԴ Սահմանադրական դատարանը, տե՛ս 1999թ. N 191-Օ և 2000թ. N 214-Օ որոշումները :

փաստաբանների և դատավորների կողմից թույլ կտա առավել գրագետ սպասարկել արբիտրաժային վեճերը, իսկ իրավասու դատարանին՝ իրականացնել առավել արդյունավետ աջակցություն և վերահսկում արբիտրաժի նկատմամբ: Այս կապակցությամբ թույլ տվեք հիշել տողերիս հեղինակի կողմից ՀՀ Առևտրաարդյունաբերական Պալատի (այսուհետ՝ ՀՀ ԱԱՊ) արբիտրաժային դատարանում ոչ վաղ անցյալում որպես նախագահող արբիտր քննած գործերից մեկը: Հայցվորը, դիմելով ՀՀ ԱԱՊ արբիտրաժային դատարան, գուգահեռաբար դիմել էր նաև իրավասու դատարան՝ միջնորդելով կիրառել հայցի ապահովման միջոցներ, հիմնվելով Արբիտրաժային օրենքի 9-րդ հոդվածի վրա<sup>28</sup>:

<sup>28</sup> Գտնում ենք, որ սույն հոդվածն իր ներկայիս խմբագրությամբ հակասում է ՀՀ ՔԴՕ 97-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավակարգավորմանը: Այսպես, Արբիտրաժային օրենքի 9-րդ հոդվածի ուժով հայցի ապահովման միջոցի կիրառման համար դատարան կարելի է դիմել **«արբիտրաժի առաջ»** [ընդգծումը՝ հեղինակի] կամ դրա ընթացքում ցանկացած պահի»: Մինչդեռ ՀՀ ՔԴՕ 97-րդ հոդվածի համաձայն «Դատարանը, «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, **արբիտրաժի ցանկացած փուլում** [ընդգծումը՝ հեղինակի], արբիտրաժի կողմերից մեկի միջնորդության հիման վրա միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար...»: Այսպիսով, ՀՀ ՔԴՕ-ն՝ հղելով Արբիտրաժային օրենքին (որը հայցի ապահովման միջոցի կիրառումը թույլատրում է նաև արբիտրաժից առաջ), միևնույն ժամանակ հայցի ապահովման միջոցի կիրառման համար օգտագործում է «արբիտրաժի ցանկացած փուլ» արտահայտությունը, որն «արբիտրաժից առաջ» արտահայտության հետմտնում է հակասության մեջ:

Սողելային օրենքը, որի 9-րդ հոդվածը գրեթե (մոդելային օրենքում օգտագործված է «arbitral proceedings» [արբիտրաժային վարույթ] հասկացությունը, մինչդեռ հայերեն տարբերակում օգտագործված է «արբիտրաժ» հասկացությունը, ինչն արդարացված համարել չի կարելի) նույնությամբ փոխ է առնվել հայրենական օրենքի 9-րդ հոդվածում, ամենայն հավանականությամբ մշակվել է արբիտրաժի կողմերի խելամտության կանխավարկածից ելնելով: Ընդամին, մեր պարագայում, արբիտրաժային համաձայնության առկայությունը կարող է հիմք հանդիսանալ հայցի ապահովման միջոցի կիրառման համար, առանց արբիտրաժային դատարան հայց ներկայացնելու կամ այն էսպես ուշ ներկայացնելով: Արդյունքում, կողմը, որի հանդեպ կկիրառվեն հայցի ապահովման միջոցներ կհայտնվի իր համար անցանկալի վիճակում, երբ մի կողմից արբիտրաժային համաձայնության առկայությունը կգրկի նրան դատարան դիմելու հնարավորությունից, ներառյալ հակընդեմ ապահովում կիրառելու պահանջով դատարան դիմելը, մյուս կողմից նաստիպված կլինի սպասել, մինչև հայցի ապահովման միջոցի կիրառում նախաձեռնած կողմը բարեհաճի ըստ էության հայց հարուցել դատարան կամ ինքը տվյալ դեպքում ստիպված կլինի դիմել արբիտրաժային դատարան: Հաշվի առնելով, որ խնդիրը ծավալուն է և դուրս է մեր հետազոտության առարկայից, կսահանախակվենք այս քանով, նշելով, որ ՀՀ ՔԴՕ-ն այս առումով լրացման կարիք ունի: Առաջարկվելիք լրացմամբ հարկ է սահմանել, որ եթե Արբիտրաժային օրենքի 9-րդ հոդվածի ուժով հայցի ապահովման միջոցի կիրառման մասին միջնորդությունը ներակայացվում է արբիտրաժային վարույթից առաջ, ապա այդպիսի միջնորդությամբ հանդես եկող կողմը պարտավոր է այդ միջնորդությունը բավարարելու մասին դատարանի որոշումը կայացվելուց հետո հինգ աշխատանքային օրում նույն դատարան ներկայացնել

Իրավասու դատարանը մերժել էր միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ «առկա չէ սույն վեճը Արբիտրաժային դատարանի լուծմանը վերապահելու մասին արբիտրաժային համաձայնությունը»։ Այսպիսով, իրավասու դատարանը, լուծելով հայցի ապահովման միջոցի կիրառման մասին միջնորդության հարցը, հընթացս անդրադարձել էր նաև արբիտրաժային համաձայնության առկայության մասին հարցին։ Յարկ է նշել, որ քննարկվող գործում արբիտրաժային համաձայնությունը կնքված էր վերապահման ձևով և հանդիսանում էր արբիտրաժային իրավունքի գիտությունում ընդունված «պաթոլոգիկ» համաձայնություն<sup>29</sup>։ Այն սահմանում էր, որ «համաձայնությունն ձեռք չբերելու դեպքում առաջացած վեճերի լուծումը փոխանցվում է արբիտրաժային դատարանի քննությանը»։ Այս պարագայում արբիտրաժային համաձայնության պաթոլոգիկ բնույթը չի զրկում այդպիսի համաձայնության կողմին իրավասու դատարանին միջնորդություն ներկայացնելու իրավունքից։ Դատարանի կողմից մերժումը ստանալուց հետո որոշ ժամանակ անց, արբիտրաժի կողմը կրկին դիմել էր իրավասու դատարան սույն միջնորդությամբ։ Ի տարբերություն նախորդ իրավիճակի, այս անգամ ՀՀ ԱԱԴ արբիտրաժային դատարանի քարտուղարությունն արդեն հասցրել էր պատասխանողին ուղարկել հայցադիմումի օրինակը և ստանալ թե՛ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու փաստը հաստատող փոստային հետադարձ ծանուցագիրը, թե՛ հայցի պատասխանն ըստ վեճի էության (որում պատասխանողը կողմ էր արտահայտվել վեճն արբիտրաժային դատարանին հանձնելուն, դրա կանոնակարգի համաձայն լուծելու

---

մշտապես գործող արբիտրաժային դատարանի քարտուղարությունն կամ արբիտրաժային համաձայնությամբ կոնկրետ վեճը լուծելու համար (ad hoc) նախատեսված արբիտրաժային դատարանի դեպքում այդ դատարանին ներկայացված հայցադիմումի օրինակը՝ դրան կցելով հայցադիմումը արբիտրաժային դատարանին ներկայացնելու մասին գրավոր ապացույց։ Յակառակ պարագայում հայցի ապահովումը պետք է օրենքի ուժով համարվի վերացված։

<sup>29</sup> Արբիտրաժային համաձայնությունը համարվում է «պաթոլոգիկ», երբ դրանից, մասնավորապես, հնարավոր չէ հստակ հետևություն հանգել, թե որ արբիտրաժային դատարանին է հանձնվում վեճի լուծումը կամ ինչ կանոններով պետք է լուծվի վեճը։

համար<sup>30</sup>): Բոլոր նշված փաստաթղթերը արբիտրաժային դատարանի քարտուղարի տեղեկանքի հետ միասին, հայցվոր կողմը կցել էր իր միջնորդությանը: Այս անգամ, իրավասու դատարանն այլ կազմով քննարկել և կրկին մերժել էր հայցվորի միջնորդությունը, պատճառաբանելով, որ «չի ներկայացվել Արբիտրաժային դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը»: Չարկ ենք համարում ընդգծել, որ ո՛չ Արբիտրաժային օրենքը և ո՛չ էլ ՀՀ ԱԱՊ արբիտրաժային դատարանի կանոնակարգը չեն սահմանում հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում ընդունելու պարտականություն կամ իմպերատիվ փուլ: Արբիտրաժային օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, արբիտրաժային վարույթը համարվում է սկսված՝ վեճն արբիտրաժին փոխանցելու մասին ծանուցումը պատասխանողի կողմից ստանալու օրը<sup>31</sup>:

Այսպիսով, արբիտրաժային համաձայնության գրավոր ձևով կնքված լինելու մասին դատողությունն անելիս, անհրաժեշտ է բազմակողմանիորեն համադրել այդ համաձայնության կնքման, ներառյալ դրա առկայության կամ իսպառ բացակայության, վերաբերյալ բոլոր փաստական հանգամանքները: Անհրաժեշտ է նշել, որ Արբիտրաժային օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետը արբիտրաժային համաձայնության անքակտելի մաս են համարում ցանկացած արբիտրաժային կանոնները, որոնց կողմերը հղում են կատարել իրենց համաձայնության մեջ: Անհրաժեշտ է նշել, որ վեճը ինստիտուցիոնալ արբիտրաժին հանձնելու մասին համաձայնության դեպքում դրա կանոնակարգին համաձայնությամբ հղում չկատարելը չպետք է խոչընդոտի արբիտրաժի իրականացմանը կամ համաձայնության թերիության չափանիշ դառնա: Ինչ վերաբերում է արբիտրաժային համաձայնության գրավոր ձևով կնքված լինելու փաստի հաստատմանը, ապա, հաշվի առնելով կապի ժամանակակից

<sup>30</sup> Այսպիսով, արբիտրաժային համաձայնությունը կնքվել էր հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների փոխանակմամբ:

<sup>31</sup> Օրենքով սահմանված բոլոր պայմաններն այս անգամ հայցվորի կողմից պահպանվել էին և իրավասու դատարանի կողմից նման պատճառաբանությամբ արբիտրաժի կողմի միջնորդությունը մերժելը վկայում է այն մասին, որ արբիտրաժի և դրա ընթացակարգերի վերաբերյալ մեզ անուամ դեռևս առկա է խորը և համապարփակ ընկալում: Այս խնդիրների վեր հանմանը և միասնական մոտեցումների ձևավորմանը մեծապես նպաստում է արբիտրաժային և քաղաքացիական դատավարության կարգով արբիտրաժային տարաբնույթ հարցերի շուրջ ձևավորվող դատական արակտիկան, որը մեզ անում դեռևս հեռու է հարուստ խորքային լինելուց:

միջոցների սրընթաց զարգացման տեմպերը, միջազգային մոտեցումները գնում են նյութի կոնվենցիայի II հոդվածով արբիտրաժային համաձայնության ձևի ընդլայնող մեկնաբանության ուղղությամբ, նշելով, որ այդ հոդվածում նշված ձևերը սպառիչ չեն<sup>32</sup>:

Արբիտրաժային վարույթի իրականացման ընթացակարգային թերույունների հետ կապված արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերը. Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դ) ենթակետի համաձայն, արբիտրաժային դատարանի վճիռը կարող է չեղյալ ճանաչվել, եթե արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը, եթե այդ համաձայնությանը չի հակասում Արբիտրաժային օրենքի պարտադիր դրույթներին կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել Արբիտրաժային օրենքին: Արբիտրաժային տրիբունալի կազմի՝ արբիտրաժային համաձայնությանը չհամապատասխանելը կարող է դրսևորվել այն դեպքերում, երբ այդ համաձայնությամբ կա՛մ հստակ սահմանված են այն չափանիշները կամ արբիտրները, որոնք պետք է լուծեն վեճը, կա՛մ հղում է կատարված ինստիտուցիոնալ արբիտրաժային համաձայնության կանոններին, որոնք սահմանում են տրիբունալի (հիմա – արբիտրաժային դատարանի) կազմին ներկայացվող հստակ պահանջները: Օրինակ, եթե արբիտրաժային համաձայնությամբ սահմանված է, որ վեճը պետք է քննվի արբիտրաժային դատարանի կուլեգիալ կազմով՝ բաղկացած իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող երեք անձից, սակայն այն քննվում է միանձնյա կազմով, այդպիսով խախտվում է արբիտրաժային համաձայնությամբ սահմանված կազմին ներկայացվող պահանջը: Տվյալ դեպքում, արբիտրաժային վճիռը կարելի կլինի դրական ելքով վիճարկել՝ պայմանով, որ այն վիճարկող կողմը տրիբունալի կազմի դեմ իր առարկությունները ներկայացրած լինի արբիտրաժային վարույթի

<sup>32</sup> Տե՛ս UNCITRAL-ի 2006թ. 39-րդ նստաբաժանի նյութերը (Մոդելային օրենքի փոփոխություններն ու լրացումները) և նյութի կոնվենցիայի II հոդվածի 2-րդ և VII հոդվածի 1-ին կետերի մեկնաբանման վերաբերյալ Առաջարկությունները (Չավելված III):

ժամանակ՝ Արբիտրաժային օրենքի 4-րդ հոդվածով նախատեսված ժամկետում և կարգով: Հաճախ կազմի անհամապատասխանությունը պայմանավորվում է դրա կազմավորման համար սահմանված ընթացակարգի խախտումներով: Այսպես, տողերիս հեղինակի կողմից որպես փաստաբան մասնակցած մի գործով, արբիտրաժային համաձայնության կողմերը սահմանել էին, որ արբիտրաժային տրիբունալը պետք է կազմված լինի երեք արբիտրից և իրենց վեճը պետք է լուծվի ՅՄՄ Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի համաձայն: Արբիտրաժային վարույթի սկսման պահին նշված կանոնակարգի գործող խմբագրության 13.3 հոդվածի համաձայն. «Եթե պատասխանողը, հայցադիմումը և կից փաստաթղթերը ստանալու օրվանից հինգ օրվա ընթացքում արբիտրի թեկնածությունն չի ներկայացնում, ապա վերջինիս նշանակում է Ֆինանսական արբիտրաժային դատարանի նախագահը»: Պատասխանողը, ստանալով հայցադիմումը և կից փաստաթղթերը, արբիտրի թեկնածուին ներկայացրել էր ոչ թե հինգ, այլ ինն օրանց: Այսպիսի խախտմամբ նշանակված արբիտրը, հայցվորի կողմից ընտրված արբիտրի հետ միասին ընտրել էին երրորդ՝ նախագահող արբիտր: Խոսելով արբիտրաժի ընթացակարգային խախտումներից, կարող ենք նույն գործով արբիտրաժային տրիբունալի թույլ տված մեկ այլ խախտման օրինակ բերել, ինչն էլ հետագայում հիմք հանդիսացավ նշված գործով կայացված վճռի՝ իրավասու դատարանում չեղյալ ճանաչման համար<sup>33</sup>: Արբիտրաժային համաձայնությամբ կողմերն առանձին կետով սահմանել էին, որ իրենց վեճը պետք է լուծվի գրավոր ընթացակարգով, ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ բացառելով բանավոր լսումները: Այլ կերպասած, կողմերն իրենց վեճի քննության համար սահմանել էին Արբիտրաժային օրենքի 24-րդ հոդվածով, ՅՄՄ Ֆինանսական արբիտրաժի կանոնակարգի 18 և 22.1 հոդվածներով նախատեսված փաստաթղթային վարույթ: Սակայն արբիտրաժային տրիբունալը որոշում էր կայացրել գործի բանավոր լսումներ իրականացնելու մասին, հիմնվելով Կանոնակարգի 22.2

<sup>33</sup> Տե՛ս ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԿԴ/0109/17/15 քաղաքացիական գործով «Արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու մասին» 2015թ. փետրվարի 24-ի որոշումը (այսուհետ՝ թիվ ԵԿԴ/0109/17/15 գործ):

հողվածի վրա: Արբիտրաժային վարույթի բանավոր լսումների առաջին իսկ նիստին մեր կողմից ներկայացվել է առարկություն, բանավոր լսումների անցկացման դեմ: Սակայն, արբիտրաժային տրիբունալը՝ առարկությունը թողնելով անպատասխան, տվյալ գործով վճիռ կայացրեց, անցկացնելով թվով հինգ բանավոր լսումներ: Տվյալ դեպքում արբիտրաժային տրիբունալի կողմից անտեսվեց արբիտրաժը կողմերի արբիտրաժային համաձայնությամբ սահմանված կարգով իրականացնելու՝ արբիտրաժի կարևորագույն սկզբունքը: Այս սկզբունքը «կարմիր թելով» անցնում է ամբողջ Արբիտրաժային օրենքով: Այսպես, խնդրո առարկա Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի դ) ենթակետն ընթացակարգի խախտման որոշման համար սահմանում է հետևյալ չափանիշները. ա) կողմերի՝ Արբիտրաժային օրենքի պարտադիր դրույթներին չհակասող համաձայնությունը կամ բ) դրա բացակայության դեպքում Արբիտրաժային օրենքին չհամապատասխանելը: Գործի լսումները և փաստաթղթային վարույթը կանոնակարգող Արբիտրաժային օրենքի՝ 24 – րդ հոդվածը որպես օրենքի պարտադիր դրույթ սահմանում է «կողմերի համաձայնությունը»: Այսինքն, գրավոր ընթացակարգով վեճը լուծելու կողմերի համաձայնությունը ոչ միայն չի հակասում օրենքի պարտադիր դրույթներին, այլև ինքն է հանդիսանում պարտադիր դրույթ: Նշվածն անտեսելու պայմաններում, արբիտրաժային դատարանի կայացրած վճիռը չեղյալ ճանաչվեց: Այսպիսով, Արբիտրաժային օրենքը սահմանում է արբիտրաժի իրականացման համար հիմք հանդիսացող մի շարք նախապայմաններ և ընթացակարգի իմպերատիվ նորմեր, որոնք չպետք է խախտվեն նույնիսկ կողմերի համաձայնությամբ: Դրանով, օրենսդիրն ապահովում է արբիտրաժային հարաբերությունների կայունությունն ու կանխատեսելիությունը: Միևնույն ժամանակ, քննարկվող պարագայում, օրենսդրորեն ամրապնդված է ընթացակարգի հարցերը որոշելու կողմերի իրավունքը, ինչը հանդիսանում է կամքի ինքնավարության և պայմանագրի ազատության սկզբունքների օրենսդրական ամրապնդումը: Ընդհանուր կանոնի համաձայն, կողմերի կամքն ընթացակարգային

հարցերի որոշման գործում պետք է չհակասի օրենքի իմպերատիվ նորմերին և քննարկվող խնդրում կողմերի կամքն օրենքով օժտված է առաջնային ուժով: Այն պետք է գերակայի կողմերի ընտրած Կանոնակարգի համապատասխան դրույթի նկատմամբ: Վերոհիշյալ դեպքում, կողմերը նախատեսել էին վեճի լուծման միայն գրավոր ընթացակարգ, բացառելով բանավոր լսումները: Մինչդեռ այն Կանոնակարգը, որին հղել էին կողմերը, նախատեսում էր արբիտրաժային տրիբունալի իրավունքը իր նախաձեռնությամբ բանավոր լսումներ իրականացնելու հարցում: Արբիտրաժային օրենքի 19 և 24-րդ հոդվածների ուժով, եթե կողմերն իրենց համաձայնությամբ լսումների բանավոր ընթացակարգը բացառել են, ապա նրանց համաձայնությունը գերակայում է նրանց իսկ ընտրած Կանոնակարգի՝ արբիտրաժային տրիբունալին բանավոր լսումներ իրականացնելու հարցը միանձնյա կարգով որոշելու իրավունք սահմանող նորմի հանդեպ: Կողմերն ազատ են որոշելու թե՛ վեճերի լուծման եղանակը, թե՛ Կանոնները և թե՛ ընթացակարգը:

Ինչ վերաբերում է Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված հիմքին, ըստ որի արբիտրաժային վճիռը վիճարկող կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից, ապա կարող ենք արձանագրել հետևյալը: Յուրաքանչյուր կոնկրետ գործով արբիտրաժային դատարանն ինքն է որոշում նշված նորմի կիրառելիության սահմանները: Հարկ է նշել, որ պատշաճ ծանուցման ինստիտուտն արբիտրաժում տարբերվում է քաղաքացիական դատավարության նույն ինստիտուտից: Արբիտրաժում պատշաճ ծանուցումն ունի ավելի ազատական և պրագմատիկ բնույթ, ինչը պայմանավորված է արբիտրաժի կողմերի՝ իրենց դատավարական իրավունքներից բարեխղճորեն օգտվելու և ընդհանրապես քաղաքացիական շրջանառության սուբյեկտների բարեխղճության կանխավարկածով: Հայրենի դատական պրակտիկայում սովորական երևույթներ են դարձել ծանուցագիր չստանալը, ծանուցման սխալ հասցեներ նշելը, փաստաբաններին հաճախակի փոխելը և պարզապես դատական նիստերին



չ ներկայ անալ ը: Այ ս, և արատավոր շատ այլ երևույթներ, դատական գործերի քննության ժամկետները ձգում են տարիներով և շեքսափրյան լեզվով ասած դրանց ողջամիտ կոչվելու և անարժան դարձնում: Արբիտրաժի՝ առանց անհարկի ձգձգումների իրականացման սկզբունքն իր արտացոլումն է գտել Արբիտրաժային օրենքի մասնավորապես 3-րդ հոդվածում: ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն Եվ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013թ. հունիսի 4-ի՝ Արբիտրաժային տրիբունալի վճիռը որպես պարտադիր ճանաչելու և արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին թիվ ԵԿԴ/2366/02/12 (այ սու է հետ թիվ ԵԿԴ/2366/02/12 գործ) գործի քննության ընթացքում, դիմողի ներկայացուցիչը նշել է, որ արբիտրաժի կողմից ուղարկված ծանուցումները ճ. Կնյազյանը իր ՀՀ բնակության վայրի հասցեում ստացել է, քանի որ արբիտրաժի գործի նյութերում առկա է այն ստանալու փաստը հաստատող ապացույցը»: Դատարանը, սակայն, արձանագրել է, որ «...Կերը նշված փաստերն ուսումնասիրելով առանձին-առանձին ու միմյանց համադրելով՝ դատարանը գործով ապացուցված է համարել, որ իրականում Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի միանձնյա արբիտրաժային տրիբունալի կողմից քննված գործով ճերուկ Կնյազյանը պատշաճ ծանուցված չի եղել, քանի որ ճերուկ Կնյազյանը՝ արբիտրաժի կողմից գործը քննվելու պահին, մասնավորապես՝ 2012 թվականի ընթացքում, ինչպես նաև այն պահին, երբ կայացվել է թիվ 002-71/05/12 վճիռը, այսինքն՝ 2012 թվականի սեպտեմբերի 26-ին, բացակայել է Հայաստանի Հանրապետությունից ու փաստացի գտնվել է Ռուսաստանի Դաշնությունում: Փաստորեն, դիմումով ներկայացված՝ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու պահանջի ապացուցման առարկան կազմող իրավաբանական նշանակություն ունեցող փաստերից վեճի առարկա հանդիսացող փաստերը դատարանը գործի փաստերով հիմնավորված է համարել, հետևապես՝ հակառակ փաստի ապացուցման բեռը կրում է Բանկը, որը պետք է դատարանին ներկայացնե՝ ապացույցներ՝ ճերուկ Կնյազյանին Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի միանձնյա

արբիտրաժային տրիբունալի կողմից Ռուսաստանի Դաշնության փաստացի բնակության վայրի հասցեով ծանուցվելու մասին, ինչպես նաև պետք է ապացուցեր գործի դատաբանության ընթացքում իր իսկ վկայական չափով ան փաստարկը, համաձայն որի՝ արբիտրաժի կողմից ուղարկված ծանուցումները Ծ. Կնյազյանն իր ՀՀ-ի բնակության վայրի հասցեում ստացել է, քանի որ արբիտրաժի գործի նյութերում առկա է այն ստանալու փաստը հաստատող ապացույցը»։ Տվյալ դեպքում, պարտապանի կողմից արբիտրաժի ուղարկված ծանուցումների չստանալու փաստն ինքնին հիմք չէր կարող հանդիսանալ արբիտրաժային վճռի՝ սույն պարագրաֆում քննարկվող հիմքով չեղյալ ճանաչելու համար։ Վճռի տեքստից երևում է, որ դիմողը պարզապես չի ապացուցել արբիտրաժի կողմից ծանուցումներն ուղարկելու փաստը, որպիսի պարագայում կգործեր Արբիտրաժային օրենքի 3-րդ հոդվածը և վճռի վիճարկման հիմքում չէր դրվի Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետը։ Դատարանը չի ստացել արբիտրաժի կողմից պատասխանողին (պարտապանին) ծանուցագիր «ուղարկելու» ապացույց և իրավաչափորեն հանգել է այն եզրակացության, որ առկա է Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի բ) ենթակետով նախատեսված հիմքը և արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ է ճանաչել։ Երբեմն, նշված հիմքը կարող է առաջանալ, երբ օրինակ կողմին չի տրվում թույլատրելի և վերաբերելի ապացույցներ ներկայացնելու ողջամիտ ժամկետ (Արբիտրաժային օրենքով նախատեսված բացառություններով) կամ արբիտրաժային տրիբունալը լրացուցիչ վճիռ կայացնելիս չի տեղեկացնում մյուս կողմին և հնարավորություն է ընձեռում վերջինիս իր դիրքորոշումը ներկայացնելու։

**Արբիտրաժային համաձայնության անվավերության և կողմի անգործունակության հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի հիմնախնդիրները.** Արբիտրաժային համաձայնության անվավերությունը հանդիսանում է արբիտրաժային վճռի վիճարկման առանցքային հիմքերից մեկը։ Դրան հաճախ հղում են արբիտրաժային վճռից «դժգոհ» և դրա չեղյալ ճանաչմանը ձգտող կողմերը։ Արբիտրաժային համաձայնության անվավերությունը

կարող է պայմանավորված լինել այն պահանջների խախտմամբ, որոնց, այդպիսի համաձայնությունը՝ համաձայն Արբիտրաժային կամ այլ օրենքի, պետք է համապատասխանի: Օրինակ, պարտադիր գրավոր ձևի խախտումը կամ արբիտրաժային համաձայնություն կնքելիս կողմի մոլորությունը, գործունակությունը կամ իրավունակությունը: Այս առնչությամբ առաջ է գալիս արբիտրաժային համաձայնությունը գործարքների անվավերությանը հանգեցնող հիմքերով (խաբեություն, մոլորություն, բռնություն, սպառնալիքի և այլն) անվավեր որակելու հնարավորության մասին հարց: Յարկ է նշել, որ դատավարագետ տեսաբանները միակարծիք չեն արբիտրաժային համաձայնության բնույթի հարցում: Վեճերի արբիտրաժային լուծման իրավական բնույթի վերաբերյալ մինչ այսօր ձևավորված չորս տեսության շրջանակներում փորձ է արվում բացահայտել նշված համաձայնության բնույթը: Յարց է ծագում՝ արբիտրաժային համաձայնությունն հանդիսանում է արդյոք գործարք (քաղաքացիա-իրավական պայմանագիր) թե ոչ<sup>34</sup>: Յետևյալ ծանրակշիռ փաստարկների ուսումնասիրությունը թույլ է տալիս հակվել այն տեսաբանների կարծիքին, որ արբիտրաժային համաձայնությունը գործարք չի համարվում<sup>35</sup>: Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դրանց դադարելուն<sup>36</sup>: Մինչդեռ արբիտրաժային համաձայնությունը հանգեցնում է իրավաբանական հետևանքների՝ քաղաքացիական դատավարության իրավունքի ոլորտում: Մյուս կողմից, գործարքի անվավերության վերոհիշյալ հիմքերը անալոգիայով (օրենքի և իրավունքի) կիրառելի կարող են լինել նաև քաղաքացիական դատավարության ոլորտի համաձայնությունների հանդեպ, առավել ևս, որ այդպիսի անալոգիայի կիրառումը սահմանված է օրենքով<sup>37</sup>: Առևտրային արբիտրաժում ընդհանրապես (տեղական և միջազգային) արբիտրաժային համաձայնության արատները հաճախ են

<sup>34</sup> Տե՛ս *Международный коммерческий арбитраж: Учебник/под ред. В. А. Мусина, О. Ю. Скворцова.* – СПб. 2012, 496 с., էջեր 20 - 21

<sup>35</sup> Տե՛ս *Е.А. Суханов*, Третейский суд. 2000. N 5. էջեր 46 – 47:

<sup>36</sup> ՅՅ ՔՕ, հոդված 289:

<sup>37</sup> ՅՅ ՔԴՕ, հոդված 10:

հանդիսանում արբիտրաժային վճիռների վիճարկման հիմք: Նույնիսկ Կոնվենցիայի V հոդվածի 1-ին կետը թույլատրում է պետական դատարաններին մանրամասն քննության առարկա դարձնել արբիտրաժային վճռի դեմ արբիտրաժային համաձայնության գոյության և վավերության հիմքերով բերված կողմի բոլոր առարկությունները, անկախ այն հանգամանքից, որ նույն կետն արգելում է դատարանին օտարերկրյա արբիտրաժային վճռի ըստ էության վերանայումը: Այդ պատճառով, արբիտրները, արբիտրաժային վճիռներում, պետք է ամենայն ուշադրություն դարձնեն արբիտրաժային համաձայնության առկայության և վավերականության վերաբերյալ իրենց եզրահանգումներին, քանզի դրանք հանդիսանում են առավել խոցելիները և սերտորեն կապված են արբիտրաժային դատարանի՝ վեճը քննելու իրավասության հետ: Արբիտրաժային համաձայնության անվավերության հարցը քննելիս, անհրաժեշտ է նաև անդրադառնալ այն հարցին, թե ինչպե՞ս արբիտրները և դատավորները պետք է հետազոտեն այդ հարցի հիմնավորվածությունը: **Առաջին հերթին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն պետության նյութական իրավունքի ընտրությանը, համաձայն որի պետք է որոշվի արբիտրաժային համաձայնության անվավերությունը:** Արբիտրաժային համաձայնության արատները կարելի է պայմանականորեն դասակարգել ըստ հետևյալ երեք չափանիշների. անվավերություն, գործողության (ուժի) պահպանում և կատարելիություն: Այսպես, վավերության բացակայությունը (անվավերությունը) կարելի է որոշել՝ ելնելով արբիտրաժային համաձայնություն կնքողի կամքի ակնհայտ արատից կամ իրավասությունների անվերապահ և ակնհայտ բացակայությունից: Արբիտրաժային համաձայնության ուժը կորցրած լինելու տակ կարելի է հասկանալ վավեր արբիտրաժային համաձայնության գործողության դադարումը՝ այն կնքած անձանց կամքով: Կատարելիության անհնարինությունը կարող է պայմանավորված լինել օրինակ արբիտրաժն իրականացնելու \$իզիկական անհնարինությամբ, երբ, ասենք, կողմերի ընտրած արբիտրը մահացել է և կողմերը չեն ցանկանում այլ արբիտր նշանակել կամ արբիտրաժային համաձայնության այնպիսի անհստակ

ձևակերպմամբ (պաթուլոգիկ), որն իրականում այն իրագործելու անհնարինությունն կարող է առաջացնել<sup>38</sup>:

Սույն աշխատությունում մենք բազմիցս ընթերցողի ուշադրությունը հրավիրել ենք իրավաբանական տերմինների ճշգրիտ, միատեսակ թարգմանության և ներպետական օրենսդրության մեջ դրանց միատեսակ օգտագործման կարևորության վրա: Հետևյալ հարցի քննարկումը ևս առանձին ուշադրության կարիք ունի: Կոնվենցիայի անգլերեն բնօրինակում (կետ 3, հոդված II) և Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում<sup>39</sup> օգտագործված է «null and void» եզրույթը, որը հայերեն նշված փաստաթղթերի տեքստերում թարգմանվել է որպես «անվավեր»: Մինչդեռ ճիշտ թարգմանությունն է «առչինչ»: Անվավերությունն իր մեջ ներառում է ինչպես առչինչ, այնպես էլ վիճահարույց գործարքները: Տվյալ դեպքում Մոդելային օրենքի մշակողները, հենվելով Կոնվենցիայում առկա տրամաբանության վրա, նպատակ են ունեցել կիրառելու հենց առչնչության գաղափարը: Նշված տերմինաբանության ոչ միասնական թարգմանության և հետևաբար ոչ միատեսակ գործածության մասին է վկայում Արբիտրաժային օրենքի 8-րդ հոդվածը, որտեղ «null and void» եզրույթը թարգմանված է որպես առչինչ: Կոնվենցիայի V-րդ հոդվածի 1-ին կետի և Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների անգլերեն բնօրինակներում օգտագործված է «not valid» (անվավեր) եզրույթը, որտեղ հեղինակները ցանկացել են ընդգծել և կարգավորել արբիտրաժային համաձայնության անվավերությամբ պայմանավորված հարաբերությունները: Վերլուծելով Կոնվենցիայի և Արբիտրաժային օրենքի նշված հոդվածները, կարելի է գալ հետևյալ եզրահանգմանը. Կոնվենցիայի II հոդվածի 3-րդ կետը հանդիսանում է նույն հոդվածի 1-ին կետի ճշգրտումը, որը սահմանում է արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում վեճի կողմերին արբիտրաժ ուղղորդելու սկզբունքը: Տվյալ դեպքում դատարանը պարզում է միայն արբիտրաժային համաձայնության առերևույթ առչնչության հարցը, միչդեռ անվավեր գործարքի

<sup>38</sup> St' u Yearbook Commercial Arbitration. Vol. XII. P. 438:

<sup>39</sup> Այս մասին ստորև՝ արբիտրաժային տրիբունալի իրավասությունների մասին պարբերությունում:

տեսակ հանդիսացող վիճահարույց գործարքի առկայության հարցը պարզելու համար, դատարանն անխուսափելիորեն կընկղմվի վեճի էության մեջ, ինչն անթույլատրելի է՝ հաշվի առնելով արբիտրաժին դատական միջամտության օրենսդրական և կոնվենցիոն սահմանափակումները: Մյուս կողմից, Կոնվենցիայի V հոդվածի 1-ին կետի «a» ենթակետը (Արբիտրաժային օրենքի 34 և 36 հոդվածները) նախատեսում է արդեն արբիտրաժային համաձայնության անվավերության հարցը քննելու՝ դատարանի լիազորությունը (եթե դիմող կողմը ներկայացնի այդ հիմքը): Այսինքն, երբ արբիտրաժային տրիբունալը, արբիտրաժային համաձայնության վավերականության հարցը պարզելով իրականացնում է արբիտրաժ վճիռ է կայացնում, դրանից հետո միայն, օրենսդիրն իրավունք է վերապահում դատարանին՝ արբիտրաժային վճիռը վիճարկող կողմի դիմումի հիման վրա վերլուծել արբիտրաժային տրիբունալի՝ արբիտրաժային համաձայնության վավերության մասին եզրահանգումների ճշմարտացիությունը՝ այդ թվում, անդրադառնալով արբիտրաժային համաձայնության (ներառյալ այն պայմանագրի, որում արված է արբիտրաժային վերապահում) վիճահարույց լինելու խնդրին: Ակնհայտ է, որ Կոնվենցիայի II հոդվածի 3-րդ կետի հայերեն սխալ թարգմանությունը խաթարում է դրա իմաստը և հակասության մեջ է մտնում Արբիտրաժային օրենքի 8-րդ հոդվածի հետ:

Արբիտրաժային համաձայնությունների առջև չունեցող և անվավերության մեկնաբանման մոտեցումները միջազգային պրակտիկայում Կոնվենցիայի II հոդվածի համատեքստում հանգում են հետևյալին<sup>40</sup>: Արբիտրաժային համաձայնություններն առջին չեն ճանաչվում կամքի ակնհայտ արատների առկայության դեպքերում<sup>41</sup> (սխալի, խաբեության, հարկադրանքի, *lex societatis* – ով ձևակերպված նորմերի և իրավունքի հիմնարար սկզբունքների միջև հակասության): Մինչդեռ անվավերության հարցերի պարզումը (արբիտրաժի սկզբնական փուլերում), ներառյալ

<sup>40</sup> St' u Руководство МСКА по толкованию Нью-Йоркской Конвенции 1958г., при содействии Постоянного Третейского Суда Дворец Мира, Гаага, пособие для судей, Инфотропик медиа 2012, Москва – Берлин, 137, էջեր 29 – 49:

<sup>41</sup> Yearbook Commercial Arbitration. Vol. XII. P. 534:

իրավասությունների հարցի պարզման դեպքերը, պետական դատարանները վերապահում են հենց արբիտրաժային տրիբունալներին: Կարևոր է նշել, որ տվյալ դեպքում արբիտրաժային համաձայնության կողմը (մինչև վեճի էության շուրջ դատարան առաջին հայտարարության ներկայացումը) պետք է մասնացույց անի արբիտրաժային համաձայնության գոյությանը, այլ ապես, դատարանի վրա կողմերին արբիտրաժ ուղարկելու ex officio պարտականություն դրված է: Եթե կողմը հղում է կատարում արբիտրաժային համաձայնությանը և դատարանում սկսում է ըստ վեճի էության առարկությունների ներկայացնել, ապա դատարանը կարող է հանգել եզրակացության, որ արբիտրաժային համաձայնությունն իր ուժը կորցրել է (կամ առնչինչ է), և համարել, որ կողմերը հրաժարվել են վեճը արբիտրաժի միջոցով կարգավորելու իրենց իրավունքից և շարունակել գործի քննությունը դատարանում: Սա բխում է Արբիտրաժային օրենքի 4-րդ և 8-րդ հոդվածների կարգավորումներից: Վերոհիշյալ վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ վեճը լուծելու իրավասություն ունեցող մարմնի (արբիտրաժ կամ դատարան) որոշման փուլում, դատարանի կողմից քննության են առնվում միայն կամքի արատի վերաբերյալ առերևույթ, ակնհայտ առարկությունները, իսկ ակնհայտ և վիճահարույց առարկությունների դեպքում, արբիտրաժային համաձայնության վավերության հարցի պարզումը հանձնվում է արբիտրաժային դատարանին: Միևնույն է, հետագայում, պետական դատարանը վճռի ճանաչման և/կամ հարկադիր կատարման վարույթում կարող է ստուգել արբիտրաժային տրիբունալի եզրահանգումները՝ կապված արբիտրաժային համաձայնության վավերականության հետ: Սույն մոտեցումը կօգնի համաչափ օգտագործել հայկական դատարանների առանց այդ էլ սուղ ռեսուրսները, բեռնաթափել դրանք, տեղի չտալ վեճի անբարեխիղճ կողմի ընթացակարգային հարցերի որոշմամբ ձգձգելու վեճի ըստ էության լուծումը և կնախականի արբիտրաժային դատարանի ենթակայությունից խուսանավելու փորձերը: Այս արատավոր երևույթների դեմ արդյունավետ դիմակայելու հարցում մեր դատական համակարգը պետք է

շարունակի իր աշխատանքները և դատավարական օրենսդրության շարունակական կատարելագործումը կոչված է իր կարևոր նպաստը ներդնելու նշված հարցում:

Վերոհիշյալ մոտեցումը կարելի է ամրապնդել արակտիկայից բերվող հետևյալ օրինակով: «Սովկոմֆլոտ» ԲԲԸ-ն, ղեկավարության փոփոխությունից հետո հայտարարեց, որ ընկերության նախկին տնօրենները կոռումպսցված են եղել, կաշառքներ են ստացել և ստորագրել են ըկերության համար ոչ ձեռնտու նավային չարտերային պայմանագրեր: Իր նախկին տնօրենների և գործընկերների դեմ ընկերությունը հայցեր ներկայացրեց անգլիական պետական (թագուհու) դատարաններ՝ վնասների ընդհանուր գինը գնահատելով ավելի քան 300 մլն ԱՄՆ դոլար: Սակայն ընկերության անունից նախկին տնօրենների կնքած չարտերային պայմանագրերն արբիտրաժային վերապահումներ էին ներառում: Այս պայմաններում պատասխանողներն առարկեցին վեճերը անգլիական դատարաններում քննելու դեմ և պահանջեցին վեճերի լուծումը հանձնել արբիտրաժին: Հայցվոր կողմը պնդեց անգլիական դատարանում գործերի քննությունը շարունակելու իր մտադրությունը, հիմնավորելով այդ պահանջը նրանով, որ եթե պայմանագրերը կնքվել են կաշառքով, ապա դրանք ընդհանուր առմամբ կրում են անօրինական բնույթ և այդ անօրինականությունը տարածվում է նաև արբիտրաժային վերապահումների վրա: Անգլիական դատարաններն ի վերջո վեճերն ուղարկեցին արբիտրաժ: Անգլիական դատավորների կարծիքով, կոռումպսցվածության մեջ մեղադրանքը արբիտրաժային վերապահման գործողության ուժը չի դադարեցնում, եթե նույնիսկ ամբողջ պայմանագիրն այդ պատճառով արժանի է օրենքին հակասող ճանաչվելու: Ուշադրության է արժանի դատավոր Լորդ Լոնգմորի հետևյալ միտքը. «Պայմանագիրը կաշառքով արատավորելու մասին ուղղակի հայտարարելը բավարար չէ, եթե չկան հիմքեր կարծելու, որ այդ կաշառքն արատավորում է հենց արբիտրաժային վերապահումը: Տվյալ դեպքում այդպիսի հիմքեր չկան»<sup>42</sup>:

<sup>42</sup> St´ u publications.parliament.uk, House of Lords. 17 October 2007



Այս ափսոսվ, միջազգային արակտիկայում ընդունված է ելնել արբիտրաժային համաձայնության վավերության կանխավարկածից<sup>43</sup>: Այս առնչությամբ հիրավի դասական օրինակ է համարվում «Սոյուզնեվթեքսփորթ» ընդդեմ «Ջեյ Օյլ Լիմիթեդի» գործով 1984թ. հունիսի 9 –ի ՍՍՀՄ ԱԱՊ-ին առընթեր Արտաքին Տնտեսական Արբիտրաժային Հանձնաժողովի հետևյալ ձևակերպումը. «Արբիտրաժային համաձայնությունը կարող է անվավեր ճանաչվել սոսկ այն դեպքում, եթե դրանում հայտնաբերվեն կամքի արատներ (մոլորություն, խաբեություն և այլն), կնքված արբիտրաժային համաձայնության բովանդակությանը և ձևին ներկայացվող օրենքի պահանջների խախտումներ»<sup>44</sup>: Այս գործում ապացուցվեց, որ միևնույն անձի ստորագրությունը կարող է գործարքի էության հետ կապված իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրավական հետևանքներ չառաջացնել, սակայն այն կարող է ստեղծել վավեր արբիտրաժային համաձայնություն: Այս ափսոսվ, կարելի է հանգել այն եզրակացության, որ արբիտրաժային համաձայնության վավերության հարցը պարզելիս, դատարաններն առաջնորդվում են ավելի նեղ հիմքերով, քան այն գործարքների վավերականության հարցը պարզելիս, որոնցում այդ արբիտրաժային համաձայնությունները ներառված են: Օրինակ, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրի կնքման նոտարական ձևի չպահպանումն այն անվավեր է դարձնում, սակայն այդպիսի պայմանագրում ներառված արբիտրաժային վերապահումը (որն ինքնին գործարք չի հանդիսանում և ոչ էլ նյութական իրավահարաբերություն է կարգավորում) կշարունակի պահպանել իր ուժը և դրա ուժով այդ առուվաճառքի պայմանագրի անվավերության հետևանքները որոշելու իրավասությամբ կօժտի արբիտրաժային տրիբունալին: Իհարկե, կան դեպքեր, երբ արբիտրաժային համաձայնությունն առերևույթ վավեր է, սակայն առկա է այսպես կոչված թույլ կողմի (\$իզիկական անձ սպառողի) կամքի անտեսումը, երբ ասենք սպառողն առանց կարգալու խոշոր ցանցային ընկերության պայմանագիրը ստորագրում է այն, առանց գիտակցելու, որ իր պայմանագրի գիտն

<sup>43</sup> Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. X. Էջ 368

<sup>44</sup> Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. XV. Էջեր 384 - 435

անհամեմատ ցածր է, քան տվյալ պայմանագրով որոշված վեճն արբիտրաժային հաստատության լուծմանը հանձնելու համար նախատեսված ծախսերը: Այս խնդրի լուծման համար, կարելի է «Սպառողների շահերի պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարել, սահմանելով, որ «առավանջաբար կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) միանալու պայմանագրում կամ այնպիսի պայմանագրում, որոնք ողջամիտ հնարավորություն չեն ընձեռում սպառողին բանակցելու դրա պայմանները, նախատեսված արբիտրաժային համաձայնությունը չի գրկում սպառողին պայմանագրից բխող կամ դրահետկապված վեճը դատարանին հանձնելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճի ծագումից հետո, որով սպառողն անվերապահորեն համաձայնել է վեճը հանձնել արբիտրաժի լուծմանը: Սույն մասի դրույթները տարածվում են նաև ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարան դիմելու իրավունքը կարող է սահմանափակվել»: Արբիտրաժային պրակտիկայում ևս, նախապատվությունը տրվում է պայմանագրի թույլ կողմին<sup>45</sup>: Իհարկե, հանուն ճշմարտության անհրաժեշտ է նշել, որ առևտրային արբիտրաժն ըստ նշանակության կոչված է լուծելու առևտրային ընկերությունների (մասնավոր կամ պետական) միջև ծագած առևտրային, ձեռնարկատիրական և այլ տնտեսական վեճերը: Հայաստանում, այն ասես կերպափոխվել և դարձել է ֆինանսավարկային կազմակերպություն – ֆիզիկական անձ վարկառու, երաշխավոր և գրավառու վեճերը լուծող մարմին: Սա թերևս պայմանավորված է տնտեսական, հատկապես միջազգային տնտեսական հարաբերությունների թերզարգացվածությամբ և ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց լայնամասշտաբ վարկավորմամբ, որպիսի պայմանագրերը մեծամասամբ հղում են պարունակում ՀԲՄ ֆինանսական արբիտրաժ հիմնարկին:

Ինչ վերաբերում է միջազգային փորձին, ապա հատկապես միջազգային արբիտրաժային վեճերում հաճախ անիմաստ է արբիտրաժային համաձայնության անվավերության հարցը

<sup>45</sup> Yearbook Commercial Arbitration. Vol. XXI. էջ 426:

բարձրացնել բոլոր այն դեպքերում, երբ դրա հիմքերը հեղհեղուկ են, քանզի եթե նույնիսկ այն երկրի դատարանը, որի օրենքին ենթարկվում է արբիտրաժային համաձայնությանը վճռի դրամավաճեցում օգտին, այլ պետության տարածքում գտնվող արբիտրաժային հաստատությունը, որի լուծմանը հանձնված է տվյալ վեճը, կարող է անտեսել դատարանի այդպիսի որոշումը և ըստ վեճի էության վճիռ կայացնել, որը հետագայում բարեհաջող կերպով կարող է ի կատար ածվել ցանկացած այն երկրում, որտեղ պարտվող կողմը գոյություն ունի:

**Արբիտրաժային համաձայնության գործողության ուժը:** Այս հարցը որոշելու համար անհրաժեշտ է նախառաջ պարզել, թե արբիտրաժային համաձայնությունն առանձին է կնքված, թե՞ ունի արբիտրաժային վերապահման ձև: Առաջին դեպքում, արբիտրաժային համաձայնագրի լուծման մասին կողմերի համաձայնությունը բավարար է այն լուծված համարելու համար, հատկապես, եթե համաձայնությունը սահմանել է պայմանագրից բխող վեճերի արբիտրաժային կարգավորում<sup>46</sup>: Ինչ վերաբերում է արբիտրաժային վերապահմանը ապա պետք է փաստենք, որ այն օժտված է այսպես կոչված լրացուցիչ կենսունակությամբ, ինչն ամրապնդվում է նաև դրա «ինքնավարության» տեսության ուժով<sup>47</sup>: Այս դեպքում, արբիտրաժային վերապահումը դադարեցնելու մասին առանձին փաստաթղթի կազմումը կողմերին կապահովագրի դրա հետագա գործողությունից, եթե նրանք ցանկանում են դադարեցնել վերապահման գործողությունը: Տողերիս հեղինակի կողմից

<sup>46</sup> Տե՛ս **Попов М.А.** Теоретические и практические проблемы российской модели регулирования деятельности третейских судов: Автореф. дис. канд. юрид. наук. СПб, 2001. Էջ 13:

<sup>47</sup> Տե՛ս **Минаков А.И.** Арбитражные соглашения и практика рассмотрения внешнеэкономических споров. М.: Юрид. лит., 1985, էջ 85:

Տե՛ս **Fouchard, Gaillard, Goldman.** On International Commercial Arbitration. Kluwer Law International. 1999, էջ 214, "ինքնավարության սկզբունքն անկասկած հանդիսանում է այն գործընթացի առաջին փուլը, որի արդյունքում արբիտրները կարողանում են սեփական իրավասության վերաբերյալ դատողություններ անել: Հենց արբիտրաժային համաձայնության ինքնավարության շնորհիվ է, որ հիմնական պայմանագրի վավերության դեմ ցանկացած փաստարկ չի ունենա ուղղակի ազդեցություն արբիտրաժային համաձայնության և հետևաբար, արբիտրաժի իրավասության վրա: Այդպիսի ինքնավարությունը թույլ է տալիս արբիտրներին քննելու վիճարկվող պայմանագրի անվավերության վրա հիմնված՝ իրավասության վերաբերյալ առարկությունները: Այդպիսի իրավիճակում արբիտրաժային համաձայնության ինքնավարությունը և «competence competence» սկզբունքը փոխլրացնում և աջակցում են միմյանց»:

քննված մի քանի արբիտրաժային գործերով, արբիտրները միասնաբար հանգում են այն կարծիքին, որ արբիտրաժային վերապահումը շարունակում է պահել իր ուժը, նույնիսկ երբ լրանում է «հիմնական» պայմանագրի գործողության ժամկետը: Այս մոտեցումը կարծես ամրապնդվում է Արբիտրաժային օրենքի 8-րդ հոդվածով, որախի դեպքում, սակայն, ամերիկյան դատարաններն օրինակ, այն մեկնաբանում են ոչ թե որպես արբիտրաժային համաձայնության գործողության դադարում այլ որպես դրա առաջնություն<sup>48</sup>:

**Արբիտրաժային համաձայնության կատարելիության անհնարինությունը:** Սրա տակ հասկացվում է խիստ անհստակ ձևակերպում, որն իրականում անհնար է դարձնում որոշել որևէ մեկի համար ներառյալ դատարանը, կողմը կամ արբիտրաժը, թե որ արբիտրաժում պետք է լուծվի վեճը և որոնք են վեճի կողմերի իրական մտադրությունները՝ իրենց վեճի լուծման հանդեպ կիրառելի արբիտրաժային կառուցակարգերի առաջնությամբ: Տողերիս հեղինակի կողմից քննվող գործերից մեկում, կողմերի արբիտրաժային վերապահումը սահմանում էր. «Բոլոր վեճերի լուծումը պետք է տեղի ունենա արբիտրաժում՝ Հայաստանում»: Այսախի դեպքերում խիստ կարևորվում են վիճող կողմերի հետագա կամքը և գործողությունները: Տվյալ դեպքում հայցվորը դիմել էր ՀՀ ԱԱՊ արբիտրաժային դատարան, թեև իր հայցում հղում էր կատարել նշված պաթոլոգիկ վերապահմանը: Պատասխանողն իր հերթին պատասխանում նշել էր, որ ինքը «դեմ է վեճը արբիտրաժային դատարանում լուծելուն, սակայն անհրաժեշտ է ժամանակ, արբիտրաժային դատարանի Կանոնակարգին և արբիտրների ցուցակին ծանոթանալու և արբիտր նշանակելու համար»: Սա որոշակիորեն համապատասխանում է Արբիտրաժային օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի իրավակարգավորումներին: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ պատասխանողը ևս չի նշում կոնկրետ արբիտրաժային դատարանի անվանումը, սակայն արբիտրաժային դատարանի քարտուղարությունն ինքնուրույն ստացված հայցին տալիս է վերոհիշյալ պատասխանը, ինչն արդեն թույլ է բաց

<sup>48</sup> Yearbook Commercial Arbitration. Vol. X. էջ 368

անուղղակիորեն որոշակիություն է մտցնում ընտրված արբիտրաժային հաստատության առումով: Այս հարցն ի վերջո լուծում ստացավ բանավոր լսումների ժամանակ, երբ մինչև գործի ըստ էության քննությանն անցնելը, կողմերը՝ արբիտրաժային տրիբունալի նախագահողի առջարկով, վերահաստատեցին տվյալ արբիտրաժային դատարանում, տվյալ կազմով և դատարանի կանոնակարգին համաձայն իրենց վեճը լուծելու համաձայնությունը, որն արձանագրվեց և կցվեց գործին: Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ Արբիտրաժային օրենքը կողմերին իրավունք է տալիս նաև իրենց վեճի լուծումը հանձնել ad hoc դատարանի քննությանը և այդպիսի համաձայնությունը նույնպես օրենքի ուժով վավեր է: Կարևոր սկզբունքը քննարկվող հարցում կայանում է կողմերի կամքի հստակ բացահայտումը, այսինքն, կա՛մ արբիտրաժային համաձայնությունը, կա՛մ կողմերի հետագա վարքագիծը պետք է հնարավորություն տան նրանց կամքի հստակ որոշման համար: Արբիտրաժային համաձայնության անվավերության և կողմի անգործունակության խնդիրները սերտորեն կապված են արբիտրաժային դատարանի իրավասության վիճարկման հիմքով արբիտրաժային վճռի վիճարկման հետ: Վեճը լուծելու իրավասության հիմքով վիճարկման հիմնահարցերը մենք կքննարկենք ստորև:

Արբիտրաժում պարտված կողմն արբիտրաժային համաձայնության կնքման պահին անգործունակ լինելու մասին փաստարկներ բերելով՝ ձգտում է անվավեր դարձնել արբիտրաժի համար հիմք հանդիսացած արբիտրաժային համաձայնությունը, ինչև անխուսափելիորեն և ինքնաբերաբար կհանգեցնի արբիտրաժային տրիբունալի՝ վեճը լուծելու իրավասության բացակայությանը: Կողմի նման փաստարկը քննող պետական դատարանը, անպայման պետք է անդրադառնա այն հարցին, թե արդյո՞ք նույն փաստարկը ժամանակին ներկայացվել է արբիտրաժային տրիբունալին: Ինչպես նշեցինք, միշտ էլ, որ արբիտրաժային վերապահման անվավերության հարցը լուծելիս այն պետք է ենթարկել այն նյութական իրավունքին, որով կարգավորվում է հիմնական պայմանագիրը: Արբիտրաժային համաձայնության վավերության հարցը լուծելիս, կիրառելի

իրավունքը որոշելուց զատ, դատարանը պետք է ուշադրություն ն դարձնի նաև այդ համաձայնության կողմերի գործունակության խնդրին: Ընդ որում, անգործունակությունը պետք է որոշվի արբիտրաժային համաձայնության կողմի հանդեպ կիրառելի իրավունքով: Նման դրույթ է սահմանված նաև Ժնևի Կոնվենցիայում (հոդված VI, կետ 2): Այսպիսով, գործում է անձնական օրենքը (lex personalis կամ lex societatis): Կարևոր է, որպեսզի դատարանները տարանջատեն կիրառելի նյութական իրավունքը հիմնական պայմանագրի, արբիտրաժային համաձայնության (վերապահման) և արբիտրաժի կողմի գործունակության կամ անգործունակության հարցերը պարզելիս: Յնարավոր է իրավիճակ, երբ կողմը խախտած լինի խոշոր գործարքի կնքման կանոնները և դուրս եկած լինի իր լիազորությունների շրջանակից, ինչը կարող է հանգեցնել հիմնական պայմանագրի անվավերության: Այս հանգամանքն ինչևհիցե, չպետք է հանգեցնի դրանում պարունակված արբիտրաժային վերապահման անվավերության, քանզի այն ընդհանրապես գործարք համարվել չի կարող: Կողմի անգործունակության հարցը քննարկելիս, անհրաժեշտ ենք համարում ևս մեկ անգամ մատնանշել, որ հայրենական օրենքի 34 և 36-րդ հոդվածները ճիշտ չեն թարգմանվել: Բանն այն է, որ Մոդելային օրենքը և Կոնվենցիան (հոդվ. V կետ 1, ենթակետ «ա») անգլերեն բնօրինակներում օգտագործում են «was under some incapacity» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «եղել է որոշ չափով անիրավունակ» կամ «իրավունակության արատ»: Բացի այդ, «գործունակություն» եզրույթը մեր իրավական համակարգում գործածելի է ֆիզիկական անձանց առնչությամբ, մինչդեռ իրավաբանական անձանց դեպքում գործածվում է «իրավունակություն» եզրույթը: Այս առումով, անհրաժեշտ է լրացնել Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածները՝ «գործունակ» բառից հետո ավելացնելով «կամ իրավունակ» բառերը, թեև, մեր կարծիքով, «գործունակ» եզրույթի փոխարինումը «իրավունակ» բառով ևս կլուծեր խնդիրը: Օտարերկրյա կողմի մասնակցությամբ արբիտրաժային վեճով կայացրած վճռի վիճարկման հարցը քննելիս, դատարանը առաջին հայացքից ex officio

պարտավոր է ՀՀ ՔՕ 1255 ուժով պարզել օտարերկրյա իրավունքի նորմերի բովանդակությունը օտարերկրյա կողմի իրավունակությունը պարզելու համար, սակայն, ելնելով վերոթվարկյալ առանձնահատկություններից (կողմի նախաձեռնությամբ ներկայացվող հիմքերի առումով) կարող է առաջանալ հակասական իրավիճակ: Իրավական տարբեր համակարգերում այս խնդիրը լուծվում է յուրովի: Կարծում ենք, որ կողմերի մրցակցային սկզբունքից ելնելով, իրավունքի որոշման հարցում ևս, նախաձեռնությունը պետք է վերապահել կողմերին: Առավել ևս, որ իրավունակության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռը վիճարկող կողմն ինքն է կրում դրա ապացուցման պարտականության բեռը: Ավելի, վիճարկման վարույթի սուբյեկտներին նվիրված պարագրաֆում (գլուխ 2, §2) մենք հանգում ենք այն եզրակացության, որ Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների ներքո վճիռների վիճարկման դիմումներով դատարան կարող է դիմել արբիտրաժային կողմը, ում դեմ կայացվել է արբիտրաժային վճիռը:

Քննարկելով իրավունակության արատի հիմնախնդիրները, անհրաժեշտ է նաև նշել պետական մարմինների կամ պետական բաժնեմասով առևտրային ընկերությունների մասնակցությամբ արբիտրաժային վճիռների վիճարկման առանձնահատկությունները: Պետական տարր պարունակող սուբյեկտները, կնքելով միջազգային մասնավոր առևտրային պայմանագրեր, որոնցում ներառված են արբիտրաժային վերապահումներ, հետագայում, վեճ առաջանալու դեպքում, հաճախ փորձում են վիճարկել արբիտրաժային համաձայնության կնքման իրավասությունը, հիմնվելով ներպետական օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների և լիազորության բացակայության վրա<sup>49</sup>: Այս խնդրի լուծման փորձ է արված Ժնևի Կոնվենցիայում, որի II հոդվածը, համաձայն որի իրենց հանդեպ կիրառելի օրենքի համաձայն «հանրային իրավունքի իրավաբանական անձինք» իրավունք ունեն կնքելու վավեր արբիտրաժային համաձայնագրեր: Այդ Կոնվենցիան ստորագրելու, վավերացնելու կամ միանալու դեպքում Պետությունն իրավասու

<sup>49</sup> St' u Yearbook Commercial Arbitration. Vol. XV. Eջ 516

հայ տարարել, որ ինքը սահմանափակում է վերոհիշյալ իրավունքն այն պայմաններով, որոնք կնշվեն այդպիսի հայ տարարության մեջ: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունը սույն Կոնվենցիային չի միացել 2015թ. ապրիլի 8-ի դրությամբ: Նշենք, որ իրավունակության հետ կապված կողմերի առարկությունները մեծամասամբ հանգում են կնքված արբիտրաժային համաձայնությունները վիճարկելուն: Հարկ ենք համարում ընդգծել, որ արբիտրաժային համաձայնության վավերականության հարցին դատարանները պետք է մոտենան տարբերակված, կախված այն փուլից, թե երբ և ինչ է վիճարկում արբիտրաժային համաձայնության կողմը: Այսպես, վեճն արբիտրաժային դատարանի քննությանը հանձնելու հարցը լուծելիս արբիտրաժային համաձայնության վավերականության վիճարկման դեպքում, դատարանը պարտավոր է անդրադառնալ միմիայն համաձայնության առջնչությունը: Մինչդեռ, արբիտրաժային վճռի վիճարկման վարույթում արբիտրաժային համաձայնության վավերականության հիմքով վճիռը վիճարկելիս, դատարանն արդեն պարտավոր է անդրադառնալ այդ համաձայնության անվավերությանը՝ թե՛ առջնչություն և թե՛ վիճահարույց լինելու առումներով: ՀՀ ՔԴՕ ներկայիս իրավակարգավորումները հաշվի առնելով (հայցը վարույթ ընդունելու մասին որոշման ընդունումը և դրա ուղարկումը կողմերին, գործը քննության նախապատրաստելը և այլն) իրականում հնարավորություն է ստեղծվում պրակտիկայում հաճախ հանդիպող անբարեխիղճ կողմի համար իր դատավարական իրավունքները չարաչափելով՝ վեճի լուծումը անհիմն ձգձգելու համար: Հիմնականում այս արատավոր պրակտիկան ընդունված է ակնհայտ գործերով, օրինակ վարկը չվերադարձնելու դեպքում գումարի և գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործերով: Անբարեխիղճ կողմը, վիճարկելով արբիտրաժային համաձայնությունը, այն անվավեր ճանաչելու մասին հայց է ներկայացնում դատարան: Ներկայումս, դատական համակարգի գերծանրաբեռնվածությունը կարելի է «հանրաճանաչ» փաստ համարել: Եվ այսպես, դատարանը, հայցի հիմնավորվածությունը պարզելու համար, այն վարույթ է ընդունում, սկսում է գործը



քննության նախապատրաստելու երկար ու ձիգ գործընթացը՝ իր նախնական դատական նիստերով, կողմի չծանուցման պատճառով նիստերի հետաձգումներով և այլն և այլն: Արդյունքում վիժեցվում է արբիտրաժը՝ իր նպատակներով հանդերձ: Նշված իրական խնդիրներից խուսափելու նպատակով, առաջարկում ենք ՀՀ ՔԴՕ-ում սահմանել իրավակարգավորում, համաձայն որի արբիտրաժային համաձայնության նկատմամբ առջև չեն կանգնում վերաբերյալ հայցերը պետք է քննվեն արագացված դատաքննության կարգով՝ հայցը դատարան մուտքագրվելուց հետո տասը աշխատանքային օրում, իսկ դրավերաբերյալ կայացված վճիռները բողոքարկման ենթակա չլինեն: Ընդ որում, անբարեխիղճ կողմի, նիստերին «հարգելի» պատճառներով չներկայանալու հնարքներից օգտվելու հնարավորություն չտալու համար, նշված հարցի քննության համար պառչած ծանուցման ընդհանուր կանոնից կարելի է կատարել բացառություն՝ ծանուցումը ցրիչի կամ համացանցի միջոցով ապահովելու պայման սահմանելով:

Վեճի կողմերին արբիտրաժ ուղարկելու հարցը լուծելիս, դատարանին, ի թիվս այլ քննարկված հարցերի, անհրաժեշտ է լինում պարզել նաև, թե որքանով է արբիտրաժային համաձայնությունը ներառում կողմերի միջև առկա վեճը: Այս խնդրի լուծումը դժվարանում է այն դեպքում, երբ, ասենք արբիտրաժային համաձայնությունը վիճարկվում է մինչև արբիտրաժային դատարան հայց ներկայացնելը: Հաճախ այս հարցի պարզումը գրեթե անհնար կարող է թվալ առանց գործի էությանն անդրադարձնալու և բանավոր քննության իրականացնելու: Սակայն, արբիտրաժամետ մոտեցում որդեգրելու դեպքում և դատարանները բեռնաթափելու նպատակով, այս հարցի պարզումը ևս (թե որքանով է ծագած կամ ապագայում ծագող վեճը ներառված արբիտրաժային համաձայնության մեջ) պետք է թողնել արբիտրաժային տրիբունալների լուծմանը: Միևնույն է, վճռի ճանաչման, հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու կամ վիճարկման փուլում դատարանը օժտված է նշված հարցերը քննելու և այդպիսով իրականացված արբիտրաժը վերահսկելու օրենսդրորեն ամրագրված բոլոր հնարավորություններով: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ

արբիտրաժային դատարանները և արբիտրներն առաջին հերթին շահագրգիռ չեն իրենց վճիռների հետագա չեղյալ ճանաչման հարցում: Դաստիարում է նրանց ամենայն լրջությամբ մոտենալ արբիտրաժային համաձայնության վավերության և իրենց իրավասության վերաբերյալ հարցերին: Այս հարցերը, որպես կանոն, քննության և լուծման առարկա են դառնում բոլոր արբիտրաժային գործերը քննելիս, առաջին հերթին: Սա արբիտրաժային գործերի քննության ընդունված «ալ գորիթմն» է:

Արբիտրաժային պրակտիկայով զբաղվող փաստաբանները պետք է նկատի ունենան, որ պայմանագրից բխող, դրա հետ կապված, դրա վերաբերյալ բոլոր վեճերը մեկ միասնական մարմնում՝ արբիտրաժային դատարանում քննելու համար, արբիտրաժային համաձայնությունները հարկ է նախատեսել հնարավորինս լայն, դրանցում ներառելով նաև պայմանագրի և արբիտրաժային համաձայնության անվավերության և առնչչության հարցերը: Արբիտրաժային համաձայնության գործողության դադարման խնդրահարույց հարցերից է նաև պահանջի զիջման և պարտքի փոխանցման դեպքերում: Ճիշտ է, իրավաբանական գրականության մեջ գերակշռող կարծիքների համաձայն, արբիտրաժային համաձայնությունը պահպանում է իր ուժը նշված գործարքների դեպքում ևս<sup>50</sup>: Այնուամենայնիվ, նման գործարքներ նախապատրաստելիս կարելի է արբիտրաժային վերապահման վերաբերյալ հատուկ դրույթ սահմանել, նշելով, որ այն շարունակում է պահպանել իր ուժը, դրանով իսկ հետագայում զրկելով մյուս կողմին նշված փաստարկով արբիտրաժային համաձայնությունը, արբիտրաժային տրիբունալի իրավասությունը և որպես հետևանք՝ արբիտրաժային վճիռը վիճարկելու գայթակղությունից:

**Արբիտրաժային դատարանի իրավասության բացակայության հիմքով արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի**

<sup>50</sup> Տե՛ս **В.А. Мусин**, Арбитражная оговорка во внешнеторговом контракте и проблема правопреемства, журнал «Третейский суд» 2000, N 4 <http://arbitrage.spb.ru/jts/2000/4/art01.html>; **Born G.B.** International Commercial Arbitration. V. 1. Wolters Kluwer, 2009, էջ 1188; **Сеглин Б.** Арбитражная оговорка // Хозяйство и право, 1995 N 2; Исполнение решений Международного коммерческого арбитражного суда при ТПП РФ и иных международных арбитражных судов // Хозяйство и право, 1998, N 10, էջ 102:

**հիմնախնդիրները.** Քննարկելով Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների գ) ենթակետում սահմանված հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման հիմնախնդիրները, կարող ենք նշել, որ դրանք այլ կերպ վերաբերում են արբիտրաժային դատարանի իրավասության առկայության կամ բացակայության հիմքերին: Այսպես, նշված գ) ենթակետով սահմանված է. «... վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնության կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր»: Արբիտրաժային օրենքի 16-րդ «Արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը» հոդվածում ամրագրված են արբիտրաժի երկու հիմնարար դրույթներ, դրանք են «competence - competence» (արբիտրաժային տրիբունալի՝ իր իրավասությունների մասին որոշում կայացնելու իրավասությունը) և արբիտրաժային համաձայնության «ինքնավարությունը»: Վերոհիշյալ հիմքերով, արբիտրաժային վճռի վիճարկման հարցի ուսումնասիրության նպատակով, նախ անհրաժեշտ է անդրադառնալ նշված երկու դրույթների հասկացությանը: «Competence - competence» սկզբունքը նշանակում է, որ արբիտրաժային դատարանը, արբիտրաժային վարույթի սկզբնական փուլից սկսած և վարույթի ընթացքում, օժտված է իր լուծմանը հանձնված վեճը լուծելու իր իրավասության առկայության մասին, առանց իրավասու դատարանի դիմելու, որոշում կայացնելու իրավունքով<sup>51</sup>: Արբիտրաժային

<sup>51</sup> **Fouchard, Gaillard, Goldman** - On International Commercial Arbitration. Kluwer Law Publishing, 1999, 416, էջ 214: Յամաձայն հեղինակների՝ երբ կողմն առարկում է արբիտրաժային դատարանի իրավասության դեմ՝ հիմքում դնելով հենց արբիտրաժային համաձայնության անվավերությունը, ապա արբիտրաժային դատարանն իրավասու է քննարկելու իր իրավասության մասին հարցը հենվելով հենց «competence - competence» սկզբունքի վրա:

օրենքի 16 հոդվածի 1-ին մասը, մասնավորապես սահմանում է. «Արբիտրաժային տրիբունալը իրավասու է որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ»:

Արբիտրաժային համաձայնության (վերապահման) «ինքնավարությանը» օրենքի ուժով արբիտրաժային տրիբունալին օժտում է արբիտրաժային համաձայնության վավերականության կամ առկայության հարցերը քննելու և լուծելու իրավասությամբ, ընդ որում, այդ հարցերը քննվում և լուծվում են անկախ այն պայմանագրի անվավերության հարցի քննարկումից, որում ներառված է արբիտրաժային վերապահումը կամ որին վերաբերում է արբիտրաժային համաձայնությանը: Այս առումով, Արբիտրաժային օրենքի 16 հոդվածի 1-ին մասը, մասնավորապես, սահմանում է. «Այս նպատակով արբիտրաժային վերապահումը, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մաս, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնություն»:

Արբիտրաժային համաձայնության ինքնավարության սկզբունքի օրենսդրական ամրապնդումը, իրավական հիմք է ստեղծում արբիտրաժային տրիբունալի կողմից անվավեր ճանաչված պայմանագրից բխող վեճի լուծման նկատմամբ արբիտրաժային տրիբունալի իրավասությունը տարածելու համար, պայմանով, իհարկե, որ պայմանագրի անվավերության հիմքը անվավեր չի դարձնում միաժամանակ և արբիտրաժային վերապահումը: Նշված երկու սկզբունքները ամրապնդվեցին և համընդհանուր ճանաչում գտան 20-րդ դարի երկրորդ կեսին: Դրանց էվոլյուցիային և պատմականորեն կայացմանը նպաստեցին Ժնևի Կոնվենցիան (հոդված V), ՄԱԿ-ի 1976թ թիվ 31/98 բանաձևով հաստատված UNCITRAL-ի Արբիտրաժային կանոնները (հոդված 21 մաս 2) և Մոդելային օրենքը<sup>52</sup>:

Արբիտրաժային դատարանի իրավասության հարցը քննարկելիս, անհրաժեշտ ենք համարում կարճ անդրադարձ կատարել նաև «արբիտրաժ», «արբիտրաժային դատարան» և «արբիտրաժային

<sup>52</sup> Տե՛ս **Holtzmann, Howard M.** A guide to the UNCITRAL Model Law on International Commercial Arbitration: legislative history and commentary. Kluwer Law and Taxation Publishers. Deventer, the Netherlands, 1989, 1994, էջեր 478 – 530:

տրիբունալ» հասկացողություններին: Յեռավոր 2000 թվականին, տողերիս հեղինակին բախտ է վիճակվել որպես Քաղաքականության և Իրավունքի Խորհրդատվական Չայ-Եվրոպական Կենտրոնի (AEPLAC) փորձագետ «Միջևորդ դատարանների և միջևորդ դատավարության մասին» օրենքի բարեփոխման շրջանակներում աշխատելու Երևան հրավիրված քաղաքացիական և արբիտրաժային իրավունքի ռահվիրաներ Միխայիլ Գրիգորևիչ Ռոգենբերգի և Ալեքսանդր Սերգեյևիչ Կոմարովի հետ: Վերջիններիս հետ մասնավորապես քննարկվել է «արբիտրաժ» եզրույթի նշանակությունը: Ըստ նշված ականավոր մասնագետների՝ արբիտրաժ թե՛ վեճը լուծող մարմին է, թե՛ վարույթ կամ գործընթաց: Ավելին, բացահայտելով արբիտրաժի իրավական բնույթը ժամանակակից անվանի գիտնական դատավարագետ Օլեգ Յուրևիչ Սկվորցովն այն նկարագրում է երեք իմաստով. Քաղաքացիական իրավունքների պաշտպանության միջոց, իրավական վեճի արբիտրաժային քննությունը կազմակերպող մարմին, և արբիտրաժային դատարանի կոնկրետ կազմ, որի կողմից քննվել է իր լուծմանը փոխանցված վեճը<sup>53</sup>: Մինչդեռ, Արբիտրաժային օրենքը նեղացրել է արբիտրաժ հասկացողությունը, այն սահմանելով որպես «ցանկացած արբիտրաժ, անկախ դրա՝ մշտապես գործող արբիտրաժային հաստատության կողմից կամ առանց նման հաստատության իրականացվելու հանգամանքի»: Ավելին, նույն օրենքը, սահմանելով «արբիտրաժային տրիբունալ» հասկացողությունը՝ որպես միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ, շրջանցել է «արբիտրաժային դատարան» հասկացողությունը և այն չի սահմանել, ինչն արդարացված համարել չի կարելի: Արբիտրաժային օրենքում «արբիտրաժային դատարան» եզրույթը գործածված է միայն 6-րդ գլխի վերնագրում, այն է «Արբիտրաժային դատարանի վճռի կայացումը և վարույթի ավարտը»: Դրանից առաջ և հետո, օրենքը խոսում է միմիայն արբիտրաժային տրիբունալի իրավունքների և պարտականությունների մասին: Չարց է ծագում՝ ո՞րն է այդ դեպքում օրենքի 6-րդ գլխի վերնագրում «արբիտրաժային դատարան» եզրույթի օգտագործման նպատակը: Ավելին՝ «արբիտրաժային տրիբունալը», կոնկրետ գործ քննելիս, հանդես է գալիս որպես

<sup>53</sup> Ст'я Международный коммерческий арбитраж: Учебник/под ред. В. А. Мусина, О. Ю. Скворцова. – СПб. 2012, 496 с., էջ 19:

արբիտրաժային դատարան, իսկ միանձնյա կամ կոլեգիալ կազմը տվյալ դեպքում հանդիսանում է արբիտրաժային դատարանի կազմ: Այս հասկացությունը չպետք է շփոթել մշտապես գործող արբիտրաժային դատարան – հաստատության հասկացության հետ: Աշխարհի հեղինակավոր արբիտրաժային դատարան – հաստատությունները արբիտրաժային վեճեր չեն քննում: Նույն սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ ԱԱՊ արբիտրաժային դատարանի կանոնակարգում: Արբիտրաժային հաստատությունների գլխավոր գործառնությունը արբիտրաժային վեճի պատշաճ վարչարարության ապահովումն է իր քարտուղարության կամ համանման մարմնի միջոցով: Այլ գործառնությունների շարքին են դասվում նաև արբիտրաժի անցկացման համար պայմանների ապահովումը, արբիտրների նշանակմանն աջակցելու (կանոնակարգով նախատեսված դեպքերում), նրանց վարձատրության հարցերի կազմակերպումը, արբիտրաժային վճիռների բնօրինակների և պատճենների հաստատումը, արբիտրաժային պրակտիկայի ամփոփումը, գիտական, ուսուցողական ծրագրերի իրականացումը: Այլ խոսքերով ասած, արբիտրաժային հաստատությունները հանդիսանում են արբիտրաժային վեճերի լուծման հարթակներ, իսկ կոնկրետ վեճերը լուծվում են հատուկ դրանց լուծման համար ստեղծված արբիտրաժային դատարանների (ներկայիս մոտեցմամբ՝ «տրիբունալների») կողմից՝ միանձնյա կամ կոլեգիալ կազմով: Նույնը վերաբերում է ad hoc արբիտրաժային դատարաններին. դրանք հանդիսանում են կոնկրետ վեճը լուծելու համար ստեղծված արբիտրաժային դատարաններ: Այս հարցի ճիշտ ըմբռնումը կարևոր է այն նպատակով, որպեսզի հնարավոր լինի ճշգրտորեն որոշել այն մարմնին, որն իրավասու է կոնկրետ վեճը լուծելու համար իր իրավասության վերաբերյալ որոշում կայացնել: Ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարանների կանոններով սահմանված դեպքերում, արբիտրաժային հաստատությունը, հայցը ստանալով, կարող է սկզբնական իրավասության հարցը լուծել ինքնուրույն: Այս հարցն արդիական է Արբիտրաժային օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, երբ արբիտրաժային համաձայնությունը կնքված է համարվում հայցի ու պատասխանի վերաբերյալ հաղորդումների

փոխանակմամբ, սակայն կոնկրետ վեճը լուծելու վերաբերյալ իրավասության հարցը որոշելու վերջնական իրավունքը պատկանում է այն լուծելու համար կազմավորված արբիտրաժային դատարանին<sup>54</sup>:

Այսպիսով, կոնկրետ, արբիտրաժային գործը քննելու համար ձևավորված արբիտրաժային դատարանն իրավասու է իր իրավասության մասին որոշում կայացնել, որպիսի հարցի քննարկումը ներառում է նաև արբիտրաժային համաձայնության առկայության և վավերականության հարցերի պարզում: Մինչդեռ, կարևոր է նշել, որ արբիտրաժային դատարանը, արբիտրաժային վերապահում պարունակող պայմանագրի վավերականության հարցը պարզելիս, պետք է ելնի իր իրավասության սահմանափակող մեկնաբանություններից: Ըստ այդմ, արբիտրաժային դատարանը սեփական նախաձեռնությամբ պետք է պարզի միայն արբիտրաժային համաձայնության առկայությունը և դրա առոչնչությունը: Վավերականության հարցի պարզման մաս կազմող վիճահարույցության պարզումն արբիտրաժային դատարանը պետք է իրականացնի միայն վեճի կողմի (կողմերի) նախաձեռնությամբ՝ պայմանագրի վիճահարույցության տեսանկյունից դրա անվավերության հարցը բարձրացնելու դեպքում: Ինչ վերաբերում է Արբիտրաժային օրենքի 16-րդ հոդվածի հետևյալ դրույթին, համաձայն որի «Պայմանագրի ուժը կորցրած լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումը չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության», ապա, կրկին ստիպված ենք փաստել, որ գործ ունենք Մոդելային օրենքի սխալ թարգմանության հետ, ինչը կարող է տարբեր հետևանքներ ունենալ արբիտրաժային դատարանի իրավասության հարցի որոշման վրա: Մոդելային օրենքի անգլերեն բնօրինակում օգտագործված է «null and void» եզրույթը, ինչը թարգմաբար նշանակում է «առոչնչ»: Մինչդեռ հայրենական արբիտրաժային օրենքում նշված եզրույթը թարգմանված է որպես «պայմանագրի ուժը կորցրած»: Այս

<sup>54</sup> Այս առումով, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքից «տրիբունալ» փոխառնված եզրույթը կարելի է հանել, դրա փոխարեն օգտագործելով «մշտապես գործող արբիտրաժային մարմին», «արբիտրաժային դատարան՝ միանձնյակամ կող եզիալ կազմով»:

մոտեցումն արդարացված համարել չի կարելի՝ հետևյալ պատճառաբանությամբ: Պայմանագիրն իր ուժը կարող է կորցնել ժամկետի ավարտմամբ դադարելու, կողմերի փոխադարձ համաձայնությամբ այն դադարեցնելու, պարտավորությունների կատարման և այլ դեպքերում: Վերևում մենք քննարկեցինք, որ արբիտրաժային վերապահման ձևով կնքված արբիտրաժային համաձայնություններն իրենց ուժը պահպանում են նաև հիմնական պայմանագրի դադարումից հետո: Մյուս կողմից, եթե նույնիսկ օրենսդիրը «պայմանագրի ուժը կորցրած» արտահայտության տակ նկատի է ունեցել դրանվավերության հետևանքով ուժը կորցնելը, միևնույնն է, տվյալ արտահայտությամբ արբիտրաժային դատարանի վրա դրվել է լրացուցիչ բեռ: Դա կայանում է նրանում, որ պայմանագրի ուժը կորցրած կամ անվավեր լինելու փաստը հաստատելը, ենթադրում է արբիտրաժային դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ պայմանագրի վիճահարույցության և գործողության դադարման հարց բարձրացնելու իրավասություն, այն պարագայում, երբ վեճի կողմերը նման հայտարարություններով հանդես չեն գալիս: Կարծում ենք, որ նշված դրույթի ճիշտ թարգմանությունը կօգնի խուսափել տվյալ հարցում արբիտրաժային դատարանի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների տարընթերցումից: Միևնույն ժամանակ, արբիտրաժային դատարանի համար արբիտրաժային վերապահումների անվավերության հարցը սեփական նախաձեռնությամբ պարզելու պարտականությունն սահմանելիս, պետք է նկատի ունենալ, որ այդ պարտականությունը պետք է տարածել արբիտրաժային վերապահման սոսկ առջնչության հարցի լուծման վրա: Հակառակ պարագայում, կարող է տեղի ունենալ վեճի կողմերի նկատմամբ հավասար մոտեցման և իրենց դատավարական իրավունքներից օգտվելու տնօրինչականության սկզբունքի խախտում: Նշված սկզբունքն իր արտացոլումն է գտել Արբիտրաժային օրենքի 18-րդ հոդվածում:

Վերոհիշյալը նկատի ունենալով՝ առաջարկվում է Արբիտրաժային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արբիտրաժային դատարանն իրավասու է,



իսկ արբիտրաժային համաձայնությանը վիճարկելու դեպքում պարտավոր է առաջնահերթ քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այս նպատակով արբիտրաժային վերապահումը, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մաս, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնության: Պայմանագրի առջին և լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումն ինքնին կամ օրենքի ուժով չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության»: Նշված փոփոխությանը կնպաստի նաև ԵԿԴ/1910/02/13 գործով Յայաստանի Յանրապետության Վճռաբեկ դատարանի արտահայտած որոշ դիրքորոշումների<sup>55</sup> վերանայմանը՝ դատական պրակտիկան դարձնելով ավելի արբիտրաժամետ, ինչը համահունչ է միջազգային փորձին: Արբիտրաժային համաձայնության առկայության պայմաններում հայցն առանց քննության թողնելու դատարանի պարտականությանը հանդիսանում է «competence - competence» և արբիտրաժային համաձայնության ինքնավարության սկզբունքների դատավարական երաշխիքը: Որպես սույն պարագրաֆի ամփոփում, կարելի է մեջբերել արբիտրաժային իրավունքի հայտնի տեսաբան և պրակտիկ Լեբեդևի հետևյալ միտքը. «մոդելային օրենքի 16-րդ հոդվածին վիճակված էր դառնալ միջազգային առևտրային արբիտրաժի ռեժիմի համընդհանուր ունիֆիկացման գործում «միջազգային չափանիշի» հիմք<sup>56</sup>»:

**§3. Արբիտրաժային վճռի վիճարկման՝ առարկայական ենթակայությանը (արբիտրաժային) և հանրային կարգին հակասելու հիմքերը**

Առարկայական ենթակայության հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկման հարցը քննարկելիս անհրաժեշտ է նախևառաջ

<sup>55</sup> Մասնավորապես, նշված գործով ՅՅ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ դիրքորոշումները. «գործող իրավակարգավորման համաձայն՝ վիճարկույց գործարքը կամ դրամի մասն անվավեր ճանաչելու պահանջը ենթակա է քննության բացառապես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանի և վճռաբեկ դատարանի կողմից»:

<sup>56</sup> Տե՛ս **Лебедев С.Н.** Международный коммерческий арбитраж: компетенция арбитров и соглашение сторон, էջ 41:

անդրադառնալ սույն հարցի օրենսդրական կարգավորմանը: Այսպես, ՀՀ ՔԴՕ «քաղաքացիական գործերի առարկայական ընդդատությունը» վերնագիրը կրող 2-րդ գլխում ներառված «Վեճի հանձնումը արբիտրաժային տրիբունալի լուծմանը» վերնագրով ՀՀ ՔԴՕ 18-րդ հոդվածը սահմանում է. «Դատարանին ընդդատյա վեճը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը կողմերի համաձայնությամբ կարող է հանձնվել արբիտրաժային տրիբունալի լուծմանը»: Մինևս ժամանակ, տվյալ սահմանումը չի նախատեսում արբիտրաժային դատարանի լուծմանը ՀՀ օրենքներով որոշակի կատեգորիայի գործեր չվերապահելու հնարավորությունը: Նշված բացը լրացնելու է գալիս Արբիտրաժային օրենքի «Ընդհանուր սկզբունքները և գործողության ոլորտը» վերնագրով 1-ին հոդվածը, որի 4-րդ մասը սահմանում է «Սույն օրենքի գործողությունը չի բացառում Հայաստանի Հանրապետության մեկ այլ օրենքի գործողություն, որի համաձայն՝ որոշակի վեճեր չեն կարող հանձնվել արբիտրաժի լուծմանը կամ կարող են հանձնվել արբիտրաժի լուծմանը միայն այն դրույթներին համապատասխան, որոնք սահմանված չեն սույն օրենքով»: Ելնելով նշված հոդվածի տրամաբանությունից, այն վեճերը, որոնք այլ օրենքների ուժով ենթակա չեն արբիտրաժի լուծմանը, պետք է սահմանվեն այդ օրենքներով: Սակայն, օրենսդիրը որդեգրել է այլ մոտեցում, համաձայն որի, տարբեր օրենքներում նշված են այն դատարանները, որոնց լուծմանը հանձնվում են որոշակի կատեգորիայի վեճեր: Այսպես, օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքը, սահմանելով օրենսգրքի գործողության ոլորտը, առանձնացնում է այն կատեգորիայի գործերը, որոնք լուծվում են ՀՀ վարչական դատարանում: Տվյալ դեպքում քննության առարկա է հանդիսանում ոչ թե քաղաքացիական իրավունքի (լայն իմաստով) մասին վեճը, այլ կոնկրետ պաշտոնատար անձանց, պետական և այլ մարմինների գործողությունների իրավաչափությունը, օրինականությունը<sup>57</sup>: Սնանկության մասին ՀՀ օրենքի «Սնանկության գործերի առարկայական ընդդատությունը» վերնագիրը կրող 4-րդ հոդվածը ևս սահմանում է,

<sup>57</sup> Ст' у Лесницкая Л.Ф. Рассмотрение в суде жалоб на решения, действия (или бездействие), нарушающие права и свободы граждан // Законодательство и экономика. 1997. N 9/10, էջ 53:

որ սնանկության գործերի վարումն իրականացվում է ընդհանուր իրավասության դատարաններում: Հաշվի առնելով, որ սնանկության հիմքերը կարող են լինել ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային-իրավական պահանջները և պահանջը կարող է բխել օրենքով սահմանված հարկեր, տուրքեր կամ պարտադիր այլ վճարներ վճարելու պարտականի պարտավորությունից, ինչպես նաև այն հանգամանքը, որ սնանկության գործին կարող են ներգրավվել անորոշ թվով մասնավոր և հանրային իրավունքի սուբյեկտ հանդիսացող անձիք, որոնց պահանջների բավարարման հերթականությունը սահմանված է օրենքով, իսկ սնանկ ճանաչված անձի գույքի նկատմամբ կարող են կիրառվել հարկադրանքի միջոցներ. այլ են նաև սնանկության նպատակներն ու հետևանքները, կարելի է վստահորեն պնդել, որ սնանկության հետկապված վեճերը դուրս են արբիտրաժի կարգավորման ոլորտից և արբիտրների իրավասությունից:

Հաշվի առնելով Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-ին մասի 2-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ա) ենթակետերի կարգավորումները, ըստ որոնց դատարանը կարող է չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը, եթե պարզի, որ «համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակա չէ լուծման արբիտրաժի կողմից», կարելի է եզրակացնել, որ վիճարկման սույն հիմքին անդրադառնալու համար կամ վիճարկող կողմը կամ դատարանը պետք է համարի վեճի առարկան՝ ՀՀ օրենսդրությամբ այն արբիտրաժի քննությանը հանձնելու իրավունքի հետ: Այսինքն, վճռի վիճարկման վարույթում վեճն արբիտրաժի կողմից լուծմանը ենթակա չլինելու հիմքին հղում կատարելը կարելի է համարել հանրային կարգի տեսությանը կատարվող հղում<sup>58</sup>: Ասվածի ճշմարտությունն ամրապնդվում է մասնավորապես Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի լույսի ներքո, երբ, նշված հիմքով, իրավասու դատարանը կարող է մերժել օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը ՀՀ-ում: Օտարերկրյա արբիտրաժային դատարանում վեճը վարույթ ընդունելիս, արբիտրաժային դատարանը՝ լուծելով իր

<sup>58</sup> Տե՛ս **Карабельников Б.Р.** նշվ. աշխ. էջ 157:

իրավասության հարցը, կարող է հիմնվել վեճի քննության վայրի օրենսդրության վրա, համաձայն որի, որոշակի կատեգորիայի գործեր կարող են հանդիսանալ արբիտրաժային քննության առարկա: Ասվածը, սակայն, չի կաշկանդի ՅՅ իրավասու դատարանին՝ մերժելու օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճռի ճանաչումը և կատարումը Յայաստանում, եթե իրավասու դատարանը պարզի, որ տվյալ կատեգորիայի վեճը ՅՅ օրենսդրության համաձայն չի կարող ենթակալի նել արբիտրաժի լուծմանը: Յետևաբար, այս հիմքի առկայությունը կամ բացակայությունը պարզելիս, դատարանը պետք է անդրադառնա ՅՅ օրենսդրության այն նորմերին, որոնք կամ ուղղակիորեն արգելում են որոշակի կատեգորիայի գործերի լուծումն արբիտրաժային դատարանին հանձնելը կամ դրանց լուծման համար սահմանում են կոնկրետ դատարան:

**Արբիտրաժային վճիռների վիճարկումը՝ հանրային կարգին հակասելու հիմքերով:** Յանրային կարգը, որին հղում է պարունակված 34-րդ հոդվածի 2-ին մասի 2-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետերում, իր բացվածքն է գտել ՅՅ ՔՕ 1258-րդ հոդվածում, համաձայն որի, հանրային կարգ է համարվում իրավակարգի հիմունքները: Ինչ վերաբերում է «իրավակարգի հիմունքներ» հասկացությանը, ապա այն իր տեսական, բարդ և չափազանց ընդգրկուն բնույթից ելնելով, օրենսդրական հետազատ սահմանում չի ստացել: Յանրային կարգի մասին հղումը ներառված է տարբեր երկրների օրենքներում, սակայն ինչպես և մեր դեպքում, այն մանրամասնաժ չէ: Ինչպես նշում է Մորոզովան, օտարերկրյա իրավունքի կիրառումը հանրային կարգին հակասելու դեպքերը օրենսդրի կողմից սպառիչ կերպով սահմանելու աննպատակահարմարությունը պայմանավորված է նրանով, որ օրենքով անհնար է նախապես կանխորոշել հայրենական և օտարերկրյա իրավունքների միջև կոլիզիայի բոլոր տարբերակները, որոնք պրակտիկայում կարող են ծագել<sup>59</sup>: Յաշվի առնելով տարբեր պետությունների դատարանների կողմից տվյալ հիմքի կիրառման միջազգային փորձը (տողերիս հեղինակին հայտնի

<sup>59</sup> **Морозова Ю.Г.** Оговорка о публичном порядке: причины возникновения // Законодательство, 2000թ N6:

չի սույն հիմքի կիրառմամբ դրական ելքով վիճարկված որևէ գործ ՅՅ-ում<sup>60</sup>) կարելի է եզրակացնել, որ այն որոշվում է յուրովի՝ կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, թեև նկատելի է մոտեցումների նմանության միտում: Նմանությունը, մասնավորապես, ի հայտ է գալիս արբիտրների անկախության և անաչառության, կողմի հիմնարար իրավունքների խախտման կամ արբիտրաժային վճռի կատարման դեպքում դրան տվյալ պետության օրենսդրության (ներառյալ միջազգային պայմանագրերի) հակասության վերաբերյալ դատարանների արտահայտած դիրքորոշումներում: Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության դատարանն, օրինակ, մերժել է արբիտրաժային վճռի կատարումը, գտնելով, որ արբիտրաժային վարույթի ընթացքում խախտվել են կողմի հիմնարար իրավունքները, քանզի արբիտրը թույլ է տվել կողմին ծանոթանալ վարույթում առկա մի փաստաթղթի հետ<sup>61</sup>: Բավարիայի վերաքննիչ դատարանը մերժել է ՌԴ-ում կայացված արբիտրաժային վճռի կատարումը՝ հանրային կարգին հղում կատարելով, քանզի այդ վճիռը կայացվել էր այն բանից հետո, երբ կողմերը հանգել էին հաշտության համաձայնության, որպիսի փաստը թաքցվել էր արբիտրներից<sup>62</sup>:

<sup>60</sup> Թիվ ԵԿԴ/0109/17/15 գործով տողերիս հեղինակը փորձել էր հիմնավորել հանրային կարգի հակասությունը, ելնելով թե՛ արբիտրների անաչառության վիճարկումից, թե՛ այն հանգամանքից, որ արբիտրաժային տրիբունալը ղեկավարվելով ՅՅ ՔԴՕ-ով, այնուամենայնիվ, չէր անդրադարձել գործով իր իսկ նախաձեռնությամբ հայցվորից պահանջած լրացուցիչ ապացույցներին, դրանք չէր հետազոտել ՅՅ ՔԴՕ-ով սահմանված կարգով, որպիսի պայմաններում կայացված վճիռը կհակասեր ՅՅ հանրային կարգին: Հատկանշական է, որ սույն գործով «հանրային կարգ» հասկացությունը դատարանին բացատրելու նպատակով սոսկ, մեր կողմից մեջ էր բերվել ՅՅ ՔՕ 1258-րդ հոդվածը: Անկախ այն հանգամանքից, որ մեր կողմից դատական նիստում հատկապես ընգծվել էր, որ ՅՅ ՔՕ 1258 հոդվածը գործի հետքննության հետկապչուն և այն մատնանշվում է միմիայն «հանրային կարգ» հասկացության միակ նորմատիվ իրավական «բացվածք» դատարանին մատնանշելու համար, ինչը կարող էր նպաստել դատարանին առավել խորը ընթանելու համար «հանրային կարգ հասկացությունը», դատարանն իր որոշման մեջ նշել է, որ «Հիմնավոր չեն նաև ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 1258 հոդվածի հիմքով հանրային կարգը խախտված լինելու վերաբերյալ դիմողի փաստարկները, քանի որ նշված նորմը վերաբերում է օտարերկրյա իրավունքի նորմի կիրառմանը»: Նշված օրինակը վկայում է, որ դատարանի կողմից ճիշտ չի ընկալվել ՅՅ ՔՕ 1258-րդ հոդվածին կատարված հղումը:

<sup>61</sup> Տե՛ս Yearbook Commercial Arbitration. Vol. II, էջ 241:

<sup>62</sup> Yearbook Commercial Arbitration XXIX (2004), էջ 771:

Միջազգային Իրավունքի Ասոցիացիայի 2002թ. Յանվար արականը<sup>63</sup>, ընդհանրացնելով «հանրային կարգ» հասկացությունը, մասնավորապես նշել է, որ ցանկացած պետության հանրային կարգն իր մեջ ներառում է. արդարությանը և բարոյականությանը վերաբերող հիմնարար, համամարդկային սկզբունքները, քաղաքական, սոցիալական և տնտեսական հիմնական շահերի սպասարկման համար նախատեսված կանոնները, որոնք հայտնի են ինչպես lois de polis կամ «հանրային կարգի կանոններ» և այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների առջև իր ստանձնած պարտավորությունները հարգելու՝ պետության պարտականությունը: Յանրային կարգին հակասելու հիմքով արբիտրաժային վճռի վիճարկման հարցը քննելիս, դատարանը թերևս կարող է առաջնորդվել վերոհիշյալ մոտեցումներով: Նշված հիմքով արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումը չունի լայն կիրառում և այն ավելի շուտ բացառություն է հանդիսանում: Ինչպես նշում է Վ. Յովհաննիսյանը. «հանրային կարգին հակասելու հանգամանքն անվերապահորեն ենթադրում է օրենսդրորեն ամրագրված որոշակի իմպերատիվ նորմերի խախտումը, որը հանգեցնում է արբիտրաժային վճռի ճանաչումը կամ կատարումը մերժելուն: Սակայն ամեն իրավական նորմի խախտում է, որ կարող է դրվել հանրային կարգի հակասության հիմքում: Վերոնշյալ նորմերի խախտումն անպայմանորեն հանրային-իրավական հետևանքներ պետք է ունենա: Օրինակ՝ հանրային իրավական հետևանքներ կարող են առաջացնել գործի արդար քննության ապահովմանն ուղղված այնպիսի սկզբունքների խախտումները, ինչպիսիք են մրցակցությունը, մասնավոր հարաբերություններում կամքի ինքնավարությունը և այլն:»<sup>64</sup>:

<sup>63</sup> Յանվար արականի տեքստը հասանելի է համացանցում հետևյալ հասցեով <http://www.ila-hq.org/en/committees/index.cfm/cid/19>

<sup>64</sup> Տե՛ս **Յովհաննիսյան Վ.Վ.**, նշվ. աշխ. էջ 354:

## ԳԼՈՒԽ 2

### §1. ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ ՆԵՐՇ

Արբիտրաժային դատարանի ակտերը վիճարկելու օրենսդրորեն ապահովված իրավունքը հանդիսանում է թե՛ արբիտրաժի նկատմամբ պետական (դատական) վերահսկողության իրականացման և թե՛ քաղաքացիական շրջանառության մասնակիցների (ներառյալ շահագրգիռ անձանց) ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության սահմանադրորեն ամրագրված իրավունքի իրացման ձև: Այս համատեքստում առանձին ուսումնասիրության են արժանի այն իրավական նախադրյալները, որոնք անհրաժեշտ են արբիտրաժային դատարանի ակտի վիճարկման վարույթի իրականացման համար՝ այդ ակտի չեղյալ ճանաչելու պահանջով դատարան դիմելու միջոցով, ինչն իր հերթին լրացուցիչ իրավական երաշխիք է հանդիսանում այս հարաբերություններում սուբյեկտիվ իրավունքների լիարժեք պաշտպանության համար: Իրավաբանական գրականությունում <sup>65</sup> նշված նախադրյալները բաժանված են երեք խմբի, որոնք են օբյեկտայինը, սուբյեկտայինը և ձևականը: Չարկ է նշել, որ արբիտրաժային ակտը չեղյալ ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է այս նախադրյալների միաժամանակյա առկայությունը:

Սույն պարագրաֆում մենք կքննարկենք արբիտրաժային դատարանի ակտը՝ որպես վիճարկման իրավունքի իրականացման հիմնական օբյեկտային նախադրյալ: Մենք կուսումնասիրենք ճանաչման և որպես հետևանք նաև վիճարկման օբյեկտը՝ հստակեցնելով այն ակտերի շրջանակը, որոնք կարող են հանդիսանալ ճանաչման օբյեկտ և սահմանելով այն իրավական պահանջները, որոնց պետք է բավարարի ճանաչման ենթակա արբիտրաժային ակտը՝ Նյու Յորքի կոնվենցիայի և ազգային օրենսդրության մակարդակներով:

<sup>65</sup> Տե՛ս՝ **Յոզիաննիսյան Վ.Վ.**, նշվ. աշխեջ 274:

Վերոհիշյալ նպատակներից ելնելով, անհրաժեշտ է փաստել, որ արբիտրաժային դատարանի ոչ բոլոր ակտերն են ենթակա ճանաչման, հարկադիր կատարման և չեղյալ ճանաչման: Այդ առումով, թե՛ արբիտրաժային իրավունքի գիտության մեջ և թե՛ արակտիկայում, անհրաժեշտ է տարբերակել վիճարկման օբյեկտ հանդիսացող արբիտրաժային դատարանի ակտերը: Ընդհանուր առմամբ, պետք է նկատել, որ արբիտրաժային ակտերի տեսակների վերաբերյալ տերմինաբանությունը հետևողականորեն չի օգտագործվում ո՛չ իրավաբանական գրականությունում, ո՛չ էլ տարաբնույթ իրավական ակտերում: Սակայն ձևավորված թե՛ միջազգային, թե՛ միջարբերկրների ազգային արբիտրաժային հարուստ արակտիկան, ինչպես նաև արբիտրաժային իրավունքին և քաղաքացիական դատավարությանը վերաբերող դոկտրինալ աշխատությունները որոշակի հստակություն և տարբերակում են մտցրել այն հարցում, թե արբիտրաժային դատարանի որ ակտերը կարող են հանդիսանալ վիճարկման օբյեկտ: Ի տարբերություն ՅՅ ՔԴՕ-ի, որի **«Քաղաքացիական գործերով դատական ակտերը»** վերնագիրը կրող 13-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերի սպառիչ տեսակները, «Առևտրային արբիտրաժի մասին» ՅՅ օրենքը նման հստակ իրավակարգավորում չի պարունակում: Ուստի, Արբիտրաժային օրենքի ամբողջական ուսումնասիրությունից և վերլուծությունից միայն կարելի է գալ այն եզրահանգման, որ արբիտրաժային դատարանը կայացնում է վճիռներ և որոշումներ: Նույնը վերաբերում է նաև վեճն ըստ էության լուծելու (ՅՅ ՔԴՕ հոդվ. 130, մաս 1) և գործն ըստ էության չլուծող դատական ակտի կայացման (ՅՅ ՔԴՕ հոդվ. 144, մաս 1) դեպքում համապատասխանաբար «վճիռ» և «որոշում» կայացնելու հարցերի կանոնակարգմանը <sup>66</sup> ՅՅ ՔԴՕ-ում և դրա բացակայությանը ՅՅ արբիտրաժային օրենքում:

Արբիտրաժային ակտերը կարելի է դասակարգել ըստ դատավարագիտությունում լայն ճանաչում գտած մոտեցման,

<sup>66</sup> Ուշագրավ է ՅՅ ՔԴՕ 130 և 144 հոդվածներում օգտագործված «վեճ» և «գործ» եզրույթների արդյունքում առաջացած հակասության մասին Վ. Յոզիանսիսյանի տեսակետը (Տե՛ս **Յոզիանսիսյան Վ. Վ.** Վերաբնություն կարգով դատական ակտերի վերանայման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՅ 2013թ., էջ 434-435):



համաձայն որի արբիտրաժային ակտերը կբաժանվեն գործն ըստ  
 Էուրոյան և ըստ Էուրոյան չլուծող ակտերի: Համաձայն այս  
 դասակարգման գործն ըստ Էուրոյան և չլուծող ակտ է համարվում միայն  
 վճիռը<sup>67</sup>: Ի տարբերություն վճռի, որոշումներն այն արբիտրաժային  
 ակտերն են, որոնք ընդունվում կամ կայացվում են արբիտրաժային,  
 այսինքն վարույթային և ընթացակարգային հարցերի և լուծման  
 համար և ըստ Էուրոյան գործ չեն և լուծում՝ վիճելի նյութական  
 իրավահարաբերություններ չեն կարգավորում: Դա է վկայում ՀՀ  
 արբիտրաժային օրենքի մասնավորապես 9, 13, 16<sup>68</sup>, 17, 19, 20, 22, 24, 29 և  
 32-րդ հոդվածների վերլուծությունը: Դատավարագիտական առումով  
 միմյանց առավել մոտ կանգնած՝ արբիտրաժային և քաղաքացիական  
 դատավարության իրավունքների միջև գուցա հեռու անցկացնելու  
 դեպքում ևս կարելի է նկատել, որ արբիտրաժային որոշման  
 վերոհիշյալ դասակարգումը համընկնում է թե՛ ՀՀ ՔԴՕ 144 հոդվածի  
 1-ին մասի տրամաբանության և թե՛ քաղաքացիական  
 դատավարագիտության նույն տեղ գտած տեսակետների հետ<sup>69</sup>: Ավելին,  
 ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ արբիտրաժային  
 օրենքի 35 – 37 հոդվածների ուժով բացառապես արբիտրաժային  
 տրիբունալի վճիռն է հանդիսանում վիճարկման, ճանաչման,  
 հարկադիր կատարման, ինչպես նաև ճանաչումն ու հարկադիր  
 կատարումը մերժելու օբյեկտային նախադրյալ: Ընդ որում, նույն  
 օրենքի 34-րդ հոդվածը, սահմանելով արբիտրաժային տրիբունալի

<sup>67</sup> Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.**, նշվ. աշխ. էջ 452 -457: **Մեղրյան Ս. Գ.** Առաջին ատյանի  
 դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը: Երևանի պետ. համալսարան:  
 Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

<sup>68</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասում ևս առկա  
 է հակասություն, քանզի սահմանելով, որ «Սույն հոդվածի 2-րդ մասում նշված  
 հայտարարության [նկատի է ունեցվում արբիտրաժային տրիբունալի  
 իրավասության բացակայության վերաբերյալ հայտարարությունը – ծանոթ.  
 հեղինակի] վերաբերյալ **արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել  
 որոշում**՝ կամ որպես նախնական բնույթ ունեցող հարցի վերաբերյալ, կամ  
 անդրադառնալ դրան **գործն ըստ Էուրոյան և չլուծող որոշման մեջ** [ընդգծումը՝  
 հեղինակի]: «Գործն ըստ Էուրոյան և չլուծող որոշում» արտահայտությունն ինքնին  
 սխալ է, քանզի «որոշում» եզրույթի փոխարեն պետք է օգտագործել «վճիռ»  
 եզրույթը:

<sup>69</sup> Հայրենի դատավարագետներից մասնավորապես **Ս.Գ. Մեղրյանը** նշում է, որ ի  
 տարբերություն գործն ըստ Էուրոյան և չլուծող ակտերի, որոշումներ են կոչվում  
 այն դատական ակտերը, որոնք կայացվում են ոչ թե գործն ըստ Էուրոյան և չլուծելու,  
 այլ քաղաքացիական գործի հարուցման, դատական բնության և վճիռների  
 կատարման ընթացքում ծագող միջանկյալ դատավարական բնույթի հարցերով:  
 (Տե՛ս **Մեղրյան Ս. Գ.** նշվ. աշխ. էջ 11-27:)

վճռի վիճարկման դեպքերը, իր 2-րդ մասի 1-ին կետի (գ) ենթակետում առկա եզրույթաբանական խառնաշփոթի հետևանքով հակասության մեջ է մտել թե՛ ՀՀ արբիտրաժային օրենքում առկա արբիտրաժային ակտերի դասակարգման տրամաբանության և թե՛ ինքն իր հետ, սահմանելով, որ, եթե վճիռ է կայացվել այնպիսի վեճի կապակցությամբ, որը նախատեսված չէր արբիտրաժային համաձայնության մեջ կամ չի համապատասխանում նրա պայմաններին կամ որոշում է այնպիսի հարցեր, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, պայմանով սակայն, որ եթե արբիտրաժային համաձայնության մեջ նախատեսված մասով կայացված որոշումները կարող են առանձնացվել այն որոշումներից, որոնք դուրս են արբիտրաժային համաձայնության սահմաններից, ապա կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժային տրիբունալի վճռի միայն այն մասը, որը ներառում է արբիտրաժային համաձայնության մեջ չնախատեսված հարցեր: Ճիշտ է, վճիռը պարունակում է վեճի քննության ընթացքում լուծման ենթակա հարցերի վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի իրավական գնահատականները, դատողություններն ու եզրահանգումները<sup>70</sup>, սակայն դրանք հանդիսանում են ոչ թե առանձին որոշումներ, այլ ամբողջական վճռի մասեր: Այսպիսով, օրենսդիրն արբիտրաժային տրիբունալի՝ վճռում արտահայտված վերջնական եզրահանգումները և հրամայական դատողություններն առանց բավարար հիմնավորման փոխարինել է «որոշումներ» եզրույթի հետ, ինչն էլ հակասության առիթ է հանդիսացել: Գտնում ենք, որ հայրենի դատավարագիտությանը և իրավական համակարգին առավել համահունչ կլիներ, եթե իրավասու դատարանն օժտվեր արբիտրաժային տրիբունալի վճիռը մասնակիորեն չեղյալ ճանաչելու իրավունքով՝ հաշվի առնելով արբիտրաժային համաձայնության մեջ նախատեսված հարցերի շրջանակը:

Խնդրի առավել ընդգրկուն ուսումնասիրության համար, կարելի է անդրադառնալ նաև դրա լուծման շուրջ ծավալված

<sup>70</sup> Բացառությամբ, երբ կողմերը համաձայնվել են, որ վճռի հիմքում ընկած հանգամանքները չպետք է նշվեն վճռում (ՀՀ արբիտրաժային օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն):

միջազգային փորձին: Այս առումով առավել ուշագրավ է Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) 1984թ. հունիս-հունիս ամիսներին կայացած Միջազգային պայմանագրային պրակտիկայի գծով աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) 17-րդ նստաշրջանի կողմից նույն տարի ավելի վաղ կայացած իր իսկ՝ 7-րդ նստաշրջանի աշխատանքների արդյունքների վերաբերյալ զեկուլյցը: Սույն զեկուլյցի 192-194 կետերը պարունակում են խիստ ուշագրավ տեղեկություններ, այդ իսկ պատճառով նշված կետերը մեջբերում ենք ամբողջությամբ.

«192. Աշխատանքային խումբը եկավ համաձայնության, որ ցանկալի կլիներ Մոդելային օրենքով<sup>71</sup> սահմանել «վճիռ»<sup>72</sup> եզրույթի հասկացությունը: «Վճիռ» հասկացության սահմանումը կարևորվում է մասնավորապես նրանով, որ դահնարավորություն կտար որոշելու, թե Մոդելային օրենքի 34-րդ<sup>73</sup> հոդվածի համաձայն, որ որոշումները կարող են լինել չեղյալ ճանաչման առարկա: Աշխատանքային խումբը դիտարկեց հետևյալ առաջարկը. «վճիռ» նշանակում է վերջնական վճիռ, որը լուծում է արբիտրաժային տրիբունալին հանձնված բոլոր վեճերը<sup>74</sup>, ինչպես նաև արբիտրաժային տրիբունալի որևէ այլ որոշում, որը վերջնականապես ըստ էության լուծում է որևէ վեճ կամ իր իրավասության հարց կամ ընթացակարգային որևէ այլ հարց, վերջին դեպքում<sup>75</sup>, սակայն, սույն դրույթը կգործի միայն եթե արբիտրաժային տրիբունալը ամրագրի իր որոշումը որպես վճիռ:

193. Ի հեճուկս նրա, որ վերոհիշյալ սահմանման առաջին մասը («ըստ էության լուծում է որևէ վեճ» արտահայտությունը ներառյալ) լայն աջակցության արժանացավ Աշխատանքային խմբի կողմից, դրա երկրորդ մասի վերաբերյալ հնչեցին լուրջ մտավախություններ, մասնավորապես, ընթացակարգային հարցերի շուրջ կայացվող որոշումների մասով:

194. Աշխատանքային խումբը նկատի առավ, որ «վճիռ» եզրույթի սահմանումը կունենար կարևոր ազդեցություն Մոդելային օրենքի

<sup>71</sup> Նկատի է ունեցվում Միջազգային առևտրային արբիտրաժի մասին օրենքը:

<sup>72</sup> Անգլերեն բնագրում օգտագործված է «award» բառը:

<sup>73</sup> Համընկնում է Առևտրային արբիտրաժի մասին ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի հետ:

<sup>74</sup> Անգլերեն բնագրում օգտագործված է «issue» բառը, որը տվյալ ենթատեքստում իմաստային առումով մոտ է «տարածայնության» բառին, սակայն առավել ճիշտ ընկալման համար օգտագործել ենք դրա «վեճ» հոմանիշը:

<sup>75</sup> Վերաբերում է ընթացակարգային հարցի շուրջ որոշման կայացմանը:

մի շարք դրույթների վրան առանձնահատուկ նշանակություն են 34 և 16 հոդվածներում քննարկվող հարցերի համար: Վերոհիշյալ բարդ հարցերի խորը ուսումնասիրության համար բավարար ժամանակի բացակայությամբ պայմանավորված, Աշխատանքային հումբը որոշեց իր կողմից ընդունվելիք Մոդելային օրենքում «վճիռ» հասկացությունը չներառել և խնդրել Հանձնաժողովին<sup>76</sup> անդրադառնալ սույն խնդրին:»:

Այսպիսով «վճիռ» հասկացությունը դուրս մնաց Մոդելային օրենքից և որպես հետևանք՝ նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքից: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի բառացի վերլուծությունից բխում է, որ քաղաքացիական դատավարության կարգով վիճարկման օբյեկտ կարող է հանդիսանալ արբիտրաժային վճիռը: Թեև «վճիռ» և «որոշում» եզրույթները երբեմն թյուրիմացաբար միմյանց փոխարինում են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի տեքստում, մասնավորապես 16-րդ հոդվածի 3-րդ մասում, իսկ Կոնվենցիայի պաշտոնական հայերեն թարգմանության տեքստում իսպառ բացակայում է «վճիռ» եզրույթը և ամենուր գործածված է «որոշում» եզրույթը (ինչը թերևս պայմանավորված է բնագրում «award» բառի գործածմամբ, որն ըստ կոնկրետ ենթատեքստի նշանակում է կամ «վճիռ» կամ «որոշում»), կարելի է փաստել, որ ըստ Մոդելային օրենքի հեղինակների տրամաբանության՝ վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալ արբիտրաժային ակտը պետք է լինի առնվազն ավարտուն և վերջնական՝ դրանում նշված հարցի լուծման տեսանկյունից, այլ կերպ ասած՝ օժտված լինի *res judicata* ուժով: Հայրենի դատավարագետներից մասնավորապես Վ. Հովհաննիսյանի բնորոշմամբ. «ամեն դեպքում, արբիտրաժային դատարանի վերջնական ակտերը վեճն ըստ էության լուծող, ինչպես նաև վեճը չլուծող, սակայն վարույթի ընթացքում փոփոխման ոչ ենթակա կամ արբիտրաժային իրավահարաբերությունների դադարման համար հիմք հանդիսացող որոշումներ են, որոնցում արտահայտված են արբիտրի (արբիտրների) եզրահանգումներն ու հրամայական դատողությունները՝ գործի քննության ընթացքում բացահայտված փաստերի,

<sup>76</sup> Նկատի է ունեցվում UNCITRAL-ը:

իրավահարաբերությունների և վարույթի հետագա ընթացքի վրա ազդող այլ հանգամանքների վերաբերյալ <sup>77</sup> »: Այսինքն, արբիտրաժային վճիռը՝ գործն ըստ էության լուծող, արբիտրաժային վեճի կողմ հանդիսացող քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված, ինչպես նաև իրավունքների վրաներգործող ակտն է: Ընդ որում, արբիտրաժային տրիբունալի վճիռը վերջնականորեն ապահովում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը՝ վիճելի նյութական իրավահարաբերություններն անմիջականորեն կարգավորելու և գործն ըստ էության լուծելու միջոցով: Կարելի է փաստել, որ արբիտրաժային վճիռը ստեղծագործ և իրավակիրառ գործունեության արդյունք է, քանզի վճռի հիմքում ընկած է կողմերի ազատ կամարտահայտությամբ ընտրված կիրառման ենթակա իրավունքը (իսկ այդպիսին ընտրված չլինելու դեպքում տրիբունալի կողմից որոշված իրավունքը) կամ էլ արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա, կամ որպես հաշտարար միջնորդ վեճը լուծելու՝ արբիտրաժային տրիբունալի լիազորությունը:

Վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալներն առանձնացնելու համար՝ կարևոր է նաև պատասխանել այն հարցին, թե ո՞ր ակտերը կարող են հանդիսանալ ճանաչման օբյեկտ: Այս հարցի պատասխանը զետեղված է Արբիտրաժային օրենքի 35-րդ հոդվածում, որը որպես ճանաչման օբյեկտ է սահմանում արբիտրաժային տրիբունալի վճիռը: Համաձայն համընդհանուր ճանաչում գտած մոտեցման, արբիտրաժային տրիբունալի վճիռն արդարադատության ակտ չէ, այլ ընդամենը հանդիսանում է քաղաքացիական հասարակության ինստիտուտ համարվող վեճերի լուծման այլ ընտրանքային եղանակ հանդիսացող առևտրային արբիտրաժի շրջանակներում՝ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված ակտ<sup>78</sup>: Արբիտրաժային տրիբունալի վճիռն *անհատական բնույթի*

<sup>77</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշվ. աշխ. էջ. 214-215:

<sup>78</sup> Այս համընդհանուր մոտեցումից տարբերվող ուշագրավ վերլուծությամբ է հանդես եկել ՌԴ Սահմանադրական դատարանի (ՍԴ) անդամ Վ.Վ. Առանովսկին իր հատուկ կարծիքում, որը նահայտնել է ՌԴ ՍԴ 2011թ. մայիսի 26-ի թիվ 10-ՈՒ որոշման առնչությամբ: Տե՛ս [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_114541/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_114541/)

իրավական ակտ է, քանզի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի համաձայն՝ անհատական ակտը համապատասխան մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ՝ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ... համար: Արբիտրաժային տրիբունալի վճիռները կայացվում են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով արբիտրաժային տրիբունալին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում: Ընդ որում, ի տարբերություն դատարանի, արբիտրաժի կողմերին՝ օրենքով սահմանված դեպքերում վերապահված է արբիտրաժային համաձայնությունը ամբ ներառել ցանկացած արբիտրաժային կանոններ: Պրակտիկայում, արբիտրաժային համաձայնության կողմերը, որպես կանոն, հղում են կատարում որևէ արբիտրաժային հաստատության կանոնակարգին՝ որպես վեճերի կարգավորման ընթացակարգը կարգավորող փաստաթղթի: Արբիտրաժային վճռով սահմանվում են վիճելի իրավահարաբերությունների սուբյեկտների այնպիսի իրավունքներ ու պարտականություններ, որոնք ենթակա են պարտադիր ճանաչման, պաշտպանության և կատարման: Այն դեպքերում, երբ արբիտրաժային համաձայնությամբ նախատեսված է լինում կոնկրետ վեճը լուծելու համար ստեղծված արբիտրաժային դատարան (ad hoc), կարող է խնդրահարույց թվալ այն դեպքում, որ ad hoc կայացված վճիռն անհատական ակտ է, քանզի ad hoc դատարանները պրակտիկայում չեն հանդիսանում իրավաբանական անձ և ոչ էլ հիմնարկ: Այս կապակցությամբ, անհրաժեշտ է նշել, որ թե՛ ինստիտուցիոնալ և թե՛ կոնկրետ վեճը լուծելու համար նախատեսված արբիտրաժային դատարանների ակտերի առումով չկա օրենսդրական տարբերակված մոտեցում: Այդ ակտերն առաջացնում են նույն իրավական հետևանքները, հատկապես, երբ պետությունը՝ ի դեմս իրավասու դատարանի, ճանաչում է արբիտրաժային վճիռները, դրանք ձեռք են բերում իրավական ակտին՝ ավելի կոնկրետ դատական

ակտին բնորոշ հատկանիշներ, քանզի ապահովված են լինում նաև պետության հեղինակության ամբ և պետական հարկադրանքի ուժով<sup>79</sup>:

Իրավաբանական գրականության մեջ խնդրահարույց է մնում հետևյալ հարցը, թե արդյո՞ք արբիտրաժային դատարանի կայացրած միջանկյալ ակտը հանդիսանում է վիճարկման օբյեկտ: ՄԱԿ-ի Միջազգային Առևտրային Իրավունքի Հանձնաժողովի (այսուհետ՝ ՈՒՆՍԻՏՐԱԼ) կողմից մշակած Արբիտրաժային Կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 32.1 հոդվածը, մինչև 2010 թվականի վերանայված խմբագրության և նորոգվելը, սահմանում էր. «Բացի վերջնական վճիռ<sup>80</sup> կայացնելը արբիտրաժային տրիբունալը պետք է իրավասու լինի կայացնել ժամանակավոր, միջանկյալ կամ մասնակի վճիռներ»: Հատկանշական է, որ 2010 թվականից հետո 32-րդ հոդվածն ամբողջովին փոխվեց, իսկ դրա 1-ին կետը փոխարինվեց 34-րդ հոդվածի 1-ին կետով, որով սահմանվեց. «Արբիտրաժային տրիբունալը կարող է կայացնել առանձին վճիռներ տարբեր խնդիրների<sup>81</sup> շուրջ տարբեր ժամանակներում»: Փարիզի Առևտրի Միջազգային Պալատի (այսուհետ՝ ՓԱՄՊ) Արբիտրաժային կանոնակարգի 2-րդ հոդվածում, ի թիվս այլոց, տրված է «վճիռ» սահմանումը, համաձայն որի վճիռն իր մեջ ներառում է *inter alia*, միջանկյալ, մասնակի կամ վերջնական վճիռներ: «*Inter alia*» տերմինի օգտագործումը ենթադրում է, որ ՓԱՄՊ Արբիտրաժային կանոնակարգի հեղինակները թույլ են տալիս վճիռների այլ տեսակների «գոյություն» ևս: Ի հակադրություն այդ մոտեցման, Գերմանական Արբիտրաժային Ինստիտուտի Կանոններն ունեն միայն «վճիռ» հասկացությունը և այն չեն դասակարգում ըստ տեսակների: Հարկ ենք համարում ընդգծել, որ երբեմն, «միջանկյալ վճիռը» (անգլ. *interlocutory award*) կարող է համընկնել «մասնակի վճիռ» (անգլ. *partial award*) կամ «ժամանակավոր վճիռ» հետ: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ միջանկյալ վճիռը վերջնականորեն լուծում է վեճի որևէ մաս: Սակայն կարևոր է նկատել, որ «միջանկյալը» կարող է փոխարինվել «մասնակիով» առավել ապես այն դեպքերում, երբ արբիտրաժային տրիբունալը որոշում է վեճի կամ դրա մասի կամ

<sup>79</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.**, նշվ. աշխ. էջ 228-229:

<sup>80</sup> Բնագրում գործածված է “award” տերմինը:

<sup>81</sup> Անգլերեն բնօրինակում կրկին օգտագործված է «*issue*» տերմինը, որը, ինչպես նշված է վերևում, ըստ ենթատեքստի կարող է նշանակել նաև վեճ կամ տարածայնություն:

վնասների հետ կապված պատասխանատվության, վեճի հանդեպ կիրառելի նյութական իրավունքի, ինչպես նաև իր իրավասության վերաբերյալ հարցեր: Այնուամենայնիվ, ավելի ճիշտ կլինի փաստել, որ «միջանկյալ վճիռը» դասվում է վեճը վերջնականորեն չլուծող վճիռների շարքին: Մյուս կողմից, հայրենի օրենսդիրը «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրել է հայցի ապահովման միջոցների կիրառման մասին միջանկյալ վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ ճանաչման հնարավորությունը, այդպիսով, իրավաբանորեն դրան տալով վերջնական վճռի կարգավիճակ: Ակնհայտ է, որ միջանկյալ վճիռը կայացվում է, երբ արբիտրաժը դեռ ընթացքի մեջ է, ի տարբերություն վերջնական վճռի, որի կայացմամբ արբիտրաժն ավարտվում է: Ընդհանրապես, հայցի ապահովման միջոցների կիրառման մասին արբիտրաժային տրիբունալի կողմից կայացվող ակտի ձևի (այն է որոշում, կարգադրություն կամ վճիռ) և համապատասխան դատարանի կողմից դրա ճանաչման ու կատարման շուրջ միջազգային արբիտրաժային պրակտիկայում առկա էին հակասական մոտեցումներ: Դրա արդյունքում, թե՛ արբիտրաժային հաստատությունները, թե՛ առանձին պետությունները փորձում էին կանոնակարգել ինդիրն այնպես, որ հայցի ապահովման վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի կայացրած ակտն անկախ իր ձևից առավել ասես կատարվի և ակտի ձևը հիմք չտար տարբեր երկրների դատարաններին՝ մերժելու արբիտրաժային տրիբունալի միջանկյալ ակտի ճանաչումն ու կատարումը: Օրինակ, ՓԱՄՊ արբիտրաժային կանոնակարգի 23.1 հոդվածը հատուկ լիազորում է արբիտրաժային տրիբունալին կայացնել ցանկացած միջանկյալ կամ ապահովման միջոց, որը տրիբունալը հարմար է գտնում, լինի դա կարգադրության, թե վճռի տեսքով: Իսպանիայի Արբիտրաժային օրենքի <sup>82</sup> 23.2 հոդվածը սահմանում է, որ հայցի ապահովման միջոցների վերաբերյալ որոշումները, անկախ դրանց ձևից, կողմը, ում վրա պարտականություն է դրվել, կարող է վիճարկել դատարաններում, և ընդհակառակը՝ կողմը, ում օգտին նման որոշումները կայացվել են, կարող է դիմել դատարաններին՝ դրանք

<sup>82</sup> Օրենք 60-2003 ընդունված 2003 թ. դեկտեմբերի 23-ին, հոդված 37.1:



պարտադիր կատարման ենթակա ճանաչելու համար: Այս խնդիրը կարծես թե իր լուծումը գտավ 2006թ., երբ ընդունվեց Մոդելային օրենքը նոր խմբագրությամբ, որի բավական ծավալուն 17-րդ հոդվածը ամրագրեց, որ հայցի ապահովման կիրառման վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել վճռի կամ այլ ձևով: Այս տրամաբանությունը դրվեց նաև «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում՝ սահմանելով, որ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին որոշումները կարող են ամրագրվել միջանկյալ վճռի ձևով: Հարկ ենք համարում նշել, որ նույն հոդվածի 3-րդ մասը հակասության մեջ է մտնում 2-րդ մասի հետ, սահմանելով, որ «հայցի ապահովման միջոցները, որոնք պահանջել կամ կարգադրել է ձեռնարկել արբիտրաժային տրիբունալը՝ կայացնելով միջանկյալ վճիռ սույն հոդվածով սահմանված կարգով, կարող են ճանաչվել, հարկադիր կատարվել կամ չեղյալ ճանաչվել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից՝ սույն օրենքի 34-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների պահանջների պահպանմամբ»: Այսպիսով, ստեղծվում է անհավասար դաշտ ներպետական և օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ կայացված ակտերի ճանաչման և կատարման առումով, որպիսի պայմաններում, օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի ակտը կարող է ունենալ ցանկացած ձև, սակայն ՀՀ-ում ենթակա կլինի ճանաչման և կատարման առնվազն Նյու Յորքի կոնվենցիայի ուժով<sup>83</sup>:

<sup>83</sup> Նյու Յորքի կոնվենցիան, (մասնավորապես դրա 5-րդ հոդվածի 1-ին մասի (ե) ենթակետը) միտված են ապահովելու արբիտրաժային վերջնական որոշումներ/վճիռների ճանաչումն ու կատարումը: Հանուն ճշմարտության պետք է նշել, որ տվյալ հարցում տարբեր դատարանների կողմից Նյու Յորքի կոնվենցիայի մեկնաբանությունները ոչ միշտ են նպաստավոր եղել հայցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ արբիտրաժային դատարանների կայացրած ակտերի ճանաչման և կատարման համար: Այսպես, ամերիկյան Ռեզորթ Քոնդոմինիումս Ինթերնեյշնլ Կորպորացիան ընդդեմ ավստրալական Ռեյ Բոլվել ընդ Ռեզորթ Քոնդոմինիումս Փիթիոլայ Էլթի Դի 1993թ. վեճում, ԱՄՆ-ում իրականացվող արբիտրաժի ընթացքում արբիտրաժային տրիբունալը կիրառեց հայցի ապահովման միջոց, անվանելով այն «վճիռ», որով ավստրալական լիցենզատուին արգելվեց մինչև արբիտրաժի ավարտը ներգրավվել մրցակցային գործունեության մեջ և էսքրոու դեպոզիտ հաշվին մուծել բոլոր այն եկամուտները, որոնք կգոյանային լիցենզիոն պայմանագրի արդյունքում: Երբ լիցենզատուն փորձեց սույն միջանկյալ վճիռը կատարման ներկայացնել Ավստրալիայում, Քոնիսսլ Ենդի Գերագույն դատարանը որոշեց, որ արբիտրաժային վճիռն ուներ ակնհայտ միջանկյալ բնույթ և այն չէր հանգեցրել արբիտրաժի

Մինչ դեռ, ինչպես բխում է վերոհիշյալ 17-րդ հոդվածի 3-րդ մասի տառացի մեկնաբանությունից, ՀՀ տարածքում իրականացվող արբիտրաժի դեպքում, հայ ցի ապահովման միջոցներ կիրառելու մասին արբիտրաժային տրիբունալի որոշման ճանաչման և կատարման համար այդպիսի որոշումը պետք է անպայմանորեն ունենա միջանկյալ վճռի ձև: Հայ ցի ապահովման ինստիտուտն ապահովում է կայացվելիք արբիտրաժային վճռի կատարման անհնարինություն կամ դժվարացման, կամ վեճի առարկա հանդիսացող գույքի հնարավոր վատթարացման բացառումը: Հետևաբար, հայ ցի ապահովման միջոցների կիրառումն ապահովում է հետագայում վճռի կատարումը: Ավելին, ի տարբերություն վճռի, հայ ցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշմամբ Նյու թասկան իրավունքի վիճելի իրավահարաբերություններ չեն կարգավորվում: Այսինքն, հայ ցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի կայացրած ակտը վեճն ըստ էության չլուծող ակտ՝ այն է՝ որոշում է: Հայ ցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ որոշումները միջանկյալ վճռի ձևով ամրագրելու օրենսդրի մոտեցումը պայմանավորված է հայրենական օրենքի 35-րդ հոդվածի տրամաբանությամբ, համաձայն որի իրավասու դատարանը ճանաչում և հարկադիր կատարման առարկա է դարձնում միայն արբիտրաժային վճիռը: ՀՀ Առևտրաարդյունաբերական պալատին առընթեր արբիտրաժային դատարանի հիմնարկի կանոնակարգի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն ևս, (բացառությամբ հայ ցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ միջանկյալ վճռի ձևով կայացվող ակտի) ենթադրում է վերջնական վճռի կայացում, մյուս բոլոր հարցերը կարգավորելով որոշումներով: ՀՀ բանկերի միությանն առընթեր արբիտրաժային դատարանի հիմնարկի կանոնակարգն, ինչնիցե, որդեգրել է «Առևտրային արբիտրաժի միասին» ՀՀ օրենքի եզրութաբանությունը, որի 30-րդ հոդվածի 2-րդ մասի մակերեսային և բառացի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ հայրենի

---

ավարտին: Հետևաբար, Գերագույն դատարանը գտավ, որ «վճիռը»՝ Նյու Յորքի կոնվենցիայի նպատակներից ելնելով [կոնվենցիայի տեսանկյունից – մեկն. հեղինակի] վճիռ չէ: (մեջբերումը Yearbook XX (1995) pp. 628-650, Australia no. 11):

օրենքը չի բացառում տարբեր տեսակի վճիռների ընդունումը արբիտրաժային տրիբունալի կողմից: Այսպես, «Առևտրային արբիտրաժի միասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ համաձայնեցված պայմանների շուրջ կայացված հաշտության համաձայնության վերաբերյալ վճիռը պետք է կայացվի նույն օրենքի 31-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ և պետք է պարունակի նշում այն մասին, որ այն հանդիսանում է արբիտրաժային տրիբունալի վճիռ: Այդպիսի վճիռն ունի նույն կարգավիճակը և ուժը, ինչ արբիտրաժային տրիբունալի կողմից ըստ գործի էության կայացվող ցանկացած այլ վճիռ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե՛ նույն օրենքի տրամաբանությունից և թե՛ սույն պարագրաֆում ներկայացված՝ դատավարագիտության ոլորտում լայնորեն ընդունված մոտեցումներից ելնելով, «ըստ գործի էության» կայացվում է միայն վճիռ, այն էլ վերջնական, ապա օրենքում առկա «ըստ գործի էության կայացվող ցանկացած այլ վճիռ» արտահայտությունը լավագույնս չի արտահայտում օրենսդրի միտքը՝ կրկին անգամ ստեղծելով երկիմաստության և տարընթերցման հնարավորություն: Ցանկության դեպքում նույնիսկ արբիտրաժային տրիբունալը չի կարող կայացնել գործն ըստ էության լուծող այլ վճիռ, քան վերջնական վճիռն է: Գտնում ենք, որ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը պետք է վերախմբագրել այս տրամաբանությունից ելնելով: Այսպիսով, անկախ հարենական օրենքում առկա եզրութաբանական հակասությունից, կարող ենք փաստել, որ ՀՀ-ում իրականացվող արբիտրաժի դեպքում, արբիտրաժային տրիբունալը, բացառությամբ հայցի ապահովման միջոցների կիրառումից, օժտված չէ միջանկյալ վճիռ կայացնելու իրավագործությամբ: Դրա փոխարեն, արբիտրաժի ընթացքում ծագող հարցերի շուրջ արբիտրաժային տրիբունալն իրավասու է կայացնելու որոշումներ, որոնք վիճարկման օբյեկտ հանդիսանալ չեն կարող: Քաղաքացիական և արբիտրաժային դատավարության մասնագետ Բ. Կարաբելնիկովի կարծիքով, եթե մասնակի վճիռը (partial award) հանդիսանա դրանում նշված հարցի (հարցերի խմբի) վերաբերյալ արբիտրաժի վերջնական որոշում, որպեսզի պարտված կողմի մոտ չծագեն տվյալ որոշման ճանաչման և կատարման

վիճարկման հիմքեր՝ այդպիսի միջանկյալ որոշման անավարտ բնույթից ելնելով, ապա Նյու Յորքի կոնվենցիայի համաձայն, պրակտիկայում այդպիսի մասնակի վճռի ճանաչման ու կատարման առնչությամբ խնդիրներ չեն առաջանա<sup>84</sup>: Այս մոտեցումը ՀՀ-ում կարող է իրագործելի համարվել, եթե դրա հիմքում դրվի հետևյալ տրամաբանությունը: ՀՀ տարածքից դուրս իրականացվող արբիտրաժի ընթացքում ընդունվող ակտերի և ՀՀ-ում դրանց ճանաչման ու վիճարկման հարցը լուծելիս, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, իրավասու դատարանը պետք է ղեկավարվի այն պահանջներով, որոնց պետք է բավարարի ճանաչման և վիճարկման ենթակա ակտը՝ Նյու Յորքի կոնվենցիայի և ազգային օրենսդրության մակարդակներով: Միաժամանակ, գտնում ենք, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-37 հոդվածներում խուսափելով «վճիռ» եզրույթի օգտագործումից՝ պետք է ճանաչման, վիճարկման և հարկադիր կատարման առարկա դարձնել արբիտրաժային դատարանի (տրիբունալի) ակտը՝ սահմանելով դրա այն չափորոշիչները (պահանջները), որոնք քննարկվում են սույն պարագրաֆում և որը հնարավորություն կտա իրավասու դատարանին տարբերելու գործն ըստ էության լուծող վերջնական, պարտադիր, կատարելի, անհերքելի, բացառիկ և համապատասխան ձև ունեցող ճանաչման և կատարման ենթակա ակտերը գործն ըստ էության չլուծող ակտերից: Քննարկելով Նյու Յորքի կոնվենցիայով արբիտրաժային ակտին ներկայացվող պահանջները կարող ենք փաստել, որ այն պետք է լինի պարտադիր (հոդվ. 5, մաս 1, կետ (ե)) և կատարելի<sup>85</sup> (հոդվ. 3) ունենա գրավոր ձև (հոդվ. 4): Հաշվի առնելով, որ Նյու Յորքի կոնվենցիայում առկա մոտեցումները մշակվել են նախորդ դարի 50-ական թվականներին, կարելի է փաստել, որ ընդհանուր առմամբ այն շարունակելով մնալ արբիտրաժային ակտերի ճանաչման, կատարման և վիճարկման գործուն միջոց, այնուամենայնիվ չի համապատասխանում իրավագիտության զարգացման արդի մոտեցումներին: Այդ իսկ պատճառով, Նյու Յորքի կոնվենցիայի 1-ին

<sup>84</sup> Տե՛ս **Карабельников Б.Р.** նշվ. աշխ. էջ 23:

<sup>85</sup> Արբիտրաժային ակտը կատարվում է այն տարածքի [Պայմանավորվող Պետության – ծանոթ. հեղինակի] դատավարական նորմերին համապատասխան, որում հայցվում է ճանաչումը և կատարումը:

հողվածի 2-րդ մասի ձևակերպումն, օրինակ, հստակորեն չի տարանջատում գործն ըստ էության լուծող և չլուծող, ինչպես նաև միջանկյալ և վերջնական ակտերը: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում «վերջնական վճիռ» տերմինը օգտագործվում է երկու նշանակությամբ: Ամենատարածված նշանակության համաձայն, վճիռը ներառում է տրիբունալի վերջնական լուծումները բոլոր ներկայացված հարցերի վերաբերյալ: Մոդելային օրենքը (հողվ. 32, մաս 1) օգտագործում է «վերջնական վճիռ» բառակապակցությունն այնտեղ, որտեղ հայրենական օրենքը գործածում է միայն «վճիռ» բառը: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «արբիտրաժն ավարտվում է արբիտրաժային տրիբունալի կողմից վճռի կամ ... որոշման կայացմամբ»: Ինչպես տեսնում ենք, տարբերությունը Մոդելային օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասից կայանում է «վերջնական» բառում: Ելնելով 32-րդ հոդվածի «բնագրի» (այն է - Մոդելային օրենքի) և հայրենական օրենքի համադրումից, կարելի է եզրակացնել, որ ամեն դեպքում, հայրենական օրենքի 32-րդ հոդվածի իմաստով «վճիռ» եզրույթի գործածմամբ նկատի է ունեցվել «վերջնական վճիռ» եզրույթը: «Վերջնական վճիռ» եզրույթի երկրորդ նշանակությունն այն է, որ վճիռը վերջնականապես և ըստ էության լուծում է վեճի մի մասը, որը կարող է առանձնացվել մնացած վեճից, բայց պարտադիր կերպով չի դադարեցնում արբիտրաժը կամ վեճի մնացած մասը քննելու արբիտրների մանդատը: Այդպիսի վճիռն ունի վերջնական վճռի բոլոր հետևանքներն այն առումով, որ այն *res judicata* է բոլոր այն հարցերի համար, որոնց վերաբերում է և այն պարտվող կողմի դիմումի հիման վրա չեղյալ ճանաչման վարույթի կամ հաղթող կողմի դիմումի հիման վրա կատարման վարույթի առարկա է: Այսպիսով, վեճի անջատելի մասը կարող է վերջնական լուծում ստանալ մասնակի վճռով: Այս մոտեցումը<sup>86</sup> պետք է հաշվի առնել օտարերկրյա արբիտրաժային վճիռները ՀՀ-ում ճանաչման

<sup>86</sup> Նշված մոտեցումն օրենսդրական կարգավորում է ստացել օրինակ Իսպանիայում, որի 2003 թ. դեկտեմբերի 23-ին ընդունված թիվ 60-2003 օրենքի համաձայն «Արբիտրները պետք է վեճը լուծեն մեկ վճռով կամ այնքան վճիռներով, որքան իրենք անհրաժեշտ կհամարեն, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ»: Նույն օրենքի 37.1 հոդվածի համաձայն՝ կողմերն ազատ են բացառել ու մասնակի վճիռների կայացումը:

Ներկայացնելիս՝ ի հարկ ե, հաշվի առնելով արբիտրաժային ակտին ներկայացվող այն պահանջները, որոնք ներկայացված են սույն պարագրաֆում: Միջազգային արբիտրաժային պրակտիկայում հաճախ հանդիպող արբիտրաժային վճիռներից կարելի է առանձնացնել նաև համաձայնեցված պայմանների շուրջ կայացված վճիռը: Վճռի այս տարատեսակը կարևոր է նրանով, որ արբիտրաժի ընթացքում կողմերի հաշտվելու պարագայում և նրանց խնդրանքով՝ արբիտրաժային տրիբունալը հաշտության համաձայնության մասին կայացնում է վճիռ, որը կողմերի համար ունի նույն իրավաբանական ուժը, ինչ որ ցանկացած այլ վերջնական և գործն ըստ էության լուծող վճիռ: Այս վճիռը ներպետական արբիտրաժի դեպքում հավասարապես ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ունում «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի ուժով, իսկ օտարերկրյա արբիտրաժի դեպքում՝ ճանաչման և կատարման Կոնվենցիայի, Արբիտրաժային օրենքի և ՀՀ ՔԴՕ-ի ուժով:

Հաշվի առնելով, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է նաև լրացուցիչ վճռի կայացում՝ հարկ է առաջանում արծարծել նաև դրա վիճարկման հնարավորության հարցը: Թեև հայրենական օրենքը ուղղակի դրույթ չի պարունակում լրացուցիչ վճռի վիճարկման իրավունքի մասին, սակայն այն սահմանում է ընդհանրապես վճռի վիճարկման հնարավորություն: Ավելի, լրացուցիչ վճռի կայացման դեպքում սահմանված է իմպերատիվ նորմ<sup>87</sup> կիրառելու վճռի ձևի և բովանդակության հանդեպ կիրառվող դրույթները: Լրացուցիչ վճռի վիճարկման հնարավորության մասին է խոսում նաև Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը: Հաշվի առնելով, որ լրացուցիչ վճիռը ինքնուրույն ակտ է, ապա այն կհամարվի վիճարկման ինքնուրույն օբյեկտ: Կարևոր է առանձնացնել լրացուցիչ վճռի կայացման մի շարք սուբյեկտիվ և օբյեկտիվ պայմաններ: Առաջին սուբյեկտիվ պայմանը՝ կողմերի համաձայնության առկայությունը կամ բացակայությունն է՝ լրացուցիչ վճիռ կայացնելու խնդրանքով արբիտրաժային տրիբունալին դիմելու իրավունքի մասին: Հայրենական օրենքը<sup>88</sup> հղում է կողմերի համաձայնությանը, սահմանելով, որ եթե այլ բան

<sup>87</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 5:

<sup>88</sup> Հոդված 33, մաս 3:

նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ, ապա կողմը, մյուս կողմին տեղյակ պահելով, կարող է վճիռը ստանալ ու ց հետո՝ 30-օրյա ժամկետում, դիմել արբիտրաժային տրիբունալ՝ խնդրելով կայացնել լրացուցիչ վճիռ արբիտրաժային վարույթի ժամանակ ներկայացված, սակայն վճռում չարտացոլված պահանջների մասով: Օբյեկտիվ պայմաններից կարելի է առանձնացնել մյուս կողմին տեղյակ պահելու, վճիռը ստացած լինելու, արբիտրաժային վարույթի ժամանակ ներկայացված, սակայն հիմնական վճռում չարտացոլված պահանջի առկայության պայմանները, ինչպես նաև լրացուցիչ վճիռ կայացնելու խնդրանքով տրիբունալին դիմելու համար սահմանված 30-օրյա ժամկետը: Կարևոր է նշել, որ լրացուցիչ վճիռը որևէ պարագայում չպետք է եականորեն փոփոխի հիմնական վճիռը, այլ ապես դրա վիճարկան համար պարարտ հող կստեղծվի: Չաշվի առնելով, որ լրացուցիչ վճիռը հանդիսանում է վիճարկման ինքնուրույն օբյեկտային նախադրյալ, կարող է ծագել դրա ճանաչման և ի կատար ածման հնարավորության հարցն այն պարագայում, երբ դատարանում քննվում է այն հիմնական վճռի չեղյալ ճանաչման հայցը, որի առնչությամբ արբիտրաժային տրիբունալը կայացրել է լրացուցիչ վճիռ: Կարծում ենք, որ քանի դեռ հիմնական վճռի չեղյալ ճանաչման դիմումի վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ չի մտել, արբիտրաժային տրիբունալն իրավասու է կայացնել լրացուցիչ վճիռ և այն կատարման ենթակա ակտ կհանդիսանա: Այս հարցի նմանատիպ մեկնաբանությամբ է հանդես եկել գերմանական դատարանը<sup>89</sup>, մասնավորապես նշելով, որ եթե նույնիսկ վճռի չեղյալ ճանաչման վարույթն ընթացքի մեջ է, արբիտրաժային տրիբունալը ոչ միայն իրավասու, այլ և պարտավոր է լրացուցիչ վճիռ կայացնել և դրանով լուծել դատական ծախսերի հարցը: Գերմանական դատարանի կարծիքով, չեղյալ ճանաչման վարույթի առկայությունը չպետք է ազդի մինչև այդ վարույթի ավարտը կայացված լրացուցիչ վճռի կատարման վրա: Գերմանական դատարանի վճռից այս մեջբերումը ևս

<sup>89</sup> CLOUT case No. 663 [Oberlandesgericht Stuttgart, Germany, 1 Sch 22/01, 4 June 2002], հասանելի է նաև համացանցում <http://www.dis-arb.de/en/47/datenbanken/rspr/olg-stuttgart-case-no-1-sch-22-01-date-2002-06-04-id232>.

մեկ անգամ գալիս է հաստատել ու այն իրողությունը, որ դատական ակտերը հանդիսանում են իրավունքի ու շագրավ աղբյուրներ<sup>90</sup>:

Խոսելով լրացուցիչ վճռի օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմաններից, չի կարելի անտեսել նաև արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի առաջացման այնպիսի օբյեկտիվ պայման, ինչպիսին է եռամսյա ժամկետը, որը սահմանված է Արբիտրաժային օրենքով վճռի չեղյալ ճանաչման մասին դիմում ներկայացնելու համար: Տվյալ ժամկետը փաստորեն հանդիսանում է այն օբյեկտիվ պայմանը՝ ժամանակահատվածը, որի ընթացքում համապատասխան դիմում ներկայացնող կողմը կարող է օգտվել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման պահանջով դատարան դիմելու իր իրավունքից: Նախ, անհասկանալի է օրենսդրի տրամաբանությունը վճռի և լրացուցիչ վճռի չեղյալ ճանաչման դիմում ներկայացնելու ժամկետների հաշվարկի սկզբի համար տարբեր մոտեցումներ որդեգրելու հարցում: Այսպես, վճռի վիճարկման համար սահմանված ժամկետի սկիզբը հաշվարկվում է այդ վճիռը ստանալու պահից, իսկ լրացուցիչ վճռի դեպքում՝ այն կայացվելու պահից: Կարծում ենք, որ նման տարբերակված մոտեցումը էապես նույն խնդրին արդարացված չէ և երկու դեպքերի համար էլ պետք է սահմանել եռամսյա ժամկետի հաշվարկի սկզբի միևնույն պայման: Առավել ևս, որ պրակտիկայում առկա են դեպքեր, երբ պարտվող կողմը տեղյակ է լինում արբիտրաժային վճռի առկայությունից, սակայն չարամտորեն խուսափում է այն ստանալուց, որպիսի պարագայում սահմանված եռամսյա ժամկետի հաշվարկը չի սկսում: Առանձին ուսումնասիրության առարկա է հանդիսանում «դիմում ներկայացնող կողմ<sup>91</sup>» արտահայտությունը: Հարց է առաջանում, թե արդյո՞ք ասենք շահագրգիռ երրորդ անձը, ինչպիսին, ելնելով գործի հանգամանքներից կարող է հանդիսանալ օրինակ դատախազը, այնպիսի արբիտրաժային գործով, որով կայացված վճիռը, դրա ճանաչումն ու կատարումը կարող են հակասել Հայաստանի

<sup>90</sup> Տողերիս հեղինակն իհարկե գիտի, որ ՀՀ-ում դատական ակտերն իրավունքի աղբյուր չեն հանդիսանում, սակայն աշխարհում, ներառյալ մայրցամաքային իրավունքի երկրներում այս առումով առկա են տարբեր մոտեցումներ: Տե՛ս օրինակ **Жуйков В.** «Судебная защита прав граждан и юридических лиц»: М.: Юридическое бюро «Городец», 1997. – էջ 143–188; **Нешатаева Т.Н.** К вопросу об источниках права – судебном прецеденте и доктрине. // Вестник ВАС РФ - 2000 - №5 – էջ 110:

<sup>91</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենք, հոդված 34, մաս 2, կետ 1:



հանրային կարգին, իրավունք ունի հանդես գալ որպես «դիմում ներկայացնող կողմ»: Ածանցյալ, սակայն ոչ նվազ կարևոր է հարց է ծագում, թե ի՞նչ դատավարական հնարավորություն ունի տվյալ դեպքում դատախազը՝ չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնելու դատարան, եթե ասենք Հայաստանի հանրային կարգին հնարավոր հակասող արբիտրաժային վճռի մասին նա տեղեկացել է դրավիճարկման համար նախատեսված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ առավել ևս, որ նա արբիտրաժի կողմ չի հանդիսացել: Այս հարցերն ուսումնասիրված են սույն գլխի 2-րդ պարագրաֆում:

Գալով արբիտրաժային օրենքով սահմանված եռամսյա ժամկետի դասակարգման խնդրին, կարծում ենք, որ դրան հատուկ են դատավարական ժամկետի տարրերն այն առումով, որ արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է օրացուցային ստույգ ամսով (երեք ամիս) սահմանված ժամկետ, որի ընթացքում կարելի է վճռի չեղյալ ճանաչելու դիմում ներկայացնել դատարան: Սակայն, ՀՀ ՔԴՕ-ն, ինչպես նաև արբիտրաժային օրենքը չեն սահմանում բաց թողնված ժամկետի վերականգնման դատավարական հնարավորություն և ոչ էլ այդպիսի բաց թողնման իրավական հետևանքներ: Դասական առումով, դատարանը պետք է մերժեր, վերադարձներ կամ առանց քննության թողներ սահմանված եռամսյա ժամկետից հետո ներկայացված դիմումը՝ դրանով իսկ բացառելով անձի դիմում տալու՝ դատավարական գործողության հնարավորությունը, սակայն նման հիմք ՀՀ ՔԴՕ-ն չի նախատեսում, ի տարբերություն ասենք Ռուսաստանի Դաշնության արբիտրաժային դատավարության օրենսգրքի, որի 30-րդ ծավալուն գլուխ ամբողջությամբ նվիրված է արբիտրաժային դատարանների վճիռների վիճարկման վարույթին և այդ վճիռների հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու հարաբերությունների կարգավորմանը: Կարծում ենք, որ ի թիվս այլոց, Հայաստանում այս խնդրի մակերեսային կարգավորումը պայմանավորված է ինչպես դատական համակարգի կայացվածության անբավարար մակարդակով, այնպես էլ արբիտրաժային պրակտիկայի ոչ բավարար ծավալով և խորությամբ, որը որոշակի պայմաններում կարող է որակական հատկանիշներ ձեռք բերելով ստիպել օրենսդրին նորմատիվ

կարգավորման ենթարկել նշված բացերը: Ընդհանրապես, դատական համակարգը և արբիտրաժը փոխկապակցված են: Մյուս կողմից խրթին կլինի պնդել, որ խնդրո առարկա եռամսյա ժամկետը հանդիսանում է հայցային վաղեմության հատուկ ժամկետ, քանզի տվյալ դեպքում դժվար կլինի չեղյալ ճանաչելու դիմումով դատարան դիմելու համար սահմանած ժամկետը նույնականացնել իրավունքը խախտած անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածի հետ: Ի հեճուկս այս պնդման, ստիպված ենք ընդունել, որ հաշվի առնելով տվյալ խնդրի կարգավորման վերոհիշյալ օրենսդրական բացը, ՀՀ դատարաններն այլ ընտրանք չունեն, քան արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջը մերժող ակտ ընդունելն է:

Խոսելով վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալին ազգային օրենսդրությամբ ներկայացվող պահանջների մասին, անհրաժեշտ է ուսումնասիրել գործն ըստ էության լուծող արբիտրաժային ակտի իրավական ուժի հատկանիշները: Հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ արբիտրաժի նկատմամբ սահմանված պետության աջակցող և վերահսկող դերը, ինչպես նաև արբիտրաժային վճռի ճանաչումն ու հարկադիր կատարումը, այսինքն, վճռով սահմանված հնարավոր իրավական հետևանքների առաջացումը, կարելի է եզրակացնել, որ արբիտրաժային վճիռն օժտված է պարտադիրության հատկանիշով: Արբիտրաժային օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը վճիռը պարտադիր է դարձնում բոլորի համար: Արբիտրաժի նկատմամբ պետական վերահսկողական իրավասությունն իրավասու դատարանի կողմից իրացնելու արդյունքում՝ ճանաչելով (օտարերկրյա արբիտրաժային վճիռների պարագայում) արբիտրաժային վճիռը և դրանով իսկ վճռի պարտադիրությունը, իրավասու դատարանը, փաստորեն, արբիտրաժային վճիռն օժտում է նաև նախադատելիության հատկանիշով: Իհարկե, այս հատկանիշը դեռ չի ստացել իր օրենսդրական ամրագրումը, սակայն այն լիովին բխում է արդարադատության տնտեսման սկզբունքից, քանզի անիմաստ է վատնել պետության ռեսուրսներն իրավասու դատարանի կողմից արդեն իսկ ճանաչված (այն է՝ սանկցավորված) վճռով հաստատված փաստերի, իրավունքների և պարտականությունների

կրկնակի հաստատման կամ վիճարկման վրա բոլոր այն դեպքերում, երբ քննվում է գործ նույն անձանց միջև և չկան արբիտրաժային վճիռը վիճարկելու՝ օրենքով սահմանված հիմքեր: Գտնում ենք, որ օրենսդրության հետագա կատարելագործման նկատառումներինց ելնելով, այս խնդիրը պետք է գտնի իր հստակ նորմատիվ կարգավորումը, հաշվի առնելով սույն պարագրաֆում ստորև ներկայացված ՀՀ տարածքում իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված արբիտրաժային վճռի իրավական ներգործության առանձնահատկությունները:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն, ՀՀ-ում հարկադիր կատարման ենթակա ակտերի ցանկում առկա են նաև արբիտրաժային տրիբունալների վճիռները, իսկ ՀՀ միջազգային համաձայնագրերով նախատեսված դեպքերում՝ օտարերկրյա արբիտրաժային դատարանների վճիռներն ու որոշումները: Այսինքն, արբիտրաժային վճռին հատուկ է նաև կատարելիության հատկանիշը: Կարելի է ասել, որ վճռի կատարելիությունը պարտադիրության հատկանիշի կոնկրետ դրսևորումն է: Բացի այդ՝ քաղաքացիական դատավարության ոլորտում ճանաչողական հայցերով կայացված վճիռներով, ի տարբերություն կատարողական կամ վճռող հայցերով կայացված վճիռների, հարկադիր կատարման անհրաժեշտություն ոչ միշտ է առաջանում<sup>92</sup>: Այն դեպքերում, երբ արբիտրաժային վճիռը ճանաչվում է և տրվում է կատարողական թերթ, այսինքն այդ դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ, արբիտրաժային վճռում արտահայտված իրավահարաբերությունները և փաստական հանգամանքները դառնում են իրացվելի: Այս երևույթն օժտում է արբիտրաժային վճռին անհերքելիության հատկանիշով, քանզի դրա կայացումից ի վեր, արբիտրաժային տրիբունալն իրավասու չէ այն փոխել<sup>93</sup>: Հատկանշական է, որ արբիտրաժային վճռի անհերքելիությունն առաջ է գալիս դրա կայացման իսկ պահից, անկախ իրավասու դատարանի կողմից հետագայում այն ճանաչելու փաստից: Սակայն, Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը կարծես այս սկզբունքից բացառություն է սահմանում: Իրավասու

<sup>92</sup> Տես Վ. Հովհաննիսյան, նշվ. աշխ. էջ. 233:

<sup>93</sup> Չշփոթել վճռի ուղղման, մեկնաբանման և լրացուցիչ վճռի կայացման հետ:

դատարանի կողմից արբիտրաժային վճիռը ճանաչելու պահից այն ձեռք է բերում բացառիկության հատկանիշ: Այսինքն, նույնական հայցով և նույն կողմերի միջև գործի կրկին քննությունը դառնում է անհնար: ԶԶ ԲԴՕ 91-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 109-րդ հոդվածի 3-րդ կետի ուժով արբիտրաժային վճիռի բացառիկությունն իրագործելի է դառնում ԶԶ քաղաքացիական դատավարությունում, ինչը չի կարելի ասել Արբիտրաժային օրենքի առնչությամբ: Պետք է նշել, որ Արբիտրաժային օրենքի 35 և 36-րդ հոդվածների ներկայիս խմբագրությունը հաջողված չէ. 35-րդ հոդվածն օգտագործելով «կամ» շաղկապը, ԶԶ և Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում կայացված արբիտրաժային վճիռ ճանաչման և կատարման հարաբերությունները կարգավորող նորմում, «հավասարության» նշան է դնում ԶԶ և այլ պետության տարածքում կայացված վճիռների թե՛ ճանաչման, թե՛ կատարման և թե՛ ճանաչման և/կամ կատարման դեմ առարկելու միջոցով արբիտրաժային վճիռ վիճարկման վարույթների միջև: Սույն մոտեցումն արդարացված համարել չի կարելի հետևյալ պատճառով: Եթե արբիտրաժի վայրը ԶԶ տարածքում է, ապա այն կարգավորվում է հայրենական օրենքի իմպերատիվ նորմերով: Դրա արդյունքում կայացրած վճիռ ճանաչումն իմաստագուրկ է դարձնում ԶԶ տարածքն արբիտրաժի վայր ընտրելը, քանզի ԶԶ տարածքում իրականացրած արբիտրաժի արդյունքում կայացրած արբիտրաժային վճիռը պետք է անցնի ճանաչման գործընթաց՝ օտարերկրյա արբիտրաժային վճիռ հետ հավասար: Մինչդեռ օրենսդիրը՝ ԶԶ տարածքում իրականացվող արբիտրաժն իր օրենքին ենթարկելով, օրենսդրորեն սահմանում և սակցավորում է արբիտրաժային հարաբերությունների մասնակիցների այն նվազագույն վարքագիծը, որի պահպանման արդյունքում կայացված արբիտրաժային վճիռը կարող է հարկադիր կատարվել իրավասու դատարանի կողմից հաստատվելու դեպքում: Այս առումով, ԶԶ տարածքում իրականացված արբիտրաժի վճիռ ճանաչման գործընթացն ավելորդ, դատական համակարգը ծանրաբեռնող, արդարադատության տնտեսումը ոտնահարող և կարգավորման բեռ չկրող գործընթաց է: Առավել ևս, որ ճանաչման գործընթացը վերաբերելի է օտարերկրյա

արբիտրաժային և դատական ակտերին, որով պետությունը դրսևորում է իր սուվերենությունը: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումն օրինակ, սահմանված է որպես. «իրավաբանական գործողություն, որով պետությունը օտարերկրյա դատական ակտն օժտում է այնպիսի իրավական հատկանիշներով, որոնցով օժտված են տվյալ պետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը և թույլատրում են այդ ակտի գործողությունն իր տարածքում...Արդյունքում այն ձեռք է բերում անհերքելիության, բացառիկության, նախադատելիության, պարտադիրության հատկանիշներ, իսկ կատարման ենթակա դատական ակտը՝ նաև կատարելիության հատկանիշ:»<sup>94</sup>: Չաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ ՀՀ տարածքում իրականացված արբիտրաժի վճիռը պետք է անցնի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վարույթով՝ շրջանցելով ճանաչման փուլը: Այսինքն, ՀՀ տարածքում իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված արբիտրաժային վճիռի իրավական ներգործությունը կսկսի գործել այն պահից, երբ արբիտրաժային վճիռը կմտնի ուժի մեջ (կախված կողմերի ընտրած արբիտրաժային կանոնակարգից կամ համաձայնությունից դա կարող է լինել վճիռ կայացման պահը, վճիռը կողմերի կողմից ստանալու պահը կամ համաձայնությամբ որոշված այլ պահ):

Գալով արբիտրաժային վճիռ կառուցվածքին, կարող ենք նշել, որ թեև օրենսդրորեն ամրագրված չեն արբիտրաժային վճիռի ձևը և բովանդակությունը<sup>95</sup>, ինչպես դա բնորոշ է դատական ակտերին (ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասեր), սակայն հատկապես ինստիտուցիոնալ հեղինակավոր արբիտրաժային դատարանների ներքո վարույթ իրականացնող արբիտրաժային տրիբունալների կայացրած վճիռներն իրենց թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ ոչ միայն չեն զիջում դատական վճիռներին, այլ և իրենց վերլուծական խորությամբ և իրավանորմերի կիրառման

<sup>94</sup> Տե՛ս **Թադևոսյան Պ.Պ.**, «Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը, Երևան 2013, 196, էջ 44:

<sup>95</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածն ինչևիցե սահմանում է արբիտրաժային վճիռի ձևին և բովանդակությանը ներկայացվող նվազագույն պահանջներ:

մասնագիտական մեկնաբանություններով ու եզրահանգումներով հաճախ որակապես գերազանցում են դատական վճիռներին՝ հանդիսանալով լուրջ գիտական աշխատություններ իրավաբանական տարաբնույթ և բարդ հարցերի շուրջ: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի մակերեսային ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ, ի տարբերություն ՀՀ ՔԴՕ-ով սահմանած իրավակարգավորումների, օրենսդիրը չի կարգավորել արբիտրաժային վճռի՝ ուժի մեջ մտնելու պահը: Սակայն, եթե նույնիսկ սույն պնդումը գեթ չնչին տեսական հնարավորություն ունի պատահելու ad hoc արբիտրաժային դատարանների պարագայում, ապա, միջազգային արբիտրաժային արակտիկայի համաձայն, ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարանների կանոնակարգերը, որոնց մեծամասամբ հղում են պարունակում կողմերի կնքած արբիտրաժային համաձայնությունները կամ վերապահումները, կարգավորում են այս խնդիրը և արբիտրաժային վճիռը հիմնականում ուժի մեջ է մտնում կողմերին այն հանձնելու կամ կայացնելու պահից, եթե վճռով կատարման այլ ժամկետ սահմանված չէ: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը շրջանցել է վճռի կատարման կարգավորումը, սակայն Հայաստանի Հանրապետությունում գործող երկու ինստիտուցիոնալ արբիտրաժային դատարաններ այդ բացը լրացրել են իրենց կանոնակարգերում: Այսպես, թե՛ ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի և թե՛ ՀՀ Բանկերի միության արբիտրաժային դատարաններն իրենց կանոնակարգերում պարունակում են գրեթե նույնական հոդվածներ <sup>96</sup>, համաձայն որոնց արբիտրաժային տրիբունալի վճիռները կողմերը կատարում են կամավոր՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է անհապաղ կատարման <sup>97</sup>: Նշված ժամկետում կամավոր չկատարված վճիռները ի կատար են ածվում Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան: Հատկանշական է, որ այնպիսի զարգացած արբիտրաժային երկրներ, ինչպիսիք են օրինակ

<sup>96</sup> 32-րդ և 33-րդ հոդվածները համապատասխանաբար:

<sup>97</sup> Այս իրավակարգավորումն է ներառված նաև Ռուսաստանի Դաշնության առևտրաարդյունաբերական պալատի հեղինակավոր Միջազգային Առևտրային Արբիտրաժային դատարանի (MKAC) կանոնակարգի 44-րդ հոդվածում:

Ֆրանսիան <sup>98</sup> , Շվեյցարիան <sup>99</sup> և Գերմանիան <sup>100</sup> , օրենսդրական կարգավորման են ենթարկել արբիտրաժային վճռի ուժի մեջ մտնելու հարցը:

Խոսելով արբիտրաժային վճռի բովանդակությանը ներկայացվող նորմատիվ պահանջներից, հարկ ենք համարում ձեր ուշադրությունը հրավիրել նաև հայրենական օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի վրա, որն արբիտրաժային տրիբունալի առջև արբիտրաժային վճռում արբիտրաժի անցկացման ամսաթվի և վայրի մասին նշում կատարելու իմպերատիվ պահանջ է պարունակում: Այս պահանջը կարևոր է այնքանով, որ արբիտրաժային վճռի կայացումից ի վեր, արբիտրաժի անցկացման վայրի օրենքով են կարգավորվելու առնվազն արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հետ կապված խնդիրները: Այս առումով, տեղին է հիշատակել հայրենական օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը, որը սահմանում է օրենքի գործողության շրջանակը՝ նշելով, որ օրենքի գործողությունը, բացառությամբ նույն օրենքի 8-րդ, 9-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների, տարածվում է միայն այն արբիտրաժի վրա, որի վայրը ՀՀ տարածքում է: Անհրաժեշտ է ընդգծել, որ UNCITRAL-ի քարտուղարության կարծիքով, Մոդելային օրենքի 31-րդ հոդվածը (համընկնում է հայրենական օրենքի 31-րդ հոդվածին), նախատեսելով վճռի կայացման վայրի մասին վճռում նշում կատարելու դրույթ և սահմանելով, որ արբիտրաժային տրիբունալի վճիռը համարվում է կայացված վճռում նշված վայրում, հանգում է հետևյալին. այդպիսի «համարող» նորմը ցուցադրում է, որ արբիտրաժային վճռի վերջնական կայացումը իրենից ներկայացնում է իրավաբանական գործողություն, որը պրակտիկայում պարտադիր չէ, որ համընկնի մեկ փաստացի գործողության հետ: Այն նույն պատճառով, որով արբիտրաժը պարտադիր չէ, որ իրականացվի այն վայրում, որն իրավաբանորեն

<sup>98</sup> Ֆրանսիայի ՔԴՕ-ի 1476-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային վճիռը դրա կայացման պահից կդառնա *res judicata* այն վեճի համար, որի վերաբերյալ այն կայացվել է:

<sup>99</sup> Շվեյցարիայի ՔԴՕ-ի 387-րդ հոդվածը սահմանում է, որ վճռի մասին կողմերին ծանուցելու պահից այն պարտադիր և կատարման ենթակա դատական վճռի ուժ ունի:

<sup>100</sup> Գերմանիայի ՔԴՕ-ի 794.4a հոդվածը սահմանում է, որ վճիռների պարտադիր կատարումը կարող է իրականացվել արբիտրաժային վճիռների կատարման մասին որոշումների հիման վրա, եթե նման որոշումները վերջնական և պարտադիր են կամ ժամանակավորապես կատարման ենթակա է ճանաչվել:

որոշված է որպես «արբիտրաժի վայր», վճռահատությանը կարող է ավարտվել տարբեր վայրերում, կապի ժամանակակից միջոցներով կամ նամակագրության միջոցով՝ իրականացված քննարկումների միջոցով: Իլրումն, պարտադիր չէ, որպեսզի վճիռը ստորագրվի բոլոր արբիտրների կողմից՝ ֆիզիկապես նույն վայրում հավաքվելու պայմանով: Այսինքն, թույլատրելի է, որ վճիռը կարող է ստորագրության ուղարկվել արբիտրների՝ տվյալ պահին գտնվելու տարբեր վայրեր<sup>101</sup>:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է եզրակացնել, որ ճանաչման օբյեկտ, այն է վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալ կարող է հանդիսանալ արբիտրաժային տրիբունալի՝ գործն ըստ էության լուծող վերջնական ակտը՝ վճիռը, որը կհամապատասխանի սույն պարագրաֆում քննարկված արբիտրաժային վճռի իրավական ուժի հատկանիշներին և արբիտրաժային վճռին ներկայացվող պահանջներին: Ինչ վերաբերում է հայցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացվող ակտին, ապա այն պետք է հանդիսանա որոշում, ունենա որոշման ձև, իսկ դրա ճանաչումը, կատարումն ու վիճարկումը պետք է ունենան հստակ օրենսդրական կարգավորում:

## **§2. Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի սուբյեկտային նախադրյալները**

Արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի սուբյեկտներին որոշելու համար, անհրաժեշտ է վեր հանել այն անձանց շրջանակը, ում սուբյեկտիվ իրավունքներն ու օրինական շահերը խախտվել են արբիտրաժային վճռով, ինչպես նաև այն անձանց՝ որոնց համար արբիտրաժային վճռով կարող են ծագել, փոփոխվել կամ դադարել իրավունքներ և պարտականություններ: Դասական առումով, այդ անձանց շրջանակը պետք է հստակորեն ամրագրվեր Արբիտրաժային օրենքում, սակայն, հայրենական արբիտրաժային օրենքի ներկայիս

<sup>101</sup> Տե՛ս UNCITRAL-ի քարտուղարության բացառական ծանոթագրությունից: Իրատ. ՄԱԿ, Ավստրիա 2008, V.07-87000, էջ 35: [http://www.uncitral.org/pdf/russian/texts/arbitration/ml-arb/07-87000\\_Ebook.pdf](http://www.uncitral.org/pdf/russian/texts/arbitration/ml-arb/07-87000_Ebook.pdf)



խմբագրությանը նույնից ելնելով՝ անհրաժեշտության է առաջանում տրամաբանական եզրահանգումներով տրամազօել այդ անձանց շրջանակը: Ակներև է, որ արբիտրաժային վճիռն իրավունքներ է սահմանում, փոփոխում կամ դադարեցնում նախևառաջ արբիտրաժային համաձայնության և ուրեմն արբիտրաժի կողմերի, այն է՝ հայցվորի և պատասխանողի համար: Այսինքն, արբիտրաժային վճիռն անմիջականորեն ազդում կամ կարող է ազդել արբիտրաժի կողմերի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի վրա՝ այդ թվում դրանց հնարավոր խախտման առումով: Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածը, սահմանելով դատարանի կողմից արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման միակ դեպքը, հղում է կատարում «դիմում ներկայացնող կողմին <sup>102</sup>»՝ նշելով այդ սուբյեկտի կողմից ապացուցման ենթակա այն փաստական հանգամանքները, որոնցից թեկուզ մեկի առկայության պարագայում արբիտրաժային վճիռը ենթակա կլինի չեղյալ ճանաչման: Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը, որպես արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման նախապայման նախատեսում է արբիտրաժային տրիբունալի վճռի ստացումը և այդ պահից սկսած սահմանում վճռի վիճարկման եռամսյա ժամկետ, իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն արբիտրաժային վճռի կայացումից հետո արբիտրաժային վարույթի յուրաքանչյուր կողմին ուղարկվում է դրաստորագրված պատճենը: Այսպիսով, կարելի է տրամաբանորեն եզրակացնել, որ դատարանին արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման մասին «դիմում ներկայացնող կողմ» սահմանելով՝ Արբիտրաժային օրենքը նկատի է ունեցել արբիտրաժային վարույթի կողմին: Այսպիսի տրամաբանական եզրահանգման անհրաժեշտությանը թերևս կնվազեր, եթե Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը ճշգրտորեն արտացոլեր Մոդելային օրենքի օրինակ անգլերեն բնագրի 34-րդ հոդվածի 3-րդ մասում տրված ձևակերպումը, համաձայն որի. «Չեղյալ ճանաչման մասին դիմում չի կարող ներկայացվել արբիտրաժային տրիբունալի վճիռը ստանալուց երեք ամիսը լրանալուց հետո՝ սկսած այն օրից, երբ դիմող կողմը <sup>103</sup> ստացել է

<sup>102</sup> Տես «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը:

<sup>103</sup> կամ այդպիսի դիմումով հանդես եկող կողմը [մեջբերումը՝ հեղինակի]:

արբիտրաժային վճիռը...»: Արբիտրաժային վճռի ճանաչման կամ կատարման արդյունքում արբիտրաժի կողմերի սուբյեկտիվ իրավունքների հնարավոր խախտումներից պաշտպանելու իրավական կառուցակարգ է սահմանված նաև Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածով: Ընդ որում, Արբիտրաժային օրենքի թե՛ 34 և թե՛ 36-րդ հոդվածները դատարանի համար ex officio սահմանում են վեճի առարկան արբիտրաժի կողմից համաձայն ՅՅ օրենսդրության լուծման ենթակա չլինելու կամ արբիտրաժային վճիռը ՅՅ հանրային կարգին չհակասելու փաստերը պարզելու պարտականություն<sup>104</sup>:

Այսպիսով, եթե արբիտրաժի կողմերի՝ վիճարկման վարույթի սուբյեկտ հանդիսանալն ակներև է, ապա արբիտրաժի կողմ չհանդիսացած կամ չդարձած ցանկացած այլ (շահագրգիռ) անձանց կողմից արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա են տարբեր մոտեցումներ<sup>105</sup>: Ընդ որում, սույն խնդիրը քննարկելիս՝ կախված նյութական իրավահարաբերությունների մասնակից լինել կամ չլինելուց, կարելի է առանձնացնել սուբյեկտների երկու կատեգորիա՝ մասնավոր և հանրային: Առաջին դեպքում վիճարկման իրավունքից օգտվում են քաղաքացիական շրջանառության այն սուբյեկտները, որոնք դիմում են դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն հանդիսանում են վիճելի գործով նյութաիրավական հարաբերության սուբյեկտ: Երկրորդ կատեգորիայի սուբյեկտների

---

<sup>104</sup> Այս կապակցությամբ հարկավոր է մատնանշել մի էական տարբերություն, որն առկա է Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ/ ենթակետի հայերեն և Մոդելային օրենքի նույն կետի բնօրինակ անգլերեն տեքստերի միջև: Այսպես, հայերեն տարբերակում, դատարանը կարող է մերժել վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, եթե պարզի, որ ...վճիռը հակասում է ՅՅ հանրային կարգին: Մինչդեռ նույն նորմի անգլերեն բնօրինակի համաձայն, դատարանը տվյալ դեպքում պարտավոր է պարզել թե արդյո՞ք **վճռի ճանաչումը կամ կատարումը կհակասի** տվյալ պետության հանրային կարգին: Այս խնդրին ավելի մանրամասնորեն կանդրադառնանք աշխատության այլ գլուխներում:

<sup>105</sup> Տե՛ս **ՅՅ Ռվիաննիսյան Վ.Վ.** նշվ. աշխ. էջեր 279 - 283; Статья: Пределы действия судебных и третейских решений по кругу лиц (**Асосков А.В., Курзински-Сингер Е.**) ("Вестник ВАС РФ", 2012, N 2); **Ярков В.В.** Оспаривание договоров, охваченных арбитражным соглашением//Международный коммерческий арбитраж. – 2005. – №3.– С. 6 – 26; **Stavros Brekoulakis:** Third Parties in International Commercial Arbitration, [Oxford International Arbitration Series](#), Oxford University Press 2010, 336 pages; **Мусин В.А.** Третьи лица в третейском суде//Арбитражные споры. 2008, №3:

կազմում հանդես են գալիս պետական մարմինները<sup>106</sup>, այդ թվում դատախազը «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում<sup>107</sup>: Տվյալ կատեգորիայի սուբյեկտները, դատարանում հանդես գալով պետության գույքային շահերի պաշտպանության հայցով՝ տնօրինում են հայցվորի միայն դատավարական իրավունքները և իրավաբանական գրականության մեջ առանձնացվում են որպես «դատավարական հայցվորներ»<sup>108</sup>:

**Մասնավոր սուբյեկտները.** Հաշվի առնելով որ «Երրորդ անձինք» եզրույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ քաղաքացիական գործի մասնակցի հստակ դատավարական կարգավիճակ է նշանակում, մենք, որոշ քաղաքացիական գործի մասնակցի հատկություններով, կխուսափենք սույն գլխում այդ եզրույթի գործածումից, թեև «Երրորդ անձինք» կարող են հանդիսանալ թե՛ արբիտրաժի և թե՛ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթում առաջացող քաղաքացիադատավարական հարաբերությունների սուբյեկտ՝ քանզի դատավարագիտությունում «Երրորդ անձինք» բնորոշվում են որպես դատական<sup>109</sup> քննության առարկա հանդիսացող վիճելի իրավահարաբերության հետ կապված նյութական իրավահարաբերությունների ենթադրյալ սուբյեկտներ, որոնք կողմերի իրավունքների ու օրինական շահերի հետ չհամընկնող իրենց սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով մտնում են արդեն իսկ սկսված վարույթի մեջ, քանի որ կայացվող վճիռը շոշափում է կամ հետագայում կարող է շոշափել նրանց իրավունքներն ու օրինական շահերը<sup>110</sup>: Արբիտրաժային օրենքն ուղղակիորեն չի նախատեսում այլ կամ երրորդ անձանց արբիտրաժային վարույթի<sup>111</sup> մասնակից

<sup>106</sup> Տե՛ս ՀՀ ՔԴՕ, 37 հոդված:

<sup>107</sup> Տե՛ս Դատախազության մասին ՀՀ օրենքը, 27 հոդված:

<sup>108</sup> Տե՛ս **Ярков В.В.** Иск прокурора и арбитражная оговорка в договоре//Международный коммерческий арбитраж. – 2006. – №3; **Щеглов В. Н.** Субъекты судебного гражданского процесса. Томск, 1979, стр. 103-104; **Шакарян М. С.** Участие в советском гражданском процессе органов государственного управления. М., 1978 стр 13-15; **Պետրոսյան Ռ. Գ.** նշվ. աշխ. էջ 171:

<sup>109</sup> Արբիտրաժային վարույթում արբիտրաժային [ճշտումը՝ հեղինակի]:

<sup>110</sup> Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.** նշվ. աշխ. էջ 154:

<sup>111</sup> Այս առումով հարկավոր է նշել, որ վճիռի վիճարկման վարույթը դուրս է արբիտրաժային վարույթի շրջանակներից, և այս հարաբերությունները կրում են քաղաքացիադատավարական հարաբերությունների բնույթ՝ աջակցող և վերահսկող դատարանի մասնակցությունով (տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.** նշվ. աշխ. էջ 134):

դարձնելու հնարավորությունը, ինչպես նաև երրորդ կամ այլ անձանց կողմից արբիտրաժային վճիռը վիճարկելու իրավունքը: Այս հարաբերությունը կարգավորված չէ նաև ՀՀ ՔԴՕ-ում: Մյուս կողմից, Հայաստանում մշտապես գործող առավել հայտնի արբիտրաժային երկու հաստատությունների կանոնակարգերը<sup>112</sup> ընդհանուր առմամբ կարգավորում են երրորդ անձանց մասնակցությունը արբիտրաժային վարույթին, ընդ որում, ի տարբերություն քաղաքացիական դատավարությունում երրորդ անձանց ներգրավման կանոնների, արբիտրաժային վարույթին դրանց ներգրավման համար անհրաժեշտ է արբիտրաժի կողմերի համաձայնությունը<sup>113</sup>: Այսպիսով, արբիտրաժային վարույթ երրորդ անձ ներգրավելու՝ արբիտրաժային վարույթի բոլոր մասնակիցների, ինչպես նաև ներգրավվող անհի համաձայնության առկայությունը նշանակում է, որ երրորդ անձն այդպիսով միանում է արբիտրաժային համաձայնությանը՝ դառնալով դրա կողմ: Այս ընթացակարգով արբիտրաժին միանալու դեպքում, երրորդ անձն ի սկզբանե ապրիորի ապահովված է իր սուբյեկտիվ իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու՝ ներառյալ արբիտրաժային վճիռը վիճարկելու իրավական հնարավորությամբ: Տարընթերցումը բացառելու համար կխուսափենք նաև «գործին մասնակից չդարձված անձինք» հասկացությունը գործածելուց՝ այն դեպքերում, երբ

<sup>112</sup>ՀՀ ԱԱԴ արբիտրաժային դատարանի Կանոնակարգի 24-րդ սահմանում է, որ «երրորդ անձի ներգրավումը արբիտրաժային վարույթին թույլատրվում է միայն վիճող կողմերի համաձայնությամբ: Երրորդ անձին վարույթ ներգրավելու համար, կողմերի համաձայնությունից բացի, պահանջվում է նաև ներգրավվող անձի համաձայնությունը: Երրորդ անձին ներգրավելու համաձայնությունը պետք է կայացվի գրավոր»:

ՀՀ բանկերի միության ֆինանսական արբիտրաժի Կանոնակարգի 26-րդ հոդվածի համաձայն երրորդ անձի ներգրավումը արբիտրաժային վարույթին թույլատրվում է վիճող կողմերի միջնորդությամբ կամ արբիտրաժային տրիբունալի որոշմամբ: Երրորդ անձին վարույթ ներգրավվելու համար կողմերի համաձայնությունից բացի, պահանջվում է նաև ներգրավվող անձի համաձայնությունը: Երրորդ անձին ներգրավելու համաձայնությունը պետք է կայացվի գրավոր:

<sup>113</sup> Այս կարգավորումը ևս ամրապնդում է արբիտրաժի՝ վեճերի լուծման փակ համակարգ լինելու իրողությունը: Հանուն ճշմարտության անհրաժեշտ է նշել, որ որոշ օտարերկրյա առաջադիմական արբիտրաժային կանոնակարգեր արբիտրաժային տրիբունալներին ընձեռում են իրենց հայեցողությամբ երրորդ անձանց ներգրավելու լայն իրավագործությամբ, նույնիսկ վարույթի կողմ(եր)ի անհամաձայնության պարագայում: Այդպիսի կանոններ են սահմանված LCIA Կանոնակարգի 22.1 (viii) հոդվածում, VIAC Կանոնների 14 հոդվածում և SCAI Կանոնների 4-րդ հոդվածում:

քննարկման առարկա կդարձնենք արբիտրաժային վճիռների չեղյալ ճանաչման դիմումով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմը: Քաղաքացիական դատավարության ոլորտում «գործին մասնակից չդարձված անձինք» մտցված են վերաքննիչ և վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների կազմի<sup>114</sup> մեջ և տվյալ դեպքում «գործ» եզրույթը վերաբերում է քաղաքացիական դատավարության կարգով հարուցվող ու լուծվող քաղաքացիական գործին<sup>115</sup> և ոչ երբեք արբիտրաժային վարույթին: Իհարկե, արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումի հիման վրա քաղաքացիական դատարանում հարուցված քաղաքացիական գործով կայացված դատական ակտը բողոքարկելու սուբյեկտների կազմում «գործին մասնակից չդարձված անձանց» հիշատակելն անհրաժեշտությու է: Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի սուբյեկտների կազմում այլ անձանց ներգրավելու հարցը քննարկելիս, անհրաժեշտ է նախառաջ անդրադարձնալ վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալ հանդիսացող արբիտրաժային վճռին՝ դրա գործողության սուբյեկտիվ սահմանների առումով: Ինչպես արդեն նշել ենք սույն աշխատության «վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալները» գլխում, արբիտրաժային դատարանի վճիռը հանդիսանում է անհատական բնույթի իրավական ակտ՝ դրանից բխող հետևանքերով: Մյուս կողմից, Արբիտրաժային օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը չի սահմանում այն անձանց կոնկրետ շրջանակը, որոնց համար արբիտրաժային վճիռը պարտադիր է, սակայն սահմանում է, որ արբիտրաժային տրիբունալի վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, պետք է ճանաչվի որպես պարտադիր և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի սույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան: Այսպիսով, պետության կողմից սահմանված՝ արբիտրաժին աջակցող և վերահսկող դատարանում ճանաչման գործընթաց անցնելով, արբիտրաժային վճիռը ձեռք կբերի

<sup>114</sup> Տե՛ս ՀՀ ՔԴՕ 205 և 229 հոդվածները:

<sup>115</sup> Տե՛ս ՀՀ ՔԴՕ 1 և 3 հոդվածները:

իրավական ուժի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են բացառիկությունը և նախադատելիությունը<sup>116</sup>: Ըստ որոշ տեսաբան-գիտնականների, այս երկու հատկանիշերով օժտված լինելու համար արբիտրաժային վճիռը որպես նախապայման պետք է կայացված լինի նույն կողմերի հանդեպ, վերաբերվի հայցի նույն առարկային և նույն հիմքին: Այսպիսի մոտեցման պարագայում արբիտրաժային վճիռ՝ այլ անձանց իրավունքների և պարտականությունների վրա ազդեցություն հարցը (և այդպիսով երրորդ կամ այլ անձանց կողմից արբիտրաժային վճիռ վիճարկման իմաստը) դառնում է ոչ արդիական, քանզի արբիտրաժային վճիռն ունի խիստ որոշված սուբյեկտիվ սահմաններ (տարածվում է միայն արբիտրաժային վարույթի կողմերի վրա) և այդ սահմաններից դուրս չի կարող բացասաբար անդրադառնալ արբիտրաժային վարույթին մասնակից չդարձված անձանց<sup>117</sup> իրավունքների և պարտականությունների վրա<sup>118</sup>: Սույն մոտեցման տրամաբանությունը նկատելի է նաև արբիտրաժային վճիռ կատարումը կանոնակարգող ՀՀ ԱԱԴ Արբիտրաժային դատարանի Կանոնակարգի 32-րդ<sup>119</sup> և ՀԲՄ Ֆինանսական Արբիտրաժի Կանոնակարգի 33-րդ<sup>120</sup> հոդվածներում, որոնց ընդհանրությունը կայանում է նրանում, որ արբիտրաժային տրիբունալի վճիռները վերաբերում են կողմերին, ենթակա են նրանց կողմից կամավոր կատարման և կարող են ի կատար ածվել Արբիտրաժային օրենքին և միջազգային

<sup>116</sup> Տե՛ս **Հովհաննիսյան Վ.Վ.** նշվ. աշխ. էջեր 236-240; **Միջազգային իրավունքի ասոցիացիայի** 72-րդ համագումարի կողմից ընդունված 1/2006 Բանաձևի Առաջարկությունների 2-րդ հավելված: Թեև արբիտրաժային վճիռ նախադատելիության հատկանիշով օժտված լինելու փաստը լայն տարածում է գտել իրավաբանական գրականությունում, սակայն Հայաստանում դրա հստակ օրենսդրական կարգավորման բացակայությունը և դատական պրակտիկայի պակասը շարունակում են հարցականի տակ պահել նախադատելիության հատկանիշի կիրառելիության հնարավորությունը և շրջանակը:

<sup>117</sup> Բնագրում գործածված է «երրորդ անձինք» եզրույթը:

<sup>118</sup> Տե՛ս **Асосков А.В., Курзински-Сингер Е.** էջեր 22-23, Пределы действия судебных и третейских решений по кругу лиц "Вестник ВАС РФ", 2012, N 2;

<sup>119</sup> Արբիտրաժային տրիբունալի վճիռները կողմերը կատարում են կամավոր՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է անհապաղ կատարման: Նշված ժամկետում կամավոր չկատարված վճիռները ի կատար են ածվում Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

<sup>120</sup> Արբիտրաժային տրիբունալի վճիռները պարտադիր են կողմերի համար և ենթակա չեն բողոքարկման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Արբիտրաժային տրիբունալի վճիռները կողմերը կատարում են կամավոր՝ վճռում նշված ժամկետում: Եթե վճռում նշված չէ դրա կատարման ժամկետը, ապա այն ենթակա է անհապաղ կատարման: Արբիտրաժային տրիբունալի վճռում նշված ժամկետում կամավոր չկատարված վճիռները ի կատար են ածվում հարկադիր կարգով՝ Օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան:

պայմանագրերին համապատասխան: Մյուս կողմից, եթե այնուամենայնիվ արբիտրաժային տրիբունալը, օրինակ գումարի բռնագանձման վճռով լուծի արբիտրաժային համաձայնության և արբիտրաժի կողմ չհանդիսացող անձանց իրավունքների և պարտականությունների մասին հարց, ապա սույն հանգամանքը կարող է դառնալ վճռի ճանաչումը և կատարումը դատարանի կողմից մերժելու հիմք, քանզի այդպիսի վճռով արբիտրաժային տրիբունալը (ա) դուրս կգա իր իրավասության սահմաններից՝ լուծելով արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցեր և (բ) այդպիսի վճիռը կհակասի ՀՀ հանրային կարգին՝ ՀՀ Սահմանադրության 18 և 19-րդ հոդվածների լույսի ներքո, ինչն էլ հիմք կհանդիսանա այդ վճռի հետագա չեղյալ ճանաչման համար: Նշված փաստարկները, սակայն, չեն բացառում, որ արբիտրաժային դատարանները կարող են տարբեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով կայացնել այնպիսի վճիռներ, որոնք կարող են շոշափել (խախտել) այլ անձանց սուբյեկտիվ իրավունքները և օրինական շահերը: Իհարկե, կատարում պահանջող արբիտրաժային վճիռներն այլ (շահագրգիռ) անձանց կողմից վիճարկելու իրավունքի հարցը քննարկելիս, անհրաժեշտ է մատնանշել նաև ՀՀ ԴԱՀԿ մասին օրենքի 45-րդ հոդվածը, որն ապահովում է «այլ անձանց» իրավունքների դատական պաշտպանությունը հարկադիր կատարման վարույթում: Այսպիսով, օրենսդիրը սահմանում է արբիտրաժային վարույթին մասնակից չդարձված այլ անձի խախտված իրավունքների վերականգնման իրավաբանորեն ապահովված հնարավորությունը նույնիսկ այն դեպքում, երբ անձը՝ մինչև հարկադիր կատարման վարույթը չի իմացել իր խախտված իրավունքների մասին: Սակայն, սվյալ դեպքում, անձն իր իրավունքների դատական պաշտպանությունը կիրականացնի ո՛չ թե արբիտրաժային վճռի վիճարկման վարույթում, այլ գույքն արգելանքից հանելու պահանջով կամ գույքի պատկանելության վերաբերյալ ծագած վեճի լուծման համար ընդհանուր հայցային վարույթի շրջանակներում՝ առանձին քաղաքացիական գործի վարույթի շրջանակներում:

ՀՀ սահմանադրության 6, 18, 19-րդ և ՀՀ ՔԴՕ 2-րդ հոդվածների տրամաբանությունն ինչ էլ նշելով, յուրաքանչյուր ոք <sup>121</sup>, ում իրավունքները կխախտվեն արբիտրաժային վճռով, անկախ արբիտրաժում իր ներգրավված լինելու կամ չլինելու հանգամանքից, իրավունք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու համար դիմելու դատարան՝ իր իրավունքների խախտման հիմք հանդիսացած արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու դիմումով: Այսպիսով, արբիտրաժային վարույթին չներգրավված (այլ) անձանց կողմից արբիտրաժային վճիռների վիճարկման հարցը լուծելիս, անհրաժեշտ է նաև կարևորել այն հարցը, թե ե՞րբ է խախտված կամ վիճարկվող իրավունքների ենթադրյալ կրողն իմացել այդպիսի խախտման մասին: Այս հարցի պատասխանը պետք է դիտարկել քաղաքացիական շրջանառության մասնակիցների՝ իրենց նյութական և դատավարական իրավունքների չչարաչափման և դրանցից բարեխղճորեն օգտվելու սկզբունքների համատեքստում: Հակառակ դեպքում՝ կխարխլվեն թե՛ արբիտրաժային վճռի գործողության խիստ սահմանափակ սուբյեկտիվ սահմանները, թե՛ վճռի վերջնական բնույթը և թե՛ արբիտրաժի իրականացման նպատակը՝ առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի ստանալ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում: Օրենսդրական անկատարության պատճառով՝ երբ արբիտրաժային վարույթի մասնակից չդարձված անձը իր խախտված իրավունքի մասին տեղեկանում է արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դատարանի կողմից որոշում կայացնելուց հետո, ապա հաշվի առնելով ՀՀ ՔԴՕ 144-րդ հոդվածի 1-ին մասը, 205 և 229-րդ հոդվածները, նա փաստորեն զրկվում է դատարանի այդ որոշումը բողոքարկելու իրավունքից: Իհարկե, ՀՀ սահմանադրության 6, 18 և ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 45-րդ հոդվածներն ամեն դեպքում խախտված իրավունքների և օրինական շահերի վերականգնման իրավական հնարավորությունն ստեղծում են, սակայն ո՛չ Արբիտրաժային օրենքը և ո՛չ էլ ՀՀ ՔԴՕ-ն չեն նախատեսում նշված դեպքում իրավունքների իրականացման հստակ կարգավորում: Օրենսդրական կարգավորումից զուրկ է

<sup>121</sup> Քաղաքացիական շրջանառության բոլոր մասնակիցները:



մնացել նաև այլ անձի կողմից դատարանին արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմում տալու իրավական հնարավորությունը՝ արդեն իսկ դատարանի կողմից նույն արբիտրաժային վճռի ճանաչման և կատարողական թերթ տրամադրելու որոշման կայացումից հետո: Սակարող է բերել երկակի չարաչափման՝ ինչպես այլ անձի իրավունքների խախտման, այնպես էլ այլ անձի կողմից արբիտրաժային վճռի կատարումը խոչընդոտելուն ուղղված դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու առումներով: Խոսելով օրենսդրական անկատարություններից, անհարկի չիլիսի նաև ընդգծել, որ կարգավորումից զերծ է մնացել արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի տեսակը, այսինքն, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ներկայիս խմբագրությունից պարզ է թե քաղաքացիական դատավարության ո՞ր տեսակով (վարույթով) է իրականացվում վիճարկումը՝ ընդհանուր թե՞ հատուկ հայցային: Այս հարցի շուրջ մեր առաջարկները կներկայացնենք ստորև՝ եզրակացություններում:

Ուսումնասիրելով արբիտրաժային վճիռները նյութական իրավահարաբերությունների և քաղաքացիական շրջանառության մասնակից չհանդիսացող սուբյեկտների կողմից վիճարկելու իրավական հնարավորության հարցը՝ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հետևյալին: ՀՀ ՔԴՕ-ն ընդամին չի մատնանշել այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասությամբ օժտված անձանց, ինչպես նաև չի կարգավորել այդ անձանց դատավարական դրությունը վարույթում և դրանց մասնակցության դատավարական ձևը: Այս առնչությամբ քննարկման է արժանի այն հարցը, թե արդյո՞ք քաղաքացիական դատավարությունում դատախազի իրավական վիճակն օժտված է այնպիսի դատավարական առանձնահատկություններով, որոնք թույլ են տալիս բնորոշել նրան կամ որպես ինքնուրույն հայցվոր կամ՝ ի շահ արբիտրաժի կողմերից մեկի հանդես գալու իրավունքով օժտված սուբյեկտ: ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդվածը իրավունք է վերապահում պետական մարմիններին դիմելու դատարան՝ պետության գույքային շահերի պաշտպանության հայցով: Ընդ որում, հայց հարուցած պետական մարմինն օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է

Նրա պարտականությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն, դատախազը պետության գույքային շահերի պաշտպանության հայց է հարուցում «Դատախազության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, որն էլ սահմանում է, որ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը<sup>122</sup>: Ընդ որում, դատախազի այս իրավասությունն ընդգրկում է այն բոլոր իրավունքներն ու պարտականություններն իրականացնելը, որոնք դատավարական օրենքով վերապահված են հայցվորին, դիմողին կամ պատասխանողին<sup>123</sup>: Այսպիսով, տնօրինչականության սկզբունքից ելնելով, կարելի է հանգել այն եզրակացության, որ դատախազը արբիտրաժային վճռի վիճարկման դիմում է ներկայացնում լուրջ դատավարական իմաստով: Նա հանդես է գալիս պետության շահերի պաշտպանությամբ, սակայն գործի ելքում նյութափրավական շահ չունի և վարույթում ներկայացնում է վիճելի նյութափրավական հարաբերությունների սուբյեկտ հանդիսացող պետական մարմնին (իսկական հայցվորին): Այս առումով, դատարանը, քննելով արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու պահանջով դատախազի ներկայացրած դիմումը, պետք է հաշվի առնի, որ դատախազն այդ վարույթում ունի հատուկ՝ «դատավարական» հայցվորի կարգավիճակ, որը չի հանդիսանում վիճելի նյութական իրավափոփոխության մասնակից, ինչն էլ հաշվի առնելով՝ գործը լուծելիս դատարանը պետք է ելնի նյութափրավական իմաստով հայցվորի իրավունքներից: ՀՀ ՔԴՕ 37-րդ հոդվածի ուժով քաղաքացիական հայց<sup>124</sup> հարուցելիս դատախազը կախված չէ նյութափրավական առումով հայցվորի կամքից և իրավասու է քաղաքացիական հայցը դատարան ներկայացնել անկախ այդ հայցվորի կամահայտնությունից: Այս առումով, քաղաքացիական

<sup>122</sup> Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 27-րդ հոդված:

<sup>123</sup> Տե՛ս «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 27-րդ հոդված, 5-րդ մաս:

<sup>124</sup> Պետք է նկատի ունենալ, որ «Արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածից ելնելով՝ վճռի չեղյալ ճանաչման գործերով՝ դատարան է ներկայացվում ոչ թե հայց, այլ դիմում, իսկ քաղաքացիական գործերով՝ դատախազի՝ դիմում ներկայացնելու իրավունքը օրենսդրորեն կանոնակարգված չէ: Այս խնդրին նույնպես անհրաժեշտ է անդրադարձնալ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը հետագա օրենսդրական կարգավորման ենթարկելիս:

դատավարությանը հանդես է գալիս որպես [ինքնուրույն] կողմ, սակայն վիճարկման վարության դատախազից բացի չպետք է անտեսվի այն սուբյեկտը՝ իշահորի հարուցվում է քաղաքացիական գործը և որպես կողմեր հաշվի պետք է առնվեն նյութական իրավահարաբերությանների ենթադրյալ մասնակիցները: Դատավարական գիտական գրականության մեջ արտահայտվում է այն տեսակետը, համաձայն որի՝ դատախազը դատավարությանը գործում է իր անուսից, բայց իշահայն մարմինների և անձանց, ում սուբյեկտիվ իրավունքները խախտվել են, և որ դատախազն իր հայեցողությամբ կարող է տնօրինել հայցվորի միայն դատավարական իրավունքները<sup>125</sup>: Վերոհիշյալը հաշվի առնելով, կարելի է առաջարկել, որ դատախազի կողմից արբիտրաժային վճիռների վիճարկման դիմում ներկայացնելիս, որպես նյութաիրավական հայցվոր նշվի և գործին ներգրավվի այն սուբյեկտը, որը հանդիսանում է վիճելի նյութական իրավահարաբերության կողմ: Այս տեսանկյունից խնդրին նայելիս, կարելի է եզրակացնել, որ կողմերի արբիտրաժային համաձայնությունը տարածվում է նաև դատախազի վրա: Յետևաբար, եթե դատախազը արբիտրաժային վճիռ մասին տեղեկացել է Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եռամսյա ժամկետից հետո, ապա նրա կողմից այդ ժամկետից հետո ներկայացված դիմումի առնչությամբ դատարանը պետք է վերջնական վերադարձի որոշում կայացնի՝ իհարկե ՅՅ ՔԴՕ 92-րդ հոդվածում համապատասխան լրացում կատարելու դեպքում, քանզի ներկայումս այս հարցը ևս օրենսդրորեն կարգավորված չէ: Յարցականի տակ է՝ թե ինչպե՞ս պետք է վարվի դատարանը նման դեպքերում՝ ժամկետի բացթողումը հարգելի համարելու միջնորդության առկայության պարագայում: Կարծում ենք, որ այս հարցի լուծումը պետք է թողնել դատարանին՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից, իսկ ձևավորված դատական պրակտիկայի արդյունքներով, անհրաժեշտության դեպքում՝ հստակ օրենսդրական կարգավորման ենթարկել այն: Դատախազի վրա արբիտրաժային համաձայնության գործողությունը տարածելը և Արբիտրաժային

<sup>125</sup> Տե՛ս **Պետրոսյան Ռ. Գ.** նշվ. աշխ. էջ 168; Комментарий к Арбитражному процессуальному кодексу Российской Федерации /под ред. **М.С. Шакаряна.** М, Проспект, 2003, էջ 128:

օրենքով վճռի վիճարկման՝ կողմերի համար սահմանված ժամկետներով նրան սահմանափակելը, բխում է արբիտրաժի՝ վեճերի արագ և վերջնական լուծման նպատակներից, ինչպես նաև դատավարության կայունության և արդարադատության տնտեսման ու կանխատեսելիության սկզբունքներից: Կարծում ենք, որ վերոգրյալը հաշվի առնելով, դատախազը չպետք է իրավասու լինի նաև վիճարկելու Արբիտրաժային օրենքի 30-րդ հոդվածի ուժով արբիտրաժի կողմերի համաձայնեցված պայմաններով հաշտության համաձայնության մասին արբիտրաժային տրիբունալի կայացրած վճիռը: Հաշվի առնելով տվյալ դեպքում դատախազության գործառույթը, այն է՝ պետական շահերի պաշտպանությունը, անհրաժեշտ է նշել, որ [արբիտրաժի կողմ հանդիսացած] պետական մարմնի կողմից արբիտրաժային վճիռը վիճարկելու ժամկետի բաց թողնման, կամ հաշտության համաձայնության կնքման բոլոր այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով առկա կլինեն հանցագործության հատկանիշներ (պաշտոնեական անփութություն, խարդախություն, պաշտոնական դիրքի չարաչափան, իշխանազանցություն, վատմամբ և այլն), ապա իր այդ գործառույթը դատախազը կարող է իրականացնել քրեական հետապնդում հարուցելով այն անձի կամ անձանց դեմ, որոնց հանցավոր գործունեության (անգործության) հետևանքով պետական շահը տուժել է: Հանցագործության և պետությանը պատճառված վնասի պատճառահետևանքային կապը օրինական ուժի մեջ մտած դատավճռով ապացուցվելու դեպքում դատախազը կարող է ռեգրեսիվ հայցով պահանջել պատճառված վնասների հատուցում կամ անդրադառնալ այդ հարցին քրեական դատավարության շրջանակներում: Չի կարելի իհարկե բացառել, որ հանցավոր շարժառիթներից [օրինակ պետական գույքին անօրինական ճանապարհով տիրանալու համար] դրդված անձինք կարող են արբիտրաժ «բեմադրել» Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ պետության տարածքում, հետագայում Հայաստանում այդպիսի վճռի ճանաչման և կատարման համար Կոնվենցիայից օգտվելու համար: Նման դեպքերում, իհարկե, դատախազությունը կարող է քրեական հետապնդում հարուցել և կախված այն հանգամանքից, թե երբ է դատախազությանը հայտնի դարձել

հանցավոր արբիտրաժային վճռի կայացման մասին, դատախազը կարող է կամ ճանաչման և կատարման վարույթը կասեցնել ՀՀ ՔԴՕ 105-րդ հոդվածի համաձայն կամ իրականացնել օրենքով իրեն վերապահված այլ իրավունքներ՝ կախված վճռի կատարման կամ կատարված ավարտված լինելու հանգամանքից: Այսինքն, արբիտրաժային վճիռը վիճարկելու դատախազի իրավունքը Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի վիճարկման համար սահմանված ժամկետով սահմանափակելը չի հանգեցնի արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն:

Դատարանն իրավունք չունի վերանայել արբիտրաժային դատարանի վճիռն ըստ էության, այսինքն կատարողական թերթ տալու մասին որոշում կայացնելիս, այն չի ընդունում որևէ մեկի իրավունքների և պարտականությունների մասին դատական ակտ: Դատարանը միմիայն հետազոտում է կատարողական թերթ տալու կամ մերժելու հիմքերի առկայությունը կամ բացակայությունը, որոնց սպառիչ ցանկը բերված է Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածում: Արբիտրաժային վճիռների վիճարկման իրավունքը ժամկետով սահմանափակելը վերաբերում է նաև այլ շահագրգիռ անձանց: Հակառակ դեպքում, արբիտրաժում պարտված կողմը կստանա իր դատավարական իրավունքներից անբարեխիղճ օգտվելու և դրանք չարաչափելու լայն հնարավորություններ: Օրինակ, արբիտրաժում պարտված բաժնետիրական ընկերությունը կարող է իր բաժնետերերի միջոցով, իրավաբանական գրականության մեջ հայտնի՝ այսպես կոչված «անուղղակի հայցերով»<sup>126</sup> խոչընդոտել վճռի ճանաչմանն ու կատարմանը, քաղաքացիական դատավարությունում՝ իցույց դնելով իրենց «խախտված իրավունքները»: Այդպիսի չարաչափում կարող է արտահայտվել պարտված ընկերության բաժնետիրոջ կողմից արբիտրաժային վճիռը վիճարկելու դիմում տալով, որում բաժնետերը, մասնավորապես, կարող է հայտնել, որ ընկերության դեմ կայացրած վճիռը խախտում է իր այս կամ այն իրավունքը, որ ընկերությունն արբիտրաժային համաձայնությունը կնքել է

<sup>126</sup> Տե՛ս **Грось А.А., Дедов Д.И.** Проблемы реализации косвенных исков//Закон. 2007. N3 (СПС КонсультантПлюс); **Карабельников Б.Р.** Косвенные иски как способ узаконить нарушение российскими компаниями их собственных обязательств (СПС КонсультантПлюс//Законы России. 2007. N 7); **Ярков В.В.** Косвенные иски: проблемы теории и практики // Корпоративный юрист. 2007. N 11; **Елисеев Н.Г.** Процессуальный статус акционерного общества в производстве по косвенным искам // Вестник ВАС РФ. 2005.

ներքին կորարատիվ նորմատիվ ակտերի խախտմամբ և այդ իսկ պատճառով այն անվավեր է և այլն: Ահա թե ինչու՝ եթե արբիտրաժային վճռով խախտվել են արբիտրաժի կողմ չհանդիսացած անձի իրավունքները, ապա յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից և կայացված արբիտրաժային վճռի տեսակից <sup>127</sup> ելնելով միայն կարելի է ընտրել խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ձևը, ինչը կարող է դրսևորվել հանցագործության կատարելու մասին հաղորդում տալու, դատարան հայց ներկայացնելու <sup>128</sup> և այլ ձևերով, որոնք միշտ չէ, որ կարտահայտվեն արբիտրաժային վճիռը վիճարկելու վարույթ նախաձեռնելով:

### **§3. Արբիտրաժային վճռի վիճարկման վարույթի ձևական նախադրյալները**

Արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքի իրացման համար, բացի օբյեկտային և սուբյեկտային նախադրյալների առկայությունից, անհրաժեշտ է նաև օրենքով նախատեսված միջառք կանոնների պահպանում: Այդ կանոններն իրենցից ներկայացնում են արբիտրաժային վճռի՝ դատարան չեղյալ ճանաչման դիմում տալու միջոցով վիճարկման համար օրենքով նախատեսված կարգը, որով սահմանվում են նաև այդ դիմումի ձևի և բովանդակության վերաբերյալ պահանջները: Այդ պահանջների կամ կանոնների ամբողջությունն իրենցից ներկայացնում են արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքի իրականացման ձևական նախադրյալները: Ի տարբերություն օբյեկտային և սուբյեկտային նախադրյալների, բացակայության կամ խախտման՝ արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքի իրացման ժամանակ ձևական նախադրյալների բացակայության դեպքում, դատարանը ոչ թե կմերժի արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումը, այլ կվերադարձնի այն: Օբյեկտային և/կամ սուբյեկտային նախադրյալների

<sup>127</sup> Նկատի է ունեցվում վճիռների կատարողական, ճանաչողական կամ կոնստրուկտիվ տեսակները:

<sup>128</sup> Չշփոթել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումի հետ: Խոսքը գնում է խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության նպատակով առանձին հայց ներկայացնելու մասին:

բացակայ ու թյուր ունը նշանակում է արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքի բացակայ ու թյուր ուն, մինչդեռ ձևական նախադրյալների բացակայ ու թյուր ունը հանգեցնում է դատարանի կողմից դիմումի վերադարձին: Այս պարագայում, դիմողը, վերացնելով դիմումի վերադարձման համար հիմք հանդիսացած խոչընդոտ(ներ)ը, կրկին կարող է ձեռնամուխ լինել արբիտրաժային վճռի վիճարկման իր իրավունքի իրականացմանը:

Յետագոտելով բուն ձևական նախադրյալները դրանց օրենսդրորեն հստակ սահմանված լինելու առումով, չենք կարող չանդրադառնալ այն իրողությանը, որ դրա կարգավորումն անհստակ է և ոչ ամբողջական: Սա թերևս պայմանավորված է Մոդելային օրենքի հաշտապեցեցիայով, որպիսի պայմաններում թերացումներն ու օրենսդրական բացերը բացառված չեն: Նման իրավիճակներում խնդիրը հաճախ լուծվում է օրենսդրության հետագա կատարելագործմամբ, որի համար կարևորագույն շարժառիթ և հենք է հանդիսանում, ի թիվս այլոց, թերի կարգավորված խնդրի վերաբերյալ ձևավորված հարուստ դատական, իրավակիրառ պրակտիկան: Տավոք, Յայաստանում, արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրականացման դատական պրակտիկան դեռևս հեռու է հարուստ և բազմակողմանի լինելուց: Այսպիսով, պրակտիկայում, աջակցող և վերահսկող (իրավասու) դատարանը (ՀՀ Կենտրոն և Նորք Մարշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը) արբիտրաժային վճռի վիճարկման վարույթ հարուցելիս գործում և առաջնորդվում է ոչ թե նորմավորված և կանոնակարգված հստակ ընթացակարգով, այլ քաղաքացիական դատավարության ընդհանուր կանոններով, ինչը թե՛ վարույթի կողմերի և թե՛ դատարանի համար ստեղծում է անհստակության մթնոլորտ: Այսպես, ՀՀ ՔԴՕ-ում նախատեսված հատուկ հայցային և հատուկ վարույթների գլուխներում սահմանված են այդ գործերով դատարան ներկայացվող դիմումներին վերաբերող հատուկ պահանջները: Մինչդեռ արբիտրաժային վճռի վիճարկման վարույթն ընդհանրապես դուրս է մնացել ՀՀ ՔԴՕ կարգավորումից: Ճիշտ է, Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածը սահմանում է, որ արբիտրաժային տրիբունալի վճռի վիճարկումը

դատարանում կարող է իրականացվել միայն նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան այն չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու ճանապարհով: Նույն հոդվածում սահմանված է նաև, թե որ դատարանին պետք է ներկայացվի տվյալ դիմումը, սակայն օրենքում բացակայում են դիմումի ձևին ու բովանդակությանը ներկայացվող պահանջները: Նույն հոդվածի վերլուծության ընդհանուր հայցային վարույթի կանոնների համադրումից կարող ենք գալ այն եզրահանգման, որ դիմումը պետք է ներկայացվի ՀՀ Արբիտրաժային օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան (ընդդատության կանոնը), այն պետք է ներկայացվի գրավոր, ունենա որոշակի բովանդակություն, (որն ըստ դիմումատուի բավարար կլինի արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանի կողմից որոշում կայացնելու համար, այսինքն նշի այն փաստերը, որոնք ըստ ՀՀ Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի կարող են արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման հիմք հանդիսանալ) այն պետք է ստորագրված լինի այդպիսի լիազորություն ունեցող անձի կողմից, ֆիզիկական անձ դիմումատուն պետք է դիմումը դատարան ներկայացնելիս լինի գործունակ, ինչպես նաև պետք է վճարված լինի պետական տուրքը:

Վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալները գլխում մենք քննարկեցինք և վերլուծեցինք արբիտրաժի վայրի հետ կապված պետական իրավասու դատարանին արբիտրաժային վճռի ճանաչման ներկայացման հարցը 247<sup>6-7</sup> հոդվածների լույսի ներքո: Այս առնչությամբ հարկ է նշել, որ ընդհանուր կանոնից ելնելով, արբիտրաժային վճիռը՝ չեղյալ ճանաչման եղանակով, կարող է վիճարկվել տվյալ արբիտրաժի վայրի դատարանում: Այսինքն, օտարերկրյա արբիտրաժային վճիռները Հայաստանի Հանրապետությանը ունում կարող են վիճարկվել միայն դրանց ճանաչման կամ կատարման դեմ դատարանում առարկելով, և այս առումով ձևական նախադրյալների կազմն այլ է: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը ունում իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված վճռի վիճարկմանը, ապա այն տեղի է ունենում վերոհիշյալ ՀՀ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան դիմելով:



Գործունակության հարցին անդրադառնալով, կարելի է նշել, որ արբիտրաժային համաձայնությունն կնքելիս, կողմի՝ իր հանդեպ կիրառելի իրավունքի համաձայն, անգործունակությունը հանգեցնում է արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչմանը<sup>129</sup>: Սա նշանակում է, որ արբիտրաժային համաձայնությունն կնքած և արբիտրաժի կողմ հանդիսացած ֆիզիկական անձը պետք է որ գործունակ լինի նաև քաղաքացիական դատավարությունում «նյութափրավական հարաբերություններում գործունակությունը ենթադրում է նաև դատավարական իրավահարաբերություններում գործունակություն» սկզբունքից ելնելով: Գործունակության վերաբերյալ մեր դիտարկումներն այսքանով կսահմանափակենք, հաշվի առնելով արբիտրաժային վարույթի՝ մեծապես առևտրային բնույթի վեճեր լուծելու առաքելությունը: Ասել կուզի, որ առևտրային արբիտրաժի կողմերի գերակշիռ մասը ենթադրաբար առևտրային կազմակերպությունները պետք է լինեն<sup>130</sup>, ինչպես դակազարգացած արբիտրաժային պրակտիկա և մշակույթ ունեցող երկրներում: Այս առնչությամբ տեղին է հիշատակել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման դիմումով դիմող իրավաբանական անձի ներկայացուցչի պատշաճ ձևակերպված լիազորությունների առկայության մասին: Ընդ որում, եթե դա ընկերության ի պաշտոնե՝ կանոնադրության ուժով գործող պաշտոնատար անձն է, ապա նրա լիազորությունները ևս պետք է հաստատվեն դատարանում: Սնանկ ճանաչված ընկերության անունից չեղյալ ճանաչման դիմում կարող է ներկայացնել սնանկության կառավարիչը՝ օրենքի ուժով<sup>131</sup>:

<sup>129</sup> Տե՛ս ՀՀ առևտրային արբիտրաժի մասին օրենք, 34-րդ հոդված, 2 մաս 1-ին կետ, (ա) ենթակետ:

<sup>130</sup> Ճիշտ է, Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժային գործերի քննության քանակական առաջատար հանդիսացող ՀԲՄ ֆինանսական արբիտրաժում հիմնականում որպես պատասխանող հանդես են գալիս ֆիզիկական անձ հանդիսացող վարկառուներն ու գրավատուները, սակայն տողերիս հեղինակը լիահույս է, որ հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման, արբիտրաժային օրենսդրության կատարելագործման, դատական համակարգի կայացման հետ միասին արբիտրաժի կողմերի նժարը կթեքվի առևտրային կազմակերպությունների կողմը:

<sup>131</sup> Մեկ վերապահմամբ, որ եթե չեղյալ ճանաչման դիմումը դատարան ներկայացնելու դրությամբ ընկերությունն լուծարման մասին որոշում դեռևս չի ընդունվել դատարանի կողմից, ապա այդպիսի դիմումը կարող է ներկայացնել նաև սնանկ ընկերության գործադիր մարմինը, սակայն, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, ՀՀ սնանկության մասին օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի

Ինչ վերաբերում է դիմումի ձևին, ապա վերևում մենք ընդհանուր դատավարական կանոններից ելնելով հանգեցինք դրա գրավոր ձևին, սակայն, գտնում ենք, որ այդ մասին հստակ պետք է հիշատակել ՀՀ ՔԴՕ-ում: Այսպիսով, դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների առումով, կարծում ենք, որ ՀՀ ՔԴՕ-ում պետք է առանձին հոդվածով սահմանել հետևյալ պահանջները.

Արբիտրաժային դատարանի վճռի չեղյալ ճանաչման դիմումը ներկայացվում է գրավոր և ստորագրվում է վճիռը վիճարկող կողմի կամ նրան ներկայացնող ցի կողմից: [հաշվի առնելով կապի միջոցների զարգացման սրընթաց տեմպերը և էլեկտրոնային կառավարության և կառավարման համակարգերի և ծրագրերի լայն ներդրումը Հայաստանի Հանրապետությանում, գտնում ենք, որ ապագայում, դատարանի պաշտոնական կայքում կարելի է տեղադրել նշված դիմումի օրինակելի ձև և ՀՀ ՔԴՕ-ով սահմանել, որ դիմումը կարելի է հանձնել դատարան՝ նաև օրինակելի ձևը առցանց լրացնելով և ուղարկելով: Նույնը վերաբերում է նաև այդ դիմումին կից փաստաթղթերը առցանց դատարան առաքելուն]:

Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը պետք է պարունակի՝

դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,  
վճիռը կայացրած արբիտրաժային [հաստատության (եթե կիրառելի է) անվանումը] տրիբունալի կազմը, գտնվելու վայրը,  
արբիտրաժային վարույթի կողմերի անունները/անվանումները,  
գտնվելու կամ բնակության վայրի հասցեները,  
արբիտրաժային տրիբունալի վճռի կայացման ամսաթիվը, վայրը և համարը,  
արբիտրաժային տրիբունալի վիճարկվող վճիռը դրա չեղյալ ճանաչման դիմում ներկայացնող անձի կողմից ստանալու ամսաթիվը,  
դիմումատուի պահանջը արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին և վիճարկման հիմքերը,

---

Ուժով կարող է պահանջվել նաև կառավարչի համաձայնությունը: Օրենքով կարգավորված չէ համաձայնության տրամադրման ժամկետը և ձևը:

Դիմումի մեջ կարող են նշվել հեռախոսի, էլեկտրոնային փոստի հասցեն և այլ տվյալներ:

Արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումին կից ներկայացվում են՝

արբիտրաժային տրիբունալի՝ պատշաճ ձևով վավերացրած վճռի բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացրած պատճենը: Մշտապես գործող արբիտրաժային հաստատության տրիբունալի կողմից կայացրած վճռի պատճենը կարող է վավերացվել նման հաստատության նախագահի կողմից, կոնկրետ վեճը լուծելու համար ստեղծված արբիտրաժային դատարանի (ad hoc) կողմից կայացրած վճռի պատճենը պետք է վավերացվի նոտարական կարգով՝ վճռի կայացման վայրի նոտարի կողմից:

արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա՝ պատշաճ կարգով վավերացրած պատճենը: «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ձևերից մեկով կնքված արբիտրաժային համաձայնության դեպքում՝ դրա կնքված լինելու մասին ապացույցի բնօրինակը կամ պատշաճ կարգով վավերացված պատճենը: արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու մասին պահանջի հիմքում դրված փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթ<sup>132</sup>,

արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը արբիտրաժային վարույթի մյուս կողմին ուղարկելը հավաստող փաստաթուղթ,

դիմումը ստորագրում է դիմումատու և կամ նրա կողմից՝ դրա համար լիազորված ներկայացուցիչը:

Վերոհիշյալ հոդվածի պահանջների խախտմամբ ներկայացված դիմումը (ներառյալ, եթե այն ներկայացվել է Արբիտրաժային օրենքի 6-րդ հոդվածով չնախատեսված դատարան) ենթակա է վերադարձման: Նշենք նաև, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը արբիտրաժային վճռի վիճարկման համար պետական տուրք չի

<sup>132</sup> Պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարածամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդությունն տալու կողմի իրավունք տվյալ դեպքում կարելի է չնախատեսել:

սահմանել : Գործնականում այդ հարցը լուծվել է նույն օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասում արբիտրաժային տրիբունալների վճիռների հարկադիր կատարման կատարողական թերթ տալու մասին դիմումների համար սահմանված բազային տուրքի քառապատիկի չափով պետական տուրք մուծելով : Գտնում ենք, որ պետական տուրքին վերաբերող հարցը պետք է հստակորեն կարգավորված լինի օրենքով, իսկ նշված քառապատիկ չափը կարելի է պահպանել :

Այսպիսով, նշված պահանջներից յուրաքանչյուրի չպահպանումը կհանգեցնի դիմումը վերադարձնելու մասին դատավորի որոշման կայացմանը : Վերադարձի որոշումը դատավորն ընդունում է՝ ելնելով հայցադիմումի վերադարձման համար ՀՀ ՔԴՕ-ով նախատեսված ոչ բուլոր կանոններից : Դիմումը ստանալիս և այն վարույթ ընդունելու կամ այն վերադարձնելու մասին հարցը որոշելիս, պետք է հաշվի առնել, որ դատարանում գործերը քննվում են ՀՀ ՔԴՕ-ով սահմանված ընդհանուր կանոններով՝ հաշվի առնելով առանձին կատեգորիայի գործերի քննության առանձնահատկությունները<sup>133</sup> : Հատկանշական է, որ արբիտրաժային վճիռը դրա չեղյալ ճանաչելու միջոցով վիճարկող կողմը, դիմումի հետ դատարանին ներկայացնելով դրա չեղյալ ճանաչման հիմքերը և ապացույցները, միևնույն ժամանակ կարող է դատարանին միջնորդել (ՀՀ Արբիտրաժային օրենքի եզրույթաբանությամբ՝ «խնդրել», հոդված 34, մաս 4) դարձնելու այդ հարցի քննությանը, որպեսզի հնարավորություն ընձեռի արբիտրաժային տրիբունալին վերսկսելու արբիտրաժային վարույթը կամ ձեռնարկելու այլ միջոցներ, որոնք արբիտրաժային տրիբունալի կարծիքով կարող են վերացնել արբիտրաժային տրիբունալի վճիռի բեկանման<sup>134</sup> հիմքերը : Այս առումով վերլուծության է արժանի

<sup>133</sup> Ասվածը ևս մեկ անգամ գալիս է ամրապնդելու այն կարծիքը, որ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը պետք է ունենա առանձին և հստակ կանոնակարգում ՀՀ ՔԴՕ-ում, առանձին տեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները բաժնի, հատուկ հայցային վարույթներին վերաբերող ենթաբաժնում, առանձին գլխում :

<sup>134</sup> Կրկին գործ ունենք ոչ ճիշտ մասնագիտական թարգմանության հետ : Արբիտրաժային վճիռները չեն բեկանվում, դրանք կարող են չեղյալ ճանաչվել՝ որպես դրանց վիճարկման բացառիկ միջոց : Դատական իշխանության մաս կազմող դատարանը չի վերանայում արբիտրաժային վճիռն ըստ էության, այլ միայն քննում է դրա վարույթային կողմը, թե որքանով է արբիտրաժն իրականացվել ՀՀ Արբիտրաժային օրենքի իմպերատիվ և արբիտրաժային համաձայնության կողմերի

իրավասու դատարանի՝ արբիտրաժային տրիբունալի վճիռը որպես պարտադիր ճանաչելու և արբիտրաժային տրիբունալի վճռի հիման վրա կատարողական թերթ տրամադրելու մասին թիվ ԵԿԴ/2366/02/12 գործով իրավասու դատարանի կայացրած որոշումը: Սույն գործն ուշագրավ է տարբեր առումներով և աշխատությունում դեռ հղումներ կարվեն այս որոշմանը: Տվյալ դեպքում նշենք, որ Դիմողի ներկայացուցչի կողմից դատարանին է ներկայացվել միջնորդություն, որտեղ, վկայակոչելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34 հոդվածի 4-րդ կետի դրույթները՝ խնդրել է կասեցնել կամ հետաձգել թիվ 2366/02/11 քաղաքացիական գործի վարույթը՝ ՀՀ Բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի տրիբունալին հնարավորություն ընձեռելով վերսկսել գործի վարույթը, կամ ձեռնարկել այլ միջոցներ, որոնք արբիտրաժային տրիբունալի կարծիքով կարող են վերացնել արբիտրաժային տրիբունալի վճռի բեկանման հիմքերը: Այս միջնորդության առնչությամբ դատարանը եկել է հետևյալ եզրակացության. «Վերը նշված հոդվածի [նկատի է ունեցվում «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասը - հեղինակ] վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրը սահմանել է դատարանի հայեցողական լիազորությունը՝ որոշակի ժամանակով դադարեցնելու չեղյալ ճանաչելու պահանջի մասին դիմումի քննությունը, որպեսզի հնարավորություն ընձեռի արբիտրաժային տրիբունալին՝ կատարելու որոշակի գործողություններ:

Մինչդեռ տվյալ հոդվածի իրավանորմերի կիրառման համար միջնորդություն հարուցած անձը պետք է ներկայացնե րապացույցներ առ այն, որ արբիտրաժային տրիբունալի կողմից կատարվում են արբիտրաժային վարույթի վերսկսմանն ուղղված որոշակի գործողություններ, ինչպես նաև ձեռնարկվում են որոշակի միջոցներ, ինչը կարող էր հանդիսանալ միջնորդության բավարարման հիմնական շարժառիթուն պատճառը:

---

համաձայնեցված պայմաններին համապատասխան: Աներկբա է, որ «բեկանման» եզրույթը պետք է փոխարինել «չեղյալ ճանաչման» բառակապակցությամբ:

Մինչդեռ Բանկի միջնորդությունը կրել է կամայական բնույթ, քանի որ Բանկը՝ առանց արբիտրաժային տրիբունալի կողմից ձեռնարկվող վերը նշված քայլերից տեղյակ չի ներկայացրել, միջնորդել է ոչ թե դադարեցնել, այլև՝ հետաձգել կամ կասեցնել գործի վարույթը, արբիտրաժային տրիբունալի կողմից կատարվող որևէ գործողության մասին ապացույց դատարանին չի ներկայացրել:

Ավելին, Բանկի ներկայացուցիչը խնդրել է ոչ թե դադարեցնել, այլև հետաձգել կամ կասեցնել գործի վարույթը, այնինչ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105 հոդվածով սահմանված չէ գործի վարույթի կասեցման նման հիմք, իսկ գործի քննության հետաձգումը հարցի քննության դադարեցում չէ. ավելին՝ միջնորդությունը կատարելուց հետո, դատական նիստերն անընդհատ հետաձգվել են, և մինչև գործի քննության ավարտն անցել են ամիսներ, սակայն Բանկի կողմից դատարանին այդպես էլ չի ներկայացվել որևէ ապացույց, որով կարող էր հաստատվել, որ արբիտրաժային տրիբունալի կողմից կատարվել են գործի վարույթի վերսկսման ու վճռի բեկանման հիմքերի վերացմանն ուղղված գործողություններ, ինչը վկայում է այն մասին, որ միջնորդությունը թվարկված բոլոր հիմքերով կրել է առարկայազուրկ բնույթ:» Նշենք, որ տվյալ դեպքում դատարանը սխալ է գնահատել Արբիտրաժային օրենքի 34 հոդվածի 4-րդ կետի դրույթները, քանզի արբիտրաժային տրիբունալի լիազորություններն արդեն իսկ դադարել էին վճռի կայացմամբ, և առանց այդ էլ արբիտրաժային տրիբունալը պարզապես չէր կարող իրականացնել դատարանի կողմից նկարագրվող գործողությունները, այն է՝ «արբիտրաժային վարույթի վերսկսմանն ուղղված տրիբունալի կողմից կատարվում են որոշակի գործողություններ, ինչպես նաև ձեռնարկվում են որոշակի միջոցներ, ինչը կարող էր հանդիսանալ միջնորդության բավարարման հիմնական շարժառիթն ու պատճառը»: Միայն այն բանից հետո, երբ դատարանը՝ առաջնորդվելով Արբիտրաժային օրենքի 34 հոդվածի 4-րդ հոդվածով՝ «որոշակի ժամանակով կդադարեցնել» հարցի քննությունը (որպեսզի հնարավորություն ընձեռեր արբիտրաժային տրիբունալին վերսկսելու արբիտրաժային

վարույթը կամ ձեռնարկելու այլ միջոցներ), արբիտրաժային տրիբունալն իրավասու կլիներ ձեռնարկել որոշակի գործողություններ և ոչ երբեք հակառակը: Դատարանը՝ այնուհետև անդրադառնալով Բանկի միջնորդությանը, նկատել է, որ «Բանկի միջնորդությունը կրել է կամայական բնույթ, քանի որ Բանկը, առանց արբիտրաժային տրիբունալի կողմից ձեռնարկվող վերը նշված քայլերից տեղյակ լինելու, միջնորդել է ոչ թե դադարեցնել, այլև՝ հետաձգել կամ կասեցնել գործի վարույթը, արբիտրաժային տրիբունալի կողմից կատարվող որևէ գործողության մասին ապացույց դատարանին չի ներկայացրել»: Չաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանը գործողությունների իրականացման ժամանակագրությունը սխալ է պարզել, ըստորի՝ իր կողմից հարցի քննության հետաձգումը կարող էր արբիտրաժային տրիբունալի համար վարույթը վերսկսելու կամ այլ միջոցներ ձեռնարկելու հիմք հանդիսանալ, ապա Բանկի միջնորդությունը նրա կողմից գնահատվել է որպես «կամայական բնույթ ունեցող» և «առանց ապացույցի», ինչն արդարացված չէ: Այս հարցում, արբիտրաժային տրիբունալի կողմից նախաձեռնողականություն դրսևորելու իրավունք կամ պարտականություն օրենքով սահմանված չէ և դրա չդրսևորումն ու չդրսևավորման պայմաններում դիմողի կողմից դրսևորման ապացույց չներկայացնելը չի կարող գնահատվել որպես ձևական նախադրյալի խախտում:

## ԵՃՐԱԿԱՑՈՒ ԹՅՈՒՆ

Ընդհանրացնելով արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրներն ու այդ վարույթի առանձնահատկությունները պայմանավորող հատկանիշները՝ կարող ենք եզրակացնել, որ՝

- հաշվի առնելով առևտրատնտեսական հարաբերություններից բխող վեճերի լուծման իրավական կառուցակարգերի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, անհրաժեշտ է տարանջատել միջազգային հանրային և առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու, այդ թվում՝ այս վարույթի շրջանակներում ճանաչման և կատարման դեմ առարկելու կամ արբիտրաժի ակտերը (վճիռը) վիճարկելու իրավական ռեժիմները, որպիսի պայմաններում, առանձին իրավակարգավորման արդյունքում կհստակեցվեն թե՛ այդ ակտերը ճանաչող և կատարողական թերթ տրամադրող իրավասու սուբյեկտների շրջանակը, թե՛ վերջիններիս գործառույթները, ինչպես նաև նշված իրավահարաբերությունների բովանդակությունը կազմող սուբյեկտիվ պրոցեսուալ իրավունքներն ու պարտականությունները: Յետևաբար, անհրաժեշտ է փոփոխություն և լրացում կատարել ՀՀ ՔԴՕ «Օտարերկրյա Անձանց Մասնակցությամբ Գործերի Վարույթը» վերտառությունը կրող վեցերորդ բաժնում և 247<sup>6</sup> հոդվածի իրավակարգավորման շրջանակներից առանձնացնել արբիտրաժային ակտերի (վճիռների) ճանաչումը և հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրումը, այդ գործառույթը վերապահելով ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին:

- Արբիտրաժի կողմերի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատավարական միջոցների լիարժեք ապահովման նպատակով, ազգային իրավական մակարդակով անհրաժեշտ է հստակ իրավական կառուցակարգեր ամրագրել թե՛ արբիտրաժային վճիռների ճանաչում և հարկադիր կատարում պահանջելու, թե՛



արբիտրաժային վճիռների վիճարկման միջոցների իրացման առումով: Ընդ որում, վիճարկման իրավունքի իրացումը պետք է ենթադրի և՛ վճռի ճանաչման և հարկադիր կատարման դեմ առարկելու և՛ այն չեղյալ ճանաչելու պահանջով իրավասու դատարան դիմելու հնարավորություն: Սակայն, վիճարկման իրավունքի իրականացման դատավարական միջոցները լրիվ ծավալով կարող են կիրառվել միայն ՀՀ տարածքում կայացված արբիտրաժային վճիռների մասով, քանի որ ՀՀ ազգային դատարանները օտարերկրյա արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու իրավասությունը օժտված չեն: Հետևաբար, ՀՀ-ում օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման դեմ իրավունքների պաշտպանության հիմնական դատավարական միջոց պետք է դիտարկել առարկելու միջոցով վերոնշյալ ակտի իրավաչափությունը վիճարկելը:

- Հաշվի առնելով Մոդելային օրենքի 9-րդ հոդվածի անգլերեն բնագրի և հայրենական արբիտրաժային օրենքի 9-րդ հոդվածի սխալ թարգմանությունը, տվյալ հոդվածում փոփոխել «արբիտրաժ» եզրույթը «արբիտրաժային վարույթ» եզրույթով: Սրա արդյունքում կվերանահասն հակասությունը ՀՀ ՔԴՕ 97-րդ հոդվածի 1-ին մասի և Արբիտրաժային օրենքի 9-րդ հոդվածի միջև:

- Կոնվենցիայի անգլերեն բնօրինակում (կետ 3, հոդված II) և Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործված է «null and void» եզրույթը, ինչը հայրենական օրենքի 16-րդ հոդվածում թարգմանվել է որպես «պայմանագրի ուժը կորցրած», իսկ Կոնվենցիայի հայերեն տեքստում թարգմանվել է որպես «անվավեր»: Մինչդեռ ճիշտ թարգմանությունն է՝ «առոչինչ»: Անվավերությունն իր մեջ ներառում է ինչպես առոչինչ, այնպես էլ վիճահարույց գործարքները: Տվյալ դեպքում, Մոդելային օրենքի մշակողները՝ հենվելով Կոնվենցիայում առկա տրամաբանության վրա, նպատակ են ունեցել կիրառելու հենց առոչինչության գաղափարը: Պայմանագիրն իր ուժը կարող է կորցնել ժամկետի ավարտմամբ դադարելու, կողմերի փոխադարձ համաձայնությունը այն դադարեցնելու, պարտավորությունների կատարման և այլ դեպքերում: «Պայմանագրի ուժը կորցրած» արտահայտությամբ

արբիտրաժային դատարանի վրա դրվել է լրացուցիչ բեռ, քանզի պայմանագրի ուժը կորցրած լինելու փաստը հաստատելը ենթադրում է արբիտրաժային դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ պայմանագրի վիճահարույցության և գործողության դադարման հարց բարձրացնելու իրավասություն, այն պարագայում, երբ վեճի կողմերը նման հայտարարություններով հանդես չեն գալիս: Կարծում ենք, որ նշված դրույթի ճիշտ թարգմանությունը կօգնի խուսափել տվյալ հարցում արբիտրաժային դատարանի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների տարընթերցումից: Միևնույն ժամանակ, արբիտրաժային դատարանի համար արբիտրաժային վերապահումների անվավերության հարցը սեփական նախաձեռնությամբ պարզելու պարտականությունն սահմանելիս, պետք է նկատի ունենալ, որ այդ պարտականությունը պետք է տարածել արբիտրաժային վերապահման սոսկ առոչնչության հարցի լուծման վրա: Հակառակ պարագայում կարող է տեղի ունենալ վեճի կողմերի նկատմամբ հավասար մոտեցման և իրենց դատավարական իրավունքներից օգտվելու տնօրինչականության սկզբունքի խախտում: Առաջարկվում է Արբիտրաժային օրենքի 16-րդ հոդվածի փոփոխությամբ «անվավեր» եզրույթը փոխարինել «առոչնչ» եզրույթով: Վերոհիշյալը նկատի ունենալով՝ առաջարկվում է Արբիտրաժային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Արբիտրաժային դատարանն իրավասու է, իսկ արբիտրաժային համաձայնությունը վիճարկելու դեպքում՝ պարտավոր է առաջնահերթ քննել և որոշում կայացնել իր իրավասության, ներառյալ՝ արբիտրաժային համաձայնության առկայության կամ վավերականության վերաբերյալ: Այս նպատակով արբիտրաժային վերապահումը, որը հանդիսանում է պայմանագրի բաղկացուցիչ մաս, պետք է մեկնաբանվի որպես պայմանագրի մյուս մասերից անկախ համաձայնություն: Պայմանագրի առոչնչ լինելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի որոշումն ինքնին կամ օրենքի ուժով չի հանգեցնում արբիտրաժային վերապահման անվավերության»:

- Մոդելային օրենքը և Կոնվենցիան (հոդվ. V կետ 1, ենթակետ «ա») անգլերեն բնօրինակներում օգտագործում են «was under some

incapacity» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «եղել է որոշ չափով անիրավունակ» կամ «իրավունակություն արատ»: Բացի այդ, «գործունակություն» եզրույթը մեր իրավական համակարգում գործածելի է ֆիզիկական անձանց առնչությամբ, մինչդեռ իրավաբանական անձանց դեպքում գործածվում է «իրավունակություն» եզրույթը: Այս առումով, անհրաժեշտ է լրացնել Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածները, «գործունակ» բառից հետո ավելացնելով «կամ իրավունակ» բառերը:

- «Արբիտրաժ» եզրույթը նշանակում է թե՛ վեճը լուծող մարմին, թե՛ վարույթ կամ գործընթաց: Մինչդեռ, Արբիտրաժային օրենքը նեղացրել է արբիտրաժ հասկացությունը: Ավելին, Արբիտրաժային օրենքը, սահմանելով «արբիտրաժային տրիբունալ» հասկացությունը որպես միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ, շրջանցել է «արբիտրաժային դատարան» հասկացությունը և այն չի սահմանել, ինչն արդարացված համարել չի կարելի: Արբիտրաժային օրենքում «արբիտրաժային դատարան» եզրույթը գործածված է միայն 6-րդ գլխի վերնագրում, այն է՝ «Արբիտրաժային դատարանի վճռի կայացումը և վարույթի ավարտը»: Առաջարկվում է օրենքով հստակ սահմանել, որ մշտապես գործող արբիտրաժային դատարան – հաստատությունները վեճ չլուծող մարմիններ են, իսկ կոնկրետ վեճերը լուծվում են հատուկ դրանց լուծման համար ստեղծված արբիտրաժային դատարանների (ներկայիս մոտեցմամբ՝ «տրիբունալների») կողմից՝ միանձնյա կամ կոլեգիալ կազմով:

- ՀՀ տարածքում օտարերկրյա արբիտրաժային վճռի իրավական գործողությունը պետք է սկսվի դրան աջման պահից: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքի իրացումը այս առումով ենթադրում է իրավական գործողության մեջ գտնվող արբիտրաժային վճիռների առկայության պարագայում նույն անձանց միջև, միևնույն հիմքով, նույն առարկայի շուրջ քաղաքացիական դատավարության կարգով գործի քննության (վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման) արգելքը: Հետևաբար, ՀՀ ՔԴՕ 91-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 109-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը օտարերկրյա արբիտրաժային վճիռների պարագայում կիրառելի են՝ ՀՀ տարածքում դրանց ճանաչված

լինելու պարագայում: ՀՀ տարածքում կայացված արբիտրաժային վճիռների օբյեկտային և սուբյեկտային շրջանակ ընդգրկված հարցերը քաղաքացիական դատավարության կարգով կրկին անգամ քննության և լուծման ենթակա չեն, բացառությամբ՝ իրավասու դատարանի կողմից դրանց հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրումը մերժելու դեպքի: Ընդ որում, այս պարագայում, կողմը, իր սուբյեկտիվ նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության համար արբիտրաժային վճիռի վիճարկման հնարավորությունը կարող է իրացնել անկախ այն հանգամանքից, թե արբիտրաժային վճիռով պարտատերը կատարողական թերթ ստանալու պահանջով դիմել է դատարան թե՛ ոչ:

- Վիճարկման օբյեկտ պետք է հանդիսանան արբիտրաժային դատարանի բոլոր այն ակտերը, որոնք նյութական իրավունքներ և պարտականություններ են սահմանում արբիտրաժային գործին մասնակցող անձանց համար կամ որևէ ձևով ներգործում, սահմանափակում են վերջիններիս կողմից նյութական իրավունքների իրացման հնարավորությունը: Հետևաբար, վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալների հիմնական և գլխավոր հատկանիշ պետք է դիտարկել արբիտրաժի կողմերի կամ կողմ չհանդիսացող սուբյեկտի նյութական իրավունքների և պարտականությունների վրա արբիտրաժային դատարանների ակտի ազդեցությունը կամ անմիջական ներգործությունը: Վերոնշյալ նկատառումներից ելնելով՝ արբիտրաժային վճիռների վիճարկման իրավունքով պետք է օժտված լինեն նաև այն անձինք (սուբյեկտները), որոնց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վեճն ըստ էության լուծող արբիտրաժային ակտ կամ արբիտրաժային ակտն անմիջականորեն ներգործում է վերջիններիս նյութական իրավունքների և պարտականությունների վրա: Արբիտրաժային վճիռները՝ չեղյալ ճանաչելու միջոցով վիճարկման վարույթի օբյեկտ կարող են հանդիսանալ, մինչև իրավասու դատարանի կողմից՝ դրանց հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրման մասին որոշման կայացումը: Ուստի, արբիտրաժային վարույթի մասնակից չհանդիսացող անձինք իրենց սուբյեկտիվ

իրավունքները կարող են պաշտպանել դատարանի կողմից կայացված՝ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու միջոցով: Այս դեպքում օրենսդրորեն անհրաժեշտ է ամրագրել արբիտրաժային վարույթի մասնակից չդարձած անձանց կողմից իրենց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված արբիտրաժային վճիռների հիման վրա դատարանի կողմից կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությունը՝ դրա համար սահմանելով բողոքարկման հստակ կարգ և ժամկետներ, միաժամանակ վերոնշյալ դեպքը համարել վերաքննիչ դատարանի կողմից նման որոշումը վերացնելու պարտադիր հիմք:

- Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերն օրենսդրորեն ամրագրված իրավական հանգամանքներն են, որոնք հանգեցնում են արբիտրաժային դատարանի կողմից կայացրած ակտի անիրավաչափության և առոչինչ են դարձնում արբիտրաժային վճռի իրավական գործողության հատկանիշները: Յետևաբար, այդպիսի հիմքերի առկայության պարագայում, անհրաժեշտ է հստակ իրավաչափության պայմաններ սահմանել իրավասու դատարանի կողմից վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատական հայեցողության դրսևորման մասով: Մասնավորապես, արբիտրաժային վճիռը ոչ իրավաչափ և դրա իրավական գործողության հատկանիշներն առոչինչ դարձնող հանգամանքների առկայության պայմաններում պետք է ամրագրել այդպիսի ակտը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանի պարտականությունը: Ինչ վերաբերում է դատական հայեցողության դրսևորմանը, ապա այն պետք է սահմանափակել միայն այդպիսի հանգամանքները գնահատելու և արբիտրաժային դատարանի ակտի իրավաչափության պայմանները որոշելու հարցով:

- Արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերը անհրաժեշտ է դասակարգել այնպես, որպիսի պայմաններում հստակ կերևա դատարանի կողմից ի պաշտոնե (ex officio) այդպիսի հիմքերի առկայությունը պարզելու պարտականությունն այն իրավական

հանգամանքներից, որոնք ապացուցելու պարտականությունը կրում է արբիտրաժային վճիռը վիճարկող կողմը:

- Արբիտրաժային վճռի հարկադիր կատարում պահանջելը վճռով հաստատված նյութական իրավունքի իրավական պաշտպանության կառուցակարգ է: Ուստի, արբիտրաժային վճռի վիճարկման արդյունքում այն չեղյալ ճանաչելը կամ հարկադիր կատարումը մերժելը հանգեցնում է «պարտատիրոջ» նյութական իրավունքի անիրացվելիությանը: Յետևաբար, վիճարկման վարույթի շրջանակներում ներկայացնելով դատավարական բնույթի փաստարկներ և պահանջ, ամեն դեպքում իրավասու դատարանի կողմից արբիտրաժային վճռի հարկադիր կատարումը մերժելու կամ չեղյալ ճանաչելու իրավական հետևանքներն անուղղակիորեն դառնում են բացասական նյութաիրավական բնույթի: Յիմք ընդունելով այն հանգամանքը, որ քաղաքացիական դատավարությունում միջանկյալ դատական ակտերն առավելապես ուղղված են դատավարության ընթացքում ծագող մասնավոր հարցերի լուծմանը, կրում են արգելող, կանխարգելող կամ ապահովող բնույթ, ապա անտրամաբանական է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանի եզրահանգումները ձևակերպել միջանկյալ դատական ակտի ձևով: Առաջարկվում է դատական ակտերի եռաստիճան դասակարգման համատեքստում արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանին վերապահել գործը լուծող վերջնական դատական ակտ կայացնելու իրավասություն, քանզի այս պարագայում, դատարանը՝ բավարարելով կամ մերժելով քննության առարկա հանդիսացող փաստերն ու պահանջը, որոշում է վարույթի իրավաբանական ճակատագիրը՝ առանց արբիտրաժային վճռով կարգավորված նյութական իրավահարաբերություններին անդրադառնալու:

- Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը քաղաքացիական դատավարության տարբերակված ձև է, որն իր հատկանիշներով էականորեն առանձնանում է հայցային և հատուկ վարույթներից: Վարույթի այս տեսակում թեև առկա են հակադիր շահերով օժտված կողմեր, սակայն բացակայում է նյութական իրավունքի վերաբերյալ վեճը, որպիսի պայմաններում

արբիտրաժային վճիռը վիճարկող կողմն իրավասու դատարանին ներկայացնում է գուտ դատավարական բնույթի փաստարկներ և պահանջ, իսկ գործերի քննության քաղաքացիադատավարական բնույթը կանխորոշող կողմերի մրցակցության և տնօրինչականության սկզբունքները ստանում են բոլորովին այլ դրսևորում: Իրավասու դատարանին ներկայացված վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը չի հանգեցնում արբիտրաժի մյուս կողմին որոշակի գործողություն և կատարելուն, գործողությունը կատարելուց ձեռնպահ մնալուն, իրավունքի (իրավահարաբերության) առկայությունը կամ բացակայությունը ճանաչելուն ուղղված նյութաիրավական պահանջի: Ընդ որում, չեղյալ ճանաչելու վերաբերյալ պահանջը փաստացի ուղղված չէ նաև վճիռը կայացրած արբիտրաժային դատարանի դեմ, քանի որ արբիտրաժային դատարանը չի հանդիսանում վիճելի նյութական իրավահարաբերության և վիճարկման վարույթի ընթացքում ծագող հարաբերությունների սուբյեկտ այնքանով, որքանով վերջինս դադարում է գործի հետ որևէ առնչություն ունենալ, դրա շրջանակներում իրավունքներ և պարտականություններ դրսևորել կողմերի միջև վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորող կամ արբիտրաժային վարույթն ավարտող ակտի կայացման փաստով: Գտնում ենք, որ ՀՀ ՔԴՕ պետք է ներդրնել արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի տարբերակված այնպիսի ձև, որի շրջանակներում հանգամանալից իրավակարգավորման կենթարկվեն վճիռը չեղյալ ճանաչելու պահանջ ներկայացնելու քաղաքացիադատավարական կարգը, ներառյալ դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, կիստակեցվեն վերոնշյալ վարույթի սուբյեկտային և օբյեկտային սահմանները, իրավասու դատարանի կողմից դիմումի քննության դատավարական կարգը, քանզի այն էականորեն տարբերվելու է հայցային և հատուկ հայցային վարույթների կարգով քննվող գործերի քաղաքացիադատավարական ձևից, սահմանելով նաև վիճարկման վարույթի արդյունքում կայացվող դատական ակտի և դրա անմիջական իրավական հետևանքների առաջացման բնույթը:

• Արբիտրաժային վճռի վիճարկման հիմքում ողջ ծավալով չեն կարող դրվել արդար դատաքննության իրավունքի բովանդակությանը կազմող տարրերի խախտումներն այնքանով, որքանով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժային ձևի նկատմամբ լիարժեքորեն կիրառելի չեն դատական պաշտպանության ձևի օրինաչափությանը: Արդար դատաքննության իրավունքի օրգանական և գործառնությանին (\$ՆԼՆԿԳԻՆԱԼ) տարրերի բովանդակությանը բացահայտված է թե՛ ՅՅ սահմանադրության և սահմանադրական նորմերի վերաբերյալ ՅՅ սահմանադրական դատարանի մեկնաբանությանը, թե՛ ՄԻԵԿ կիրառման կապակցությամբ ՄԻԵԴ կողմից ձևավորված նախադեպային իրավունքով: Սակայն, դրանք արբիտրաժային վարույթի նկատմամբ ամբողջականորեն կիրառելի չեն, իսկ արբիտրաժային վճռի վիճարկման վարույթին վերաբերելի են այն իմաստով, որ արբիտրաժային վճռի վիճարկումը ևս պետք է դիտարկել դատական կարգով սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ձև, սակայն այն վերապահումներով, որոնք պայմանավորված են արբիտրաժային քննության և արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի իրավական (այդ թվում կոնվենցիոն) առանձնահատկությանը: Արբիտրաժային վճռի վիճարկման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, պետք է ենթադրի դատական կարգով իրավունքի պաշտպանության լիարժեք երաշխիքների առկայություն, այդ թվում, արդար դատաքննության իրավունքի այն տարրերի իրացման ապահովում, որոնք կիրառելի են տարբերակված քաղաքացիադատավարական այս ձևի նկատմամբ: Ուստի, օրենսդրորեն պետք է ապահովել նաև իրավունքի խախտմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, քանզի դատական ակտի բողոքարկումը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնական իրավական կառուցակարգը:



## ՀԱՎԵԼ ՎԱԾ

Գլ ու խ 1. Արբիտրաժային դատարանի վճիռների վիճարկման, ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու գործերով վարույթը

§ 1. Արբիտրաժային դատարանի վճիռի վիճարկման գործով վարույթը  
Յոդված 1.1. Արբիտրաժային դատարանի վճիռների վիճարկումը

Սույն գլխում սահմանված կանոնները կիրառելի են դատարանի կողմից արբիտրաժային դատարանների՝ Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տարածքում կայացված վճիռների չեղյալ ճանաչման դիմումները քննելիս:

Արբիտրաժային դատարանի վճիռները դատարանում կարող են վիճարկել արբիտրաժային վարույթի մասնակիցները՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումներ կայացնելու միջոցով:

Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը ներկայացվում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան, այն ստանալու օրվանից սկսած՝ եռամսյա ժամկետում, իսկ արբիտրաժային դատարանի կողմից «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքերում և կարգով լրացուցիչ վճիռ կայացնելու դեպքում՝ այն ստանալու օրվանից սկսած՝ եռամսյա ժամկետում, եթե ՀՀ միջազգային պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

ՀՀ միջազգային պայմանագրով նախատեսված դեպքերում, սույն գլխի համաձայն, օտարերկրյա արբիտրաժային վճիռը, որը կայացվել է ՀՀ օրենսդրության նորմերի կիրառմամբ, կարող է վիճարկվել ՀՀ դատարաններում:

Յոդված 1.2. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումին ներկայացվող պահանջները

Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը ներկայացվում է գրավոր ձևով և ստորագրվում է վճիռը վիճարկող անձի կամ նրան ներկայացուցչի կողմից:

Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը պետք է պարունակի՝

դատարանի անվանումը, որին ներկայացվում է դիմումը,  
վճիռը կայացրած արբիտրաժային դատարանի (եթե կիրառելի է) անվանումը կազմը, գտնվելու վայրը,

արբիտրաժային վարույթի մասնակիցների անունները, գտնվելու կամ բնակության վայրի հասցեները

արբիտրաժային դատարանի վճռի կայացման ամսաթիվը, վայրը և համարը,

արբիտրաժային դատարանի վիճարկվող վճիռը դրա չեղյալ ճանաչման դիմում ներկայացնող անձի կողմից ստանալու ամսաթիվը,

արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումատուի պահանջը և վիճարկման հիմքերը:

Դիմումի մեջ կարող են նշվել հեռախոսի, ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեները և այլ տվյալներ:

3. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումին կից ներկայացվում են՝

արբիտրաժային դատարանի վճռի բնօրինակը կամ դրա պատշաճ ձևով վավերացրած պատճենը: Մշտապես գործող արբիտրաժային դատարանի կողմից կայացրած վճռի պատճենը կարող է վավերացվել դրա նախագահի կողմից, իսկ կոնկրետ վեճը լուծելու համար կազմված արբիտրաժային դատարանի (ad hoc) կողմից կայացրած վճռի պատճենը պետք է վավերացվի նոտարական կարգով՝ վճռի կայացման վայրի նոտարի կողմից,

արբիտրաժային համաձայնության բնօրինակը կամ դրա պատշաճ կարգով վավերացված պատճենը, իսկ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ձևերից մեկով կնքված արբիտրաժային համաձայնության դեպքում՝ դրա կնքված լինելու մասին ապացույցի բնօրինակը կամ պատշաճ կարգով վավերացված պատճենը:

արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին պահանջի հիմքում դրված փաստաթղթերը,

օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված և ինելը հավաստող փաստաթուղթ,

արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը արբիտրաժային վարույթի մյուս կողմին ուղարկելը հավաստող փաստաթուղթ,

դիմումը ստորագրող անձին տրված և իազորագիր կամ դիմումը ստորագրելու և իազորությունը հավաստող այլ փաստաթուղթ:

4. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը, որը ներկայացվել է 1-ին և սույն հոդվածի պահանջների խախտմամբ, ենթակա է վերադարձման:

Յոդված 1.3. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումի քննության կարգը

1. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու դիմումը քննվում է դատավորի կողմից՝ միանձնյա, երկու ամիսը չգերազանցող ժամկետում՝ սկսած այն օրվանից, երբ դիմումը ներկայացվել է դատարան՝ ներառյալ որոշում կայացնելու ժամկետը՝ սույն օրենսգրքի կանոնների համաձայն:

2. Դատարանը կարող է արբիտրաժային վարույթի կողմերից յուրաքանչյուրի միջնորդության հիման վրա արբիտրաժային դատարանից պահանջել այն գործով նյութերը, որով կայացված վճիռը վիճարկվում է դատարանում՝ ապացույցների ապահովման վերաբերյալ սույն օրենսգրքով նախատեսված կանոնների համաձայն:

3. Դատարանը ծանուցում է արբիտրաժային վարույթի կողմերին դատական նիստի ժամի և վայրի մասին: Դատական նիստի ժամի և վայրի մասին պատշաճ ծանուցված անձանց չներկայանալը խոչընդոտ չէ գործի քննության համար:

4. Դատարանը գործի քննության ժամանակ պարզում է արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված հիմքերի

առկայ ու թյ ու նը կամ բացակայ ու թյ ու նը՝ դատարանին ներկայացրած պահանջների և առարկայ ու նների հիմքում դրված ապացույցների հետազոտման արդյունքում: «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով նախատեսված հիմքերի առկայ ու թյ ու նը կամ բացակայ ու թյ ու նը դատարանը պարզում է իր նախաձեռնությամբ:

Հոդված 1.4. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը

Արբիտրաժային դատարանի վճիռը դատարանի կողմից կարող է չեղյալ ճանաչվել բացառապես «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում սահմանված հիմքերով:

Հոդված 1.5. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու գործով դատարանի վճիռը

1. Արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը քննելու արդյունքում դատարանը կայացնում է որոշում՝ սույն օրենսգրքի 4-րդ բաժնում որոշման կայացման համար սահմանված կանոնների պահպանմամբ:

2. արբիտրաժային դատարանի վճիռը վիճարկելու գործով կայացրած դատարանի վճիռը պետք է պարունակի՝

1) վիճարկվող վճռի և դրա ընդունման վայրի մասին տեղեկություններ,

2) վիճարկվող վճիռը կայացրած արբիտրաժային դատարանի անվանման և կազմի վերաբերյալ տեղեկություններ,

3) արբիտրաժային վարույթի կողմերի անունները/անվանումները,

4) արբիտրաժային դատարանի վճիռը ամբողջությամբ կամ մասամբ չեղյալ ճանաչելու կամ դիմումատուի պահանջի ամբողջական մերժման վերաբերյալ նշում:

3. Արբիտրաժային դատարանի վճռի չեղյալ ճանաչումը չպետք է կրկին արբիտրաժ դիմելու ն խոչընդոտ հանդիսանա արբիտրաժային

վարույթի կողմերի համար, եթե արբիտրաժ դիմելու հնարավորությունը սպառված չէ:

4. Այն դեպքում, երբ արբիտրաժային դատարանի վճիռն ամբողջությամբ կամ մի մասով չեղյալ է ճանաչվում արբիտրաժային համաձայնության անվավերության հետևանքով, կամ եթե նման վճիռը կայացվել է արբիտրաժային համաձայնությամբ արբիտրաժային դատարանին չվերապահված վեճի վերաբերյալ կամ չի համապատասխանում դրա պայմաններին կամ արբիտրաժային համաձայնությամբ չնախատեսված հարցերով որոշումներ է պարունակում, արբիտրաժային վարույթի կողմերը կարող են դիմել դատարան՝ իրենց վեճը լուծելու համար՝ սույն օրենսգրքով նախատեսված ընդհանուր կանոնների համաձայն:

5. Արբիտրաժային դատարանի վճռի վիճարկման գործով դատարանի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով դրահրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Յոդված 1.6. Արբիտրաժային դատարանի լիազորության հարցի քննությանը

1. ՀՀ միջազգային պայմանագրերով և օրենքով նախատեսված դեպքերում արբիտրաժային վարույթի կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել դատարան՝ վիճարկելով արբիտրաժային դատարանի՝ իր լիազորության վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Կողմը կարող է վիճարկել արբիտրաժային դատարանի լիազորության վերաբերյալ որոշումը՝ սույն հոդվածի 1-ին կետում նշված որոշումը կամ այն առանձին ակտի ձևով կայացված չլինելու դեպքում այդպիսի որոշման ընդունման մասին տեղեկացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

3. Դատարանը քննում է արբիտրաժային դատարանի լիազորության հարցը սույն հոդվածում նախատեսված կանոնների համաձայն:

4. Կողմի դիմումի քննության արդյունքում դատարանը կայացնում է արբիտրաժային դատարանի որոշումը չեղյալ ճանաչելու կամ դիմումը մերժելու մասին որոշում, որն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթական չէ:

§ 2. Արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու գործերով վարույթը

Յոդված 2.1. Արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը

1. Արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դիմումը դատարանը քննում է սույն հոդվածով սահմանված կանոններով այն դեպքում, երբ արբիտրաժի վայր է հանդիսացել ՀՀ տարածքը:

2. Ձեռնարկատիրական, առևտրային և այլ տնտեսական գործունեություն իրականացնելու հետ կապված քաղաքացիական իրավահարաբերություններից առաջացած վեճի վերաբերյալ արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու հարցը դատարանը քննում է այն կողմի դիմումի հիման վրա, որի օգտին այն կայացվել է:

3. Արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու մասին դիմումը ներկայացվում է ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

4. Դատարանը կատարողական թերթ տալու մասին պահանջատիրոջ դիմումը քննում է այն ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում:

Յոդված 2.2. Արբիտրաժային վճիռը հարկադիր կատարելու համար կատարողական թերթ տալու մասին դիմումին ներկայացվող պահանջները

